Արտակ Ս. Սարգսյան

ՍԱՐԳՈՆ II-Ի Ք.Ա. 714 ԹՎԱԿԱՆԻ ԱՐՇԱՎԱՆՔԻ ԵՐԹՈՒՂԻՆ

Նոր լուծումներ մեկդարյա բանավեճին*

Բանալի բառեր – Ասորեստան, Ուրարտու, Մաննա, Նաիրի-Խուբուշկիա, Մուսասիր, Ուրմիա լիճ, Վանա լիճ, ասսուրա-ուրարտական հակամարտություն, Սարգոն II, 8-րդ արշավանք, սեպագիր աղբյուրներ, տեղանուններ, նույնականացում, տեղադրություն, երթուղի, պատմական աշխարհագրություն:

Մուտք

Ասորեստանի արքա Սարգոն II-ի (Ք.ա. 721-705 թթ.) կառավարման 8-րդ տարում Մաննա և Ուրարտու կատարած արշավանքի երթուղին պատմագիտության առավել վիճահարույց խնդիրներից է: Հարյուր տարուց ավելի ընթացող գիտական բանավեճը[1] 1970-ական թվականներից շարունակվում է նորովի՝ պայմանավորված հյուսիսարևմտյան Իրանում կատարված հնագիտական և տեղագրական նոր հետազոտություններով[2]:

*Հոդվածն ընդունվել է տպագրության 23.12.2020:

1 Բանավեճը սկսվել է 1912 թվականից, երբ Ֆ. Թյուրո-Դանժենը հրատարակեց «Լուվրի աղյուսակը» (ԼԱ), որը Աշշուր աստծուն ուղղված նամակի տեսքով ներկայացնում է արշավանքի մանրամասները (տե՛ս **Thureau-Dangin F.**, Une relation de la huitieme compagne de Sargon (714 av. J.-C.), Textes cunéiformes du Louvre, 3, Musée du Louvre, Paris, 1912, (այսուհետ՝ **Thureau-Dangin F.**, 1912): Տե՛ս նաև **Luckenbill D. D.**, Ancient records of Assyria and Babylonia, vol. II, The University of Chicago press, Chicago, Illinois, 1927, (այսուհետ՝ ARAB II), էջ 73-99: **Дьяконов И. М**, Ассиро-вавилонские источники по истории Урарту, (այսուհետ՝ АВИИУ), ВДИ, 1951, N 2, 49: **Mayer W.**, Sargons Feldzug gegen Urartu-714 v. Chr.: Eine militärhistorische Würdigung, MDOG, N 115, 1983, էջ 65-132: Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հատ. 1, Եր., Եր. համալսարանի հրատ.,1981, (այսուհետ՝ ՀԺՊՔ), էջ 24-34: Վարկածներն ամփոփ տե՛ս, օր., **Пиотровский Б. Б.,** Ванское царство (Урарту), М., изд. Восточной лит., 1959, (այսուհետ՝ **Пиотровский Б. Б.,** 1959), էջ 95: **Медведская И. Н.**, К уточнению маршрута Саргона в 714 г. до н.э., ВДИ, 1989, N 2, (այսուհետ՝ **Медведская И. Н.**, 1989), էջ 102-104: **Zimansky P.**, Urartian Geography and Sargon's Eighth Campaign, JNES, N 49, 1990, (այսուհետ՝ **Zimansky P.**, 1990), էջ 1-7: **Maniori F.**, Le Campagne Assire Contro L'Urartu del 715 E 714 A.C., SMEA, N 52, 2010, (այսուհետ՝ **Maniori F.**, 2010), էջ 197-199: **Muscarella O. W.**, Sargon II's 8th Campaign: An Introduction and Overview, in "The Eighth Campaign of Sargon II. Historical, Geographical, Literary and Ideological Aspects", compiled and translated by O. W. Muscarella, S. Elliyoun, The Hasanlu Translation Project, Tabriz, 2012, էջ 5-9 (այսուհետ՝ **Muscarella O. W.**, 2012):

2 Ամփոփ տե՛ս, օր., Encyclopaedia Iranica, (այսուհետ՝ EI), XIII, Fasc. 6, 2006, էջ 605-609 և նշվ. գրակ.: **Kroll S.**, The Southern Urmia Basin in the Early Iron Age, Iranica Antiqua, vol. XL, 2005, էջ 65-85: **Muscarella O. W.**, Hasanlu and Urartu. Urartian sites in the Lake Urmia area, Biainili-Urartu, The proceedings of the symposium held in Munich 12-14 October

Գիտնականները, այդ հետազոտությունների արդյունքները համադրելով գրավոր աղբյուրներին, Սարգոն II-ի երթուղու շուրջ ներկայացրել են նորանոր վարկածներ[3]:

1. Արշավանքի երթուղու նկարագրությունը

Արշավանքի մասին արքան թողել է մանրամասն նկարագրություններ[4], ըստ որոնց՝ Ասորեստանից նրա զորքը **Զամուայով** (Լուլումի)[5] մտել է **Մաննա**, անցել շրջակա երկրների տարածքով[6], ներխուժել **Ուրարտու**, անցել նրա 8 մարզերով[7], մտել **Նաիրի–Խուբուշկիա**[8], որտեղից հիմնական ուժերը վերադարձել են Ասորեստան, իսկ երկրորդ զորախումբը ներխուժել է **Մուսասիր**, կողոպտել Խալդի աստծու սրբավայրն ու վերադարձել

2007, Acta Iranica, 2012, էջ 265-279: **Genito B., Asandaryani E. H., Castelluccia M.**, Iron Age in Western Iranian Plateau: a Long Debated Question. Proceedings of the International Conference on The Iron Age in Western Iranand Neighbouring Regions 2-3 Nov. 2019, Kurdistan University, Sanandaj, Iran, vol. 2, Tehran and Sanandaj, 2019, էջ 113-136: Տեղագր. հետազոտ., տե՛ս, օր., **Levine L. D.**, Geographical Studies in the Neo-Assyrian Zagros, I, Iran, 11, 1973, էջ 1-27, (այսուհետ՝ **Levine L. D.**, 1973): **Levine L. D.**, Geographical Studies in the Neo-Assyrian Zagros, II, Iran, 12, 1974, էջ 99-124, (այսուհետ՝ **Levine L. D.**, 1974): **Zimansky P.**, Ecology and Empire: The Structure of the Urartian State, Chicago, 1985:

3 Տե՛ս, օր., **Muscarella O. W.**, Qalatgah: An Urartian Site in Northwestern Iran, Expedition 13, 3/4, 1971, էջ 48-49: Նույնի՝ The Location of Ulhu and Uiše in Sargon II's Eighth Campaign, 714BC, Journal of Field Archaeology, 13, N 4, 1986, էջ 465–475, (այսուհետ՝ **Muscarella O. W.,** 1986): **Muscarella O. W**., 2012: **Levine L. D.**, 1974, էջ 105-116: Նույնի՝ Sargon`s Eight Campaign, in: Mountains and Lowlands: Essays in the Archaeology of Greater Mesopotamia (eds. L.D. Levine, T.C. Young), Bibliotheca Mesopotamica, vol. 7, Malibu, 1977, էջ 135-151, (այսուհետ՝ **Levine L. D.**, 1977): **Reade J. E.,** Studies in Assyrian Geography, Revue d'Assyriologie, RA, 72 (2), 1978, էջ 178-179, նույնի՝ Kassites and Assyrians in Iran. Iran, N 16, 1978, էջ 137-143, (այսուհետ՝ **Reade J. E.**, 1978a): Նույնի՝ Campaiging around Musasir; Anatolian Iron Age, N 3, 1990, Ankara, 1994, էջ 185-188 (այսուհետ՝ **Reade J. E.**, 1994): Նույնի՝ Iran in the Neo-Assyrian Period, in: M. Liverani, Roma, 1995, էջ 31-44, (այսուհետ՝ **Reade J. E.,** 1995): **Mayer W.**, Sargons Feldzug gegen Urartu-714 v. Chr.: Eine militärhistorische Würdigung, "Aus Mitteilungen der Deutschen Orient-Gesellschaft", (MDOG), N 112, 1980, էջ 13-33 (այսուհետ՝ **Mayer W.**, 1980): **Pecorella P. E., Salvini M.**, Researches in the Region between the Zagros Mountains and Urmia Lake, Persica, N 10, 1982, էջ 1-35 (+ Pl. 1-11), (այսուհետ՝ **Pecorella P. E., Salvini M.**, 1982): **Медведская И. Н.**, 1989: **Medvedskaya I. N**, The Localization of Hubuškia, in: Parpola S., Whiting R.M. (eds.), Assyria, 1995, Proceedings of the 10th Anniversary Symposium of the Neo-Assyrian Text Corpus Project, Helsinki, September 7-11, 1995, Helsinki, 1997, էջ 197-206, (այսուհետ՝ **Medvedskaya I. N.**, 1997): **Zimansky P.**, 1990: **Liebig M.,** Zur Lage einiger im Bericht über den 8. Feldzug Sagons II. Von Assyrien gennanter Gebiete, 1991, Zeitschrift für Assyriologie, ZfA, 81, էջ 31-36 (այսուհետ՝ **Liebig M.**, 1991): **Maniori F.**, 2010: **Kroll S.**, Sargon II's 8th Campaign: A New View on Old Constructs, in "The Eighth Campaign of Sargon II. Historical, Geographical, Literary and Ideological Aspects ", compiled and translated by O. W. Muscarella, S. Elliyoun, The Hasanlu Translation Project, Tabriz, 2012, էջ 11-17, (այսուհետ՝ **Kroll S.**, 2012): **Գրեկյան Ե.**, Բիայնիլի-Ուրարտու. պետություն և հասարակություն (պատմահնագիտական հետազոտություն), ատենախոս՝ պ.գ.դ. գիտ. աստիճանի համար, Եր., 2016, (այսուհետ՝ **Գրեկյան Ե.**, 2016), էջ 79-80, 86-87, 92-94:

4 ԼԱ-ից բացի՝ արշավանքի մյուս հիշատակությունները տե՛ս, օր., ARAB II, էջ 8-10 (19-22), 27-28 (56), 30 (59), 40 (79), 46 (92), 61-62 (118), 101-102 (183), 108-110 (210, 213): АВИИУ, 51-55:

5 Զամուան հնագույն Լուլ(լ)ու/մի/բի երկրի մի հատվածն էր, որն Ասորեստանի արևելյան մարզերից էր Մաննայի սահմանին: Ք.ա. 9-րդ դ. նրա մի մասը հայտնի էր Ներքին Զամուա անվամբ՝ ընկած Ասորեստանի, Ուրարտուի, Մաննայի, Սունբիի, Խուբուշկիայի մերձավորությամբ մինչև Ներքին Զամուայի կամ Նաիրի երկրի ստորին ծով (վարկածները տե՛ս, օր., **Дьяконов И. М**, История Мидии, Москва-Ленинград, изд. АН СССР, 1956, (այսուհետ՝ **Дьяконов И. М.,** 1956), էջ 101-104, 155-156: **Levine L. D.**, 1973: **Medvedskaya I. N.**, Zamua, Inner Zamua and Mazamua, Altes Orient und Altes Testament, (AOAT), Band 272, Münster, 2000, էջ 429-445, (այսուհետ՝ **Medvedskaya I. N.**, 2000): **Zadok R.**, LULUBI, EI, 2005:

6 Մաննայի թագավորությունն Ուրմիա լճի հարավում էր (ամփոփ տե՛ս, օր., **Գրեկյան Ե.,** Մաննայի թագավորության վարչաքաղաքական միավորների և դրանց տեղադրության շուրջ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, ՄՄԱԵժ, Եր., ՀՀ ԳԱԱ արևելագիտ. ինստ., 2000, XIX, էջ 153-172, (այսուհետ՝ **Գրեկյան Ե.,** 2000): **Zadok R.**, MANNEA, EI, 2006: Ք.ա. 9-8-րդ դդ. Մաննան և նրան շրջապատող ենթակա իշխանություններն Ուրարտուի և Ասորեստանի պայքարի հիմնական թիրախներից էին:

7 Տես ARAB II, էջ 28, АВИИУ, 54: ԼԱ-ում նշվում է 7 մարզերի մասին, հավանաբար հաշվի չի առնվել Մաննայից խլված Ուիշդիշը, որը Սարգոն II-ը վերանվաճելով վերադարձրել է Մաննային (**Գրեկյան Ե.**, 2016, էջ 74, ծան. 422):

8 Նաիրիի թագավորությունը, որ հայտնի էր նաև Խուբուշկիա մայրաքաղաքի անունով, Վերին Զաբի ավազանում էր՝ Ասորեստանի, Ուրարտուի, Գիլզանուի, Մուսասիրի, Մաննայի, Կիրրուրիի, Խաբխիի մերձավորությամբ:

հայրենիք[9]: Արդյունքում Մուսասիրը կցվել է Ասորեստանին[10], իսկ մերձուրմյան **Ուիշդիշ** մարզը վերադարձվել Մաննային[11]:

Արշավանքի մաննայական երթուղին հիշատակվում է այսպես. **Կալխուից** դուրս գալով[12]՝ Սարգոն II-ի զորքը գետանցել է **Վերին Զաբը**, եռօրյա ռազմերթից հետո հատել նաև **Ստորին Զաբը**: Անցնելով **Զամուայում** գտնվող **Կուլլար լեռան** լեռնանցքով՝ Սարգոնը **Սումբիում** զորատես է անցկացրել և շարժվել **Զիկիրտուի** և **Անդիայի**[13] ուղղությամբ հետևյալ երթուղով՝ **Նիկիպպա** և **Ուպա** լեռների միջնատարածք[14]-նրանց միջով հոսող **Բույա** գետ-**Սիմիրրիա** լեռ-**Սինախուլզի, Բիրուաթթի, Տուրտանի, Սինաբիր, Ախշուրու** և **Սույա** լեռներ - նրանցից հոսող **Ռապպու** և **Արատտու** գետեր-Մաննայի սահմանային **Սուրիկաշ** մարզ[15] և **Սինիխինի** ամրոց-**Ալլաբրիայի Լաուրետե** շրջանի **Լատաշե** ամրոց[16]-Ասորեստանի **Պարսուաշ** մարզ[17]-Մաննայի սահմանային **Միսսի**[18] մարզ և **Սիրդակկա** (Զիրդիակկու) ամրոց[19]-Մաննայի **Պանզիշ** ամրոց (Սիրդակկայից հեռու էր 30 բերու)[20]-**Ուաշդիրիկու** լեռ-**Զիկիրտուի** մայրաքաղաք **Փարդա**[21]-**Իշտարաուրա** գետ-Զիկիրտուի **Աուկանե** շրջան[22] և 13 բնակավայրեր (**Իշտաիպպու**, **Սակտատուշ**, **Նենզու**, **Աուկանե**, **Կաբանի**, **Գուրրուսուպու**, **Ռակսի**, **Գիմդակրիկկու**, **Բարունակկու**, **Ուբաբարու**, **Սիտերու**, **Տաշտամի**, **Տե-**

---

9 Մուսասիրի թագավորությունը՝ համանուն սրբազան քաղաքով (ուրարտ. Արդինի), Մովանայի, Քելյաշինի լեռնանցքի և Թոփուզավայի միջև էր: Այստեղ էր Ուրարտուի գերագույն Խալդի աստծու սրբավայրը:

10 Մուսասիրը միացվել է Ասորեստանի արքունի սենեկապետի տիրույթներին՝ տեղակայված Մեծ Զաբի միջին հոսանքի շրջանում (տե՛ս, օր., **Գրեկյան Ե.**, 2016, էջ 81-82, նաև՝ ծան. 477-ի գրակ.):

11 Ենթադրվում է՝ Ուրարտուի մերձուրմյան շրջանների հարավային հատվածը ևս անցել է Մաննային (տե՛ս **Գրեկյան Ե.**, 2016, էջ 93, նաև՝ ծան. 557-ի գրականությունը):

12 Կալխուն արդի Նիմրուդն է՝ տեղակայված Մոսուլից հարավ: Արշավանքը մեկնարկել է հունիս-հուլիս ամիսներին:

13 Արշավանքի պատրվակը Մաննայի վասալ այս երկու երկրներին պատժելն էր, որոնք դաշնակցել էին Ուրարտուին: Իրականում, օգտվելով Ք.ա. 715 թ. վերջին Ուրարտուի՝ կիմերներից կրած պարտությունից և ներքին խռովություններից, Ասորեստանը ցանկանում էր Ուրարտուին դուրս մղել բուֆերային երկրներից և մերձուրմյան շրջաններից:

14 ԼԱ-ում՝ արշավանքի ամփոփման հատվածում, Սարգոն II-ը նշում է, որ, Սումբիից արշավելով և այս 2 լեռները անցնելով, ներխուժել է Ուրարտու (տե՛ս **Thureau-Dangin F.**, 1912, էջ 67 (418): АВИИУ, 49 (415), ՀԺՊՔ, էջ 33 (415)):

15 Սուրիկաշը Կարալլու և Ալլաբրիա երկրների հարևանությամբ էր:

16 Մաննայի արքա Ուլլուսունևն, Իգիրտուից 7 բերու անցնելով (1 բերուն 5,5-8 կմ է), Ալլաբրիայի Լաուրետե շրջանում հանդիպել է Սարգոն II-ին (տե՛ս ARAB II, էջ 108-109 (210)): ԼԱ-ում, սակայն, հանդիպման վայր է նշվում Սինիխինի ամրոցը:

17 Պարսուաշը (Պ/Բարսուա, Բարշուա) Զամուայի, Մաննայի, Ալլաբրիայի, Կարալլուի, Մեսիի, Նամրուի, Բիթ-Աբդադանի, Մեդիայի, Գիզիլբունդայի, Բիթ-Կապսիի մերձավորությամբ էր. նրա երկրներից էր Բ/Պուշտուն (տեղադրության վարկածները ամփոփ տե՛ս, օր., **Грантовский Э. А.**, Ранняя история иранских племен Передней Азии, изд. второе, М., изд. Восточной лит., 2007, (այսուհետ՝ **Грантовский Э. А.**, 2007), էջ 151-163):

18 Միսսին (Մեսի, Մեսա/ու) Գիզիլբունդայի և Պարսուայի մերձավորությամբ էր՝ Մաննայի հարավում:

19 Մաննայի արքան և իշխաններն այստեղ կրկին ներկայացել են Սարգոնին, և ձևավորվել է հակաուրարտական դաշինք. Սարգոն II-ը խոստացել է Ուրարտուի պարտությունից հետո վերականգնել Մաննայի սահմանները:

20 Սարգոն II-ը Պանզիշ է հասել Մաննայի, Բիթ-Կապսիի և Մեդիայի միջնատարածքով: Մաննան դա կառուցել էր Զիկիրտուից և Անդիայից փախստականների հոսքը կանխելու համար:

21 Պանզիշից Սարգոն II-ն անցել է Զիկիրտու, ջարդել Ուաշդիրիկու լեռան անցումները պաշտպանող զիկիրտացիներին, մտել Փարդա և այրել դա: Միտատտի արքան լքել է մայրաքաղաքը և զորքով շարժվել Ուրարտու՝ միանալու Ռուսա I-ի ուժերին (տե՛ս ARAB II, էջ 8 (19): АВИИУ, 46 (106)):

22 ԼԱ-ում Պանզիշից հետո նշվում է Աուկանեի մասին: Սակայն Փարդայի և Զիկիրտուի մնացյալ բնակավայրերի առումը տեղի է ունեցել Աուկանե ներխուժելուց առաջ, և վերջինիս նախապես նշումը ցույց է տալիս շարժման ուղղությունը:

սամմիյու)[23]: Այնուհետև Սարգոն II-ը դադարեցրել է արշավանքը դեպի Անդիա, շարժվել Ուրարտուի դաշնակցային զորքի դեմ[24], որը, կենտրոնանալով **Ուիշդիշում՝ Ուաուշ** լեռան փեշերին, պատրաստվում էր վճռական ճակատամարտի:

Արշավանքի ուրարտական երթուղին հիշատակվում է այսպես. Ուաուշի փեշերին հաղթելով Ռուսա I-ի (Ք.ա. 735-713 թթ.) զորքին[25]՝ Սարգոն II-ը շարունակել է առաջխաղացումն Ուրարտուի տարածքով: Սահմանային առաջին մարզը **Ուիշդիշն էր**, վերջինը՝ **Ուայաիսը**: Ուիշդիշից Սարգոն II-ը անցել է **Սուբի**, **Զարանդա** մարզերով, Սանգիբուտուի **Բարի** շրջանով, **Դալայա**, **Սանգիբուտու**, **Արմարիալի**[26], ծովափնյա **Այադու** մարզերով, ներխուժել **Ուայաիս**, որն Ուրարտուի սահմանների վերջն էր՝ Նաիրի-Խուբուշկիայի դիմաց[27]: Ուիշդիշի սահմանին բուն ուրարտական առաջին ամրոցը **Ուշկայան** էր, որը Սուբի մարզում էր[28]՝ **Մալլաու** լեռան փեշերին, Զարանդա տանող ճանապարհին: Ուշկայայից Արմարիալի արշավանքն ընթացել է հետևյալ երթուղով՝ **Զարանդա-Անիաշտանիա** ամրոց[29]-**Բարի** շրջան-Դալայայի **Թարուի** և **Թարմակիսու** ամրոցներ-Սանգիբուտուի **Սարդուրիխուրդա** ամրոց-**Ուլխու** քաղաք[30]-**Սանգիբուտուի** 19 բնակավայրեր (**(...)ուննատե**, **Խուրնուկու**, **Խարդանիա**, **Գիզուարզու**, **Շաշզիսսա**, **Վերին Խունդուրնա**, **Ուաղնաունզա**, **Արացու**, **Շադիշցինիա**, **Ներքին Խունդուրնա**, **Էլ(...)նակ**, **Ցիտտուարզու**, **Զիրմա**, **Սուրզի**, **Էլիյադինիա**, **Դագ(...)**, **Ցուրզիալդիու**, **Արմունա**, **Կինաշտանիա**)[31], որոնք **Արցաբիա** լեռան փեշերին էին: Ասորեստանի զորքը, այս տարածությունն անցնելով, դուրս է եկել **Իրտիա** լեռան շրջան՝ Արցաբիայից 12 բերու հեռավորության վրա, և անցել **Արմարիալի**: Այս մարզում Սարգոն II-ը շարժվել է **Բուբուզի-Խունդուր-Այալե-Ծինիշպալա-Ծինիուսակ-Արնա-Շարնի** երթուղով, գրավել շրջակա 30 բնակավայրերը, որոնք **Ուբիանդա** լեռան

23 Նշվում է 12, սակայն թվարկվում 13 բնակավայրի անուն: Ավերվել են նաև 84 այլ բնակավայրեր: Դրանք Փարդայից Աուկանե տանող ճանապարհին էին. հիշատակություններից մեկում խոսվում է 3 ամրացված քաղաքների և 24 բնակավայրերի գրավման մասին, որոնք Փարդայի մերձավորությամբ էին (տե՛ս ARAB II, էջ 8 (19): АВИИУ, 46 (101)):

24 Սարգոնն Աուկանե՝ Ուրարտուի սահման է հասել՝ Անդիայի մերձակայքից շարժվելով հակառակ ուղղությամբ:

25 Ռուսան մի կերպ է խուսափել ասորեստանցիներից, որոնք 6 բերու հետապնդել, սակայն չեն կարողացել գերել նրան:

26 Արմարիալին (Արմարիլի, Արմիրալիու, Արամալի) Սանգիբուտուի, Այադուի, Արզաշկուի և Նաիրի երկրի ծովի միջև էր:

27 Ուայաիսը (Ուեսի, Ուայսի, Ուասի) նույնանուն հզոր ամրոցով Ուրարտուի ռազմական և հետախուզական հենակետն էր երկրի հարավային սահմանին: Այստեղից ուրարտական զորքերն արշավում էին նաև Մուսասիր և Մաննա:

28 Ուիշդիշը Սարգոն II-ը նշում է Մաննայից խլված, Ուշկայան՝ Ուրարտուի սահմանների սկիզբը, իսկ Սուբին՝ մաննայացիներով բնակեցված՝ շեշտելով Ուրարտուի զավթումներն ու արդարացնելով իր գործողությունները:

29 Այս ամրոցը Սանգիբուտու մարզի սահմանին էր՝ Ուշկայայի և Թարմակիսուի միջև:

30 Սարդուրիխուրդան կառուցվել էր Ուլխուն պաշտպանելու համար հավանաբար Սարդուրի II-ի (Ք.ա. 764-735 թթ.) ժամանակ: Դրանք Կիշպալ լեռան փեշերին էին: Ուլխուում Ռուսա I-ը ջրանցք էր կառուցել, և շրջակա հողերը վերածվել էին ծաղկուն այգիների ու մշակովի հողատարածքների: Ասորեստանի զինվորներն ավերել են այդ ջրանցքն ու այգիները:

31 Նշվում է 20 բնակավայրի մասին, թվարկվում՝ 19-ը. 20-րդը հավանաբար նկատի է առնվել Ուլխուն:

փեշերին էին, անցել նաև **Արբու** և **Ռիար** բնակավայրերով, որոնք Ուրսայի (Ռուսա I) և Սարդուրիի (II) հայրական օջախներն էին: Այստեղ Սարգոնի զինվորներն ավերել են **Խալդի աստծու տաճարը**, գրավել 7 հարակից բնակավայրերը և սրի քաշել նաև արքայատան անդամներին: Արմարիալիից Ասորեստանի զորքը **Ուիզուկու** լեռան փեշերով ներխուժել է ծովափնյա **Այադու** մարզ և ավերել **Արցիդու** և **Մախունիա** լեռների ու նրանց վրա կառուցված **Կալլանիա** և **Արգիշտիունա** հզոր ամրոցների միջև գտնվող հետևյալ 30 բնակավայրերը՝ **Անզալիա**, **Կուայաին(՞)**, **Կալլանիա**[32], **Բիտայա**, **Ալուարզա**, **Կիունա**, **Ալլի**, **Արզուգու**, **Շիկկանու**, **Արդիունակ**, **Դայազունա**, **Գետա**, **Բանիու**, **Բիրխիլուզա**, **Դեզիզու**, **Դիլիզիա**, **Աբաինդի**, **Դուաին**, **Խասրանա**, **Պարրա**, **Այածուն**, **Անիաշտանիա**, **Բալդուարզա**, **Սարուարդի**, **Շումատտար**, **Շալզի**, **Ալբուրի**, **Ծիկարրա**, **Հին Ուայաիս**[33]: Այնուհետ Սարգոն II-ի զորքը վերադարձել է Այադու ներխուժած ճանապարհի ուղղությամբ, անցել **Ալլուրիա, Կալլանիա** և **Իննայա** գետերն ու մտել **Ուայաիսի** մարզ[34]: Ուայաիսի ամրոցին նա մոտեցել է թիկունքից, սակայն չի կարողացել գրավել դա և, ավերածություններ ու սպանդ կազմակերպելով, հեռացել է: Ուայաիսում Սարգոնը գրավել և այրել է 5 ամրոց (**Բարզուրիանի**, **Ուալտուկույա**, **Կուտտա**, **Կիպպա**, **Ասապա**) և 40 բնակավայր: Ուայաիսից նրա զորքը մտել է **Խուբուշկիա**: Յանզու արքան Սարգոն II-ին դիմավորել է 4 բերու հեռավորության վրա և ուղեկցել մայրաքաղաք: Խուբուշկիայից հիմնական ուժերը վերադարձել են Ասորեստան, իսկ արքան 1000 հոգանոց զորախմբով անցել է **Արսիու** լեռը, հատել **Վերին Զաբը**, որը «**Խաբխիի** և **Նաիրիի** մարդիկ անվանում էին **Էլամունիա**», հաղթահարել **Շեակ**, **Արդիկշի**, **Ուլայաու** և **Ալլուրիա** լեռները, մտել **Մուսասիր** և **Անդարութթա** լեռնանցքով, որը **Խիպպարնա** քաղաքի դիմաց էր, վերադարձել հայրենիք:

2. Արշավանքի երթուղու շուրջ առկա վարկածները

Մաննայական արշավանքի վերաբերյալ հիմնական վարկածն այն է, որ Կալխուից արևելք հատելով Մեծ Զաբը՝ Սարգոն II-ը շարժվել է Քիրքուկի ուղղությամբ, անցել Փոքր Զաբը, մտել Կոլլարա դաղ լեռան շրջան[35], այնուհետ հասել Սաքքիզ, որտեղից շարժվել է մերձուրմյան ա-

32 Անզալիան, Կուայաինը Սարգոն II-ը գրավել էր մինչ Արցիդու հասնելը, իսկ Կալլանիան այս լեռան փեշերին էր:

33 Բնակչությունը պատսպարվել է Արգիշտիունա և Կալլանիա ամրոցներում, սակայն ասորեստանցիները գրավել, թալանել ու այրել են դրանք շրջակա 87 բնակավայրերով հանդերձ:

34 Կալլանիա ամրոցը համանուն գետի ափին էր, որտեղից Սարգոն II-ը ներխուժել էր Այադուի ծովափ, ավերել բազմաթիվ բնակավայրեր, այնուհետ վերադարձել ու անցել համանուն գետը և շարժվել Ուայաիս:

35 Քիրքուկում Փոքր Զաբի գետանցման վարկածն առաջադրել է Ֆ. Թյուրո-Դանժենը՝ հիմք ընդունելով Զամուայի՝ Սուլեյմանիեն ընդգրկելու հանգամանքը (տես **Thureau-Dangin F.**, 1912, էջ iii): Տեսակետը ստացել է համընդհանուր ընդունելություն և հարստացվել հավելյալ փաստարկներով. մասնավորապես, Կուլլար լեռը նույնացվել է

վազան[36], հատել Ուրարտուի սահմանը և շարժվել հյուսիս՝ լճի արևելյան[37] կամ արևմտյան շրջաններով[38]: Մաննան և նրա շրջակա երկրները տարբեր դասավորումներով [39] տեղադրվել են Քիրքուկ-Սուլեյմանիե-Սաքքիզ-Սենադաջ-Ջաղաթու ու Թաթաո գետերի ավազան-Միանդուաբ-Մահաբադ-Ուշնու կամ Քարանգու գետի վերին ավազան գծով:

Ուրարտական արշավանքի վերաբերյալ առաջարկվել են երկար և կարճ երթուղիներ՝ մեկ տասնյակից ավելի վարկածներով:

Ըստ երկար երթուղու վարկածի կողմնակիցների՝ Սարգոն II-ի զորքը Ուրմիա լճի արևելյան կամ արևմտյան շրջաններով անցել է Վանա լճի ավազան՝ 1. շրջանցելով լիճը հյուսիսից, արևմուտքից, և Տիգրիսի ու Մեծ Զաբի ավազաններով վերադարձել Ասորեստան[40]. 2. հասնելով լճի արևելյան շրջաններ՝ վերադարձել Բաշկալա և Ջուլամերկով կամ Ուրմիա լճի արևմտյան ափով հասել Սիդեկան և Ասորեստան[41]. 3. հասնելով լճի

ժամանակակից Կոլլարա դաղին (տե՛ս **Ադոնց Ն.**, Հայաստանի պատմություն, Եր., «Հայաստան» հրատ., 1972, (ֆրանս.՝ 1946), (այսուհետ՝ **Ադոնց Ն.**, 1972), էջ 104)՝ ընկած Սուլեյմանիեից հյուսիս-արևմուտք: Ա. Հակոբյանը, սակայն, գտնում է՝ Սարգոնը, 135 կմ անցնելով, Փոքր Զաբը հատել է Դոկանի մոտ և անմիջապես դուրս եկել Կոլլարա դաղի (Սարմաբանդ) մերձակայք (տե՛ս **Հակոբյան Ա.**, Սարգոն Բ-ի արշավանքն Ուրարտու և հին Հայաստանի պատմական աշխարհագրությունը, «Վէմ», Եր., 2014, թիվ 1, (այսուհետ՝ **Հակոբյան Ա.**, 2014), էջ 41-42): Ֆ. Թյուրո-Դանժենը կարծում է՝ Փոքր Զաբի ավազանի լեռները, ընդհանրապես, կրել են Կուլլար անունը՝ հակասություն նկատելով Սալմանասար III-ի և Սարգոն II-ի հիշատակություններում (տե՛ս **Thureau-Dangin F.**, 1912, էջ iii, ծան.1): Ըստ Ի. Մեդվեդսկայայի՝ Կուլլարը կարող է լինել Քանդիլ դաղը (տե՛ս **Medvedskaya I. N.,** 2000, էջ 434):

36 Է. Ռայթը Կոլլարա դաղից Սարգոն II-ի երթուղին կառուցել է նախ դեպի Ուրմիա լճի հարավային շրջաններ, ապա հարավ-արևելք՝ Ջաղաթու գետի ստորին ավազան, այնուհետ՝ հյուսիս՝ Բենաբի ուղղությամբ (տե՛ս **Wright E.**, The Eight Campaign of Sargon II of Assyria (714 B.C.), Journal of Near Eastern Studies, (JNES), vol. 2, N 3, 1943, (այսուհետ՝ **Wright E.**, 1943), էջ 175-182), իսկ Լ. Լևինը Բանեհից Սարգոն II-ի երթուղին կառուցել է նախ հարավ՝ Սենադաջ և Ռևանսեր, այնուհետ հյուսիս՝ Մերիվան, Բիջար և Ուրմիա լճի ուղղությամբ (տե՛ս **Levine L. D.**, 1977, էջ 144-148):

37 Տե՛ս **Thureau-Dangin F.**, 1912, էջ III-VIII: Վարկածը պաշտպանել են, օր., Թ. Փինչեզը (**Pinches T.**, Sargon's Eighth Campaign, The Journal of the Royal Asiatic Society of Great Britain and Ireland, 1913, (այսուհետ՝ **Pinches T.**, 1913), էջ 584-592, Կ. Լեման-Հաուպտը (**Lehmann-Haupt C. F.**, Musasir und der achte Feldzug Sargons II. (714 v. Chr.), Mitteilungen der Vorderasiatischen (und Ägyptischen) Gesellschaft, (MVAG), 21, 1916, էջ 119-151, (այսուհետ՝ **Lehmann-Haupt C. F.,** 1916), նույնի՝ Armenien Einst und Jetzt, Das Türkische Ost-Armenien-In Nord-Assyrien, Berlin, 1926, (այսուհետ՝ **Lehmann-Haupt C. F.**, 1926), էջ 308-319), Է. Ռայթը (1943), Ի. Դյակոնովը (АВИИУ, 49, ծան. 33, 34, 41-43, 47,48, 50), Գ. Մելիքիշվիլին (**Меликишвили Г. А.**, Древневосточные материалы по истории народов закавказья, Наири-Урарту, т. 1, Тбилиси, АН Груз. ССР, 1954, (այսուհետ՝ НУ), էջ 286-290, Բ. Պիոտրովսկին (1959, էջ 102-105), Ն. Հարությունյանը (**Арутюнян Н.**, Биайнили (Урарту), Ер., изд. АН Арм. ССР, 1970, (այսուհետ՝ **Арутюнян Н.,** 1970), էջ 301-304), Ա. Չիլինգիրօղլուն (**Çilingiroğlu A.**, The Eight Campaign of Sargon II, "Anadolu Araştirmalari", IV-V, 1976-1977, (այսուհետ՝ **Çilingiroğlu A.,** 1977), էջ 259-261), Պ. Զիմանսկին (1990, էջ 14-16), Ֆ. Մանիորին (2010, էջ 194 (քարտեզ), 201-203, 2013-228), Ս. Քրոլլը (2012, էջ 11-17), Ե. Գրեկյանը (2016, էջ 86-87, 93-94):

38 Տե՛ս **Rigg H.**, Sargon`s Eigth Military Campaign', Journal of American Oriental Society, (JAOS), 62, 1942, էջ 130-138, (այսուհետ՝ **Rigg H.**, 1942): **Ադոնց Ն.**, 1972, էջ 106-110: Վարկածը տարբեր մոտեցումներով պաշտպանել են Հ. Մանանդյանը (**Манандян Я.**, О некоторых проблемах истории и географии древней Армении, Ер., Айпетрат, 1956, (այսուհետ՝ **Манандян Я.,** 1956), էջ 43-57, Լ. Լևինը (1977), Վ. Մայերը (1980), Պ. Պեկորելան և Մ. Սալվինին (1982), Օ. Մուսքարելլան (1986, 2012), Ի. Մեդվեդսկայան (1989, էջ 105-111), Մ. Լիբիզը (1991), Ա. Հակոբյանը (2014, էջ 39-61):

39 Օր.՝ Պարսուան տեղադրվել է Մաննայից հարավ, հարավ-արևելք կամ Ուրմիա լճից հարավ, Ալլաբրիան՝ Մաննայի հարավարևելյան, հարավային և արևմտյան շրջաններում, Սուրիկաշը՝ Մաննայի հարավարևմտյան, հարավային, հարավարևելյան կամ հյուսիսային շրջաններում, Միսսին՝ Մաննայի հարավում, հարավ-արևելքում կամ Ուրմիա լճի հարավում և այլն:

40 Տե՛ս **Thureau-Dangin F.**, 1912, էջ I-XX, քարտեզ: **Pinches T.**, 1913, էջ 581-612: **Манандян Я.**, 1956, էջ 39-67: **Пиотровский Б. Б.**, 1959, էջ 105-108, քարտեզ:

41 Տե՛ս **Lehmann-Haupt C. F.**, 1916, 1926, էջ 308-345: **Ադոնց Ն.**, 1972, էջ 110-113:

հարավային (հարավարևելյան) ափամերձ շրջան (Գյավաշ)՝ այնուհետ շարժվել հարավ և անցել Ասորեստան և Մուսասիր[42]:

Ըստ կարճ երթուղու վարկածի կողմնակիցների՝ Ուրարտուի տարածքում ասորեստանյան նվաճումները կատարվել են մերձուրմյան ավազանում՝ 1. լճի հարավային, հարավարևմտյան և արևմտյան[43] կամ 2. լճի արևելյան, հյուսիսային և արևմտյան շրջաններում[44]:

3. Արշավանքի երթուղու վերականգնումը

I. Մաննայական արշավանք

Մաննայի հատվածում ասորեստանյան զորքի տեղաշարժի պատկերը վերականգնելու համար առաջնային է Կուլլար լեռան և Սումբի (Սունբի) երկրի տեղորոշումը:

Կուլլար լեռը հիշատակում են նաև Սալմանասար III-ն (Ք.ա. 858-823 թթ.) ու Շամշի-Ադադ V-ը (Ք.ա. 823-810 թթ.): Սալմանասար III-ը կառավարման 4-րդ տարում (Ք.ա. 855 թ.), դուրս գալով Աշշուրից, Կուլլար լեռան, Ներքին Զամուայի և Իդա երկիր-բնակավայրի տարածքով հասել է Ուրմիա լճի հարավային շրջաններ[45], իսկ կառավարման 16-րդ տարում (Ք.ա. 843 թ.) Արբելայից հասել է Կուլլար լեռ և Ներքին Զամուայի տարած-

---

42 Տե՛ս **Меликишвили Г. А.**, Урартоведческие заметки, ВДИ, 1951, N 3, (այսուհետ՝ **Меликишвили Г. А.**, 1951), էջ 177-179: АВИИУ, 49, ծան. 68: **Арутюнян Н.,** 1970, էջ 304-310: **Медведская И. Н.**, 1989: Նույնի՝ 1997: **Սարգսյան Ա.**, Արդինի-Մուսասիրի տեղորոշման շուրջ, ՄՄԱԵԺ, Եր., 2000, XIX, (այսուհետ՝ **Սարգսյան Ա.**, 2000), էջ 144-147:

43 Տե՛ս **Rigg H.**, 1942: **Levine L. D.**, 1977: **Mayer W.**, 1980: Նույնի՝ Die chronologische Einordnung der Kimmerier-Briefe aus der Zeit Sargons II, Mesopotamica-Ugaritica-Biblica. Festschrift K. Bergerhof (Alter Orient und Altes Testament 232), Kevelaer: Butzon & Bercker & Neukirchen-Vluyn: Neukirchener Verlag, 1993, էջ 145-176: **Pecorella P. E.**, **Salvini M.**, 1982: **Liebig M.**, 1991: **Muscarella O. W.**, 2012:

44 Տե՛ս **Reade J. E.**, 1978a, 1994, 1995: **Zimansky P.**, 1990, էջ 14-21: **Maniori F.**, 2010, էջ 194 (քարտեզ), 201-241: **Kroll S.**, 2012: **Գրեկյան Ե.**, 2000, էջ 161-164; 2016, էջ 79-80, 85-86: Վարկածը հիմնված է Այադուն՝ Ուրմիայի արևմտյան ափին, Ուայաիսը՝ լճի հարավարևմտյան մերձավորությամբ, Խուբուշկիայի հարավային տեղադրության վարկածների, մերձուրմյան արևմտյան և հարավային ամրոցների ավերման հնագիտական տվյալների վրա: Ջ. Ռիդը երթուղին կառուցել է նախ Կասպից ծովի ուղղությամբ, ապա՝ Ուրմիա լճի հյուսիսով և արևմուտքով:

45 Սալմանասար III-ը բախվել է Ներքին Զամուայի (Մազամուա) տիրակալ Նիքդիարային (Նիքդերա) և Իդայի կառավարիչ Նիքդեմեին. բամբուկե նավակներով ծով դուրս եկած հակառակորդին ասորեստանցիները հետապնդել են լաստանավերով և հաղթել ծովամարտում (տե՛ս **Grayson A. K.**, Assyrian Rulers of the early first millennium BC, II (858-745 BC), (The Royal inscriptions of Mesopotamia. Assyrian periods; v. 3), University of Toronto Press, 1996, Printed in Canada, Reprinted 2002, (այսուհետ՝ RIM 3), A.0.102 2 (ii 75b-78a), 6 (ii 10-15), 8 (8'b-11'a), 10 (ii 6b-9a), 14 (50b-52a), 16 (24b-26a), 28 (42b-44a)): Այդ «ծովը» Սալմանասար III-ի հիշատակած Ներքին Զամուայի և Նաիրի երկրի ստորին, ինչպես նաև Շամշի-Ադադ V-ի նշած Արևմուտքի ծովն է, որտեղ Ներքին Զամուան սահմանակցում էր Ուրարտուին. Սալմանասար III-ի արձանագրություններում Ներքին Զամուայի ծովն ու Նաիրի երկրի ստորին ծովը դիտված են համարժեք (հմմտ. АВИИУ, 32, 34, RIM 3, A.0.102 5 (ii2b-3), 6 (iv26-36), 12 (9-20), 23 (13b-19a), 24 (5b-10), 29 (39b-42a), A.0.103 1 (ii16b-34a), (iii67b-70a)): Լ. Լևինը Զամուան և Ներքին Զամուան նույնացրել է և ծովը համարել Զերիբոր լիճը՝ տեղակայված Սուլեյմանիեից արևելք (տե՛ս **Levine L. D.**, 1973, էջ 20-22), սակայն արդարացիորեն քննադատվել Ի. Մեդվեդսկայայի կողմից (տե՛ս **Medvedskaya I. N.**, 2000, էջ 435-438: Նույնի՝ Древний Иран накануне империй (IX-VI вв. до н.э.): История мидийского царства, (автореф. дисс. на соиск. уч. степ. ДИН), Санкт-Петербург, 2007, (այսուհետ՝ **Медведская И. Н.**, 2007), էջ 25-27): Ներքին Զամուայում գտնվող Իդա երկիր-բնակավայրը տեղակայվում է Ուրմիա լճից հարավ-արևմուտք, որտեղ Հասանլուի պեղումների ժամանակ (Հասանլու-IV) գտնված թասերից մեկի վրա պահպանվել է այս երկրի անունը (տե՛ս **Medvedskaya I. N.**, 2000, էջ 435-438: Նույնի՝ 2004, 2007, էջ 25-27)): Նիքդիարան, հավանաբար, իր անունը թողել է Նաքադե քաղաքին, իսկ Իդայի անունը հավանաբար պահպանել է ժամանակակից Աղա բնակավայրը՝ ընկած Լուլուևար լճից հարավ-արևելք, Նաքադեից շուրջ 20 կմ արևելք: Հնարավոր է նաև՝ բախումը եղած լինի Լուլուևար լճում:

քով մտել Մաննա, հասել Պադդիրա քաղաք և Պարսուա[46]: Շամշի-Ադադ V-ը 3-րդ արշավանքի ժամանակ, հաղթահարելով Զաբ գետն ու Կուլլար լեռը, ստացել է Դադա խուրուշկացու, Ներքին Զամուայի կառավարիչ Մեքդիարի[47] որդի Շարցինայի, Սունբի, Մաննա, Պարսուա և Թաուրլա երկրների հարկը, բախվել մեսիացիներին, ներխուժել Գիզիլբունդա[48]: Իսկ արձանագրություններից մեկում Շամշի-Ադադ V-ը նշում է, որ, ինչպես ամպրոպ Ադադը, իր լույսն է տարածել Կուլլար հզոր լեռից մինչև Արևմուտքի ծովն ընկած շրջանում ապրող մարդկանց վրա. այս հիշատակությունը ակնհայտորեն վերաբերում է նրա զորահրամանատար Մութարրիսու-Աշշուրի՝ Արևմուտքի ծով կատարած երկրորդ արշավանքին, որի ընթացքում նա բախվել է Ներքին Զամուայի կառավարիչ Մեքդիարի որդի Շարցինային, այնուհետ Ուրարտուի արքա Ուշպինա-Իշպուինիի բնակավայրերին և հայրենիք վերադարձել Սունբի/ու [49] երկրով: Այս հիշատակություններում «Արևմուտքի ծովը», ակնհայտ է, Ուրմիա լիճն է, քանզի Ներքին Զամուան և Ուրարտուն իրար սահմանակցում էին բացառապես մերձուրմյան ավազանում[50]. հավանաբար «Արևելքի ծով» ասելով նկատի են ունեցել Կասպից ծովը[51]: Սարգոն II-ը Կուլլարը հիշատակում է Կալխուի և Սումբիի միջև՝ Զամուա երկրում: Այս հիշատակությունների համադրումից ակնհայտ է դառնում, որ Կուլլար լեռը Ներքին Զամուայում էր՝ Աշշուր քաղաքից, Արբելայից, Կալխուից դեպի Ուրմիա լճի ավազան, Սունբի և Մաննայի հյուսիսարևմտյան շրջաններ տանող ճանապարհին, որտեղից հնարավոր է թափանցել նաև Խուրուշկիա, Մեսի, Պադդիրա, Պարսուա: Այսինքն՝ այս լեռը գտնվում է Ուրմիա լճի, այլ ոչ թե Քիրքուկ-Սուլեյմանիեի ուղղությամբ: Ներքին Զամուայի տարածքը բաժանվել էր Ուրարտուի, Մաննայի և Ասորեստանի միջև. վերջինիս Զամուա (Լուլուբի/մի) մարզը հյուսիսում հավանաբար ընդգրկել է նաև նախկին Ներքին Զամուայի հարավային շրջանները, իսկ Կուլլար լեռը Ասորեստանի և Ներքին Զամուայի սահմանին էր[52]:

---

46 Տե՛ս RIM 3, A.0.102 6 (iii58-iv6), 10 (iii33b-37a), 12 (9-20), 13 (2'b-4'a): Պարսուան Մաննայի հարավում էր, իսկ Պադդիրան՝ Ալլաբրիայում՝ Պարսուայի սահմանին:

47 Մեքդիարն ու Նիքդիարան նույն անձնավորությունն են (տե՛ս, օր., **Дьяконов И. М.**, 1956, էջ 160: **Medvedskaya I. N.**, 2000, էջ 434): Այս արքայից սերված տոհմանվան հետ կարող է կապված լինել նաև հայկական աղբյուրներում հիշատակվող Մահկերտտունը:

48 Տե՛ս АВИИУ, 34, RIM 3, A.0.103 1 (ii34b-59a), (ii59b-iii27a):

49 Հմմտ. RIM 3, A.0.103 1 (ii16b-34a), (iii67b-70a):

50 Տե՛ս **Medvedskaya I. N.**, 2000, էջ 437-438: Այլ տեսակետ տե՛ս, օր. **Hipp K.**, Šamšī-Adad V's Campaigns into the Zagros Revisited, 9th ICAANE, Basel, 2014, vol. 3, Reports 2016, էջ 769-779:

51 Օր., Ադադներար III-ը Կասպից ծովը ներկայացնում է որպես «Արևելքի մեծ ծով» (տե՛ս АВИИУ, 35): Հմմտ. նաև **Дьяконов И. М.**, 1956, էջ 164, ծան. 1, НУ, էջ 46:

52 Սալմանասար III-ի 4-րդ տարվա արշավանքի հիշատակություններից մեկում «Ներքին Զամուան» փոխարինված է «Մազամուայով», իսկ Կուլլար լեռան փոխարեն հիշատակվում է Բունահս լեռնանցքը (տե՛ս RIM 3, A.0.102 2 (ii75b-78a)). վերջինս Սալմանասար III-ի մեկ այլ հիշատակությունում ներկայացված է Բունիսու երկիր տարբերակով (տե՛ս RIM 3, A.0.102 28 (42b-44a)). այս երկիրը հիշատակվում է նաև Աշշուրնազիրիպալ II-ի կողմից դեպի Զամուա կատարած արշավանքի ընթացքում (տե՛ս **Grayson A.K.**, Assyrian Rulers of the early first millennium BC BC I (1114-859 BC), (The Royal inscriptions of Mesopotamia. Assyrian periods; v. 2), University of Toronto Press, 1991, Printed in Canada, Reprinted 2002., (այսուհետ՝ RIM 2), A.0.101, 17 (iii15-23a), (iii27-55)): Պետք է նկատել, որ աղբ-

Սումբին (Սունբի) հիշատակում են նաև Սալմանասար III-ն[53] ու Շամշի-Ադադ V-ը 2-րդ և 3-րդ արշավանքների ժամանակ[54]: Սալմաննասար III-ը Սունբի կարող էր մտած լինել՝ 1. իր 4-րդ տարվա արշավանքի՝ Կուլլարից Ուրմիա լճի ավազան արշավելու կամ լճից վերադառնալու ժամանակ. 2. Ք.ա. 828 թ. Դայան-Աշշուրի Խուբուշկիա երկիր, Մալխիսա (Մադախիսա)[55], Մաննա (Զիրտու), Խար/Կիրնա (Մասաշուրու)[56], Պադդիրա, Պարսուա արշավանքի ժամանակ[57], որը հավանաբար ընթացել է Ռուբար ի Հաջի Բեգ գետի ավազանով[58] դեպի Քելեշին Մերգավառ Գեդիկի լեռնանցք (հայկ.՝ Զարասպ)-Մալլաիսա-Սուֆիան-Մահաբադ-Կուրան-Մազգեհ-Փիրբադիր-Պարշա երթուղով[59]. 3. Դայան-Աշշուրի Ք.ա. 827 թ. Խուբուշկիա երկիր, Մուսասիր (Ծ/Զապպարիա ամրոց), Ուրարտուի սահմանային բնակավայրեր, Գիլզանու կատարած արշավանքից հետո Խարրանիայով և Շաթթուարիայով (այլ ընթ.՝ Շիթիուարիա) Մաննա, Պարսուայի Բուշտու շրջան, Նամրու և Խալման ներխուժելու ժամանակ[60]. դա հավանաբար ընթացել է Հարան-Շաթրա-Սուֆիան-Պարաստան-Սուլեյմանիե-Խոլվան երթուղով[61]:

Շամշի-Ադադ V-ի զորավար Մաթթուրիսու-Աշշուրի զորքը 2-րդ արշավանքի ժամանակ Կուլլար լեռան շրջանից շարժվել է «Արևմուտքի ծով», կռիվ մղել Ներքին Զամուայի կառավարիչ Մեկդիարի որդի Շարցինայի, այնուհետ Ուշպինա-Իշպուինիի բնակավայրերի դեմ, վերադարձին մտել Սունբի երկիր[62]: 3-րդ արշավանքի ժամանակ Շամշի-Ադադ V-ը Խուբուշկիայի Դադա արքայից, նույն Մեքդիարի որդի Շարցինայից, Սունբիից, Մաննայից, Պարսուայից հարկ է ստացել Զաբը գետանցելուց և Կուլլար

յուրներում Ներքին Զամուան երբեմն բնորոշվում է ոչ միայն Լուլլու/մի/բի, Մազամուա, այլև Զամուա անունով, սակայն դա, լինելով այս ընդարձակ երկրի մաս, նաև առանձին աշխարհաքաղաքական միավոր էր՝ ընկած Փոքր Զաբի վերին ավազանից հյուսիս մինչև Ուրմիա լճի հարավային շրջաններ (վարկածները տե՛ս, օր., **Levine L. D.**, 1973, էջ 16-22: **Medvedskaya I. N.**, 2000: Նույնի՝ IDA, EI, vol. XII, Fasc. 6, էջ 615-616:

53 Տե՛ս RIM 3, A.0.102 1002 (3'): Սունբին հիշատակվում է Խուբուշկիա երկրի հետ:

54 Տե՛ս АВИИУ, 34, RIM 3, A.0.103 1 (ii16b-34a), (ii34b-59a):

55 Այս երկիրը տարբեր արձանագրություններում ներկայացված է այս երկու անուններով (տե՛ս RIM 3, A.0.102 14 (159b-174a), 16 (291'-320'a):

56 Այլ ընթերցումներով՝ Խիր/Մուրնա. Մասաշուրուն նրա կենտրոնն էր (տե՛ս RIM 3, A.0.102 14 (159b-174a), 16 (291'-320'a)):

57 Տե՛ս նույն տեղում:

58 Այս գետը Բարասգիրի աջակողմյան վտակներից է, որը սկիզբ է առնում Քելեշին Մերգավառ Գեդիկի լեռնանցքի մերձակայքից և Կանի Ռաշից արևմուտք միանում Բարազգիրին: Հոդվածում ժամանակակից տեղավայրերը ներկայացված են Բրիտանական 1910 թ. (British Topographic Maps, 1910) և ԱՄՆ բանակի քարտեզագրման ծառայության կողմից կազմված (Iraq&Iran, AMS Topographic Maps, 1:253,440, Series K 501, U.S. Army Map Servies, (AMS), 1931-1948) տոպոգրաֆիական քարտեզների հիման վրա, եթե այլ հողում ներկայացված չէ:

59 Ժամանակակից Մալլաիսա բնակավայրը գտնվում է Ուշնուից մոտ 8 կմ հյուսիս, Սուֆիանը՝ Ուշնուից մոտ 15 կմ հարավ-արևելք: Մաննայի մայրաքաղաք Ի/Զիրտուն, հավանաբար, Մահաբադի տեղում էր, իսկ Կուրանը գտնվում է Մահաբադից մոտ 40 կմ հարավ-արևմուտք: Մազգեհը (Մաջգահ) Կուրանից 10 կմ հարավ-արևելք է, Փիրբադիրը՝ Մազգեհից մոտ 13 կմ հարավ-արևելք, իսկ Պարշան՝ Փիրբադիրից մոտ 21 կմ հարավ-արևմուտք (տե՛ս քարտեզը):

60 Տե՛ս АВИИУ, 28 (174): RIM 3, A.0.102 14 (174b-190), 16 (320'b-341'a):

61 Ժամանակակից Հարան բնակավայրը Կանի Ռաշից հյուսիս-արևմուտք է, Շաթրա լեռը գտնվում է Քելյաշինի լեռնանցքի հյուսիսում, Պարաստանը Սարդաշտից հյուսիս-արևելք է: Նամրուն Սուլեյմանիեում էր, իսկ Խոլվան-Խելվանը գտնվում է Քերմանշահից հյուսիս-արևմուտք: Տե՛ս **Арутюнян Н.**, Топонимика Урарту, Ер., изд. АН Арм. ССР, 1985, (այսուհետ՝ ТУ), էջ, 150, 221-222:

62 Տե՛ս RIM 3, A.0.103 1 (ii16b-34a), (iii67b-70a):

լեռ հասնելուց հետո, այնուհետև արշավել Մեսի և Գիզիլբունդա[63]: Սարգոն II-ը Սումբի երկիր է ներխուժել Լուլումի-Զամուայում գտնվող Կուլլար լեռան լեռնանցքը հաղթահարելուց հետո, այնուհետ շարժվել Նիկիպպա և Ուպա լեռների միջով և հայտնվել է Ուրարտուի տարածքում[64], 6 լեռ և նրանցով հոսող 2 գետ անցնելով՝ մտել Մաննայի Սուրիկաշ մարզը: Այս հիշատակությունների համադրումից ակնհայտ է՝ **Սունբի-Սումբի երկիրը Ուրմիա լճի հարավարևմտյան հատվածում էր՝ Ներքին Զամուայի տարածքում կամ նրա հարևանությամբ՝ Ուրարտուի և Մաննայի սահմանին, Փոքր Զաբի ակունքների շրջանում, Խուբուշկիայից, Մալխիսա--Մալլահիսայից և Շաթթուարիա-Շաթրայից ոչ հեռու, իսկ Կուլլար լեռը նրա հարավում էր՝ Աշշուրից, Արբելայից, Կալխուից Ուրմիա լիճ տանող ճանապարհին**, ինչը բացառում է Կուլլար-Կոլլարա դաղ նույնացման և Սունբիի՝ Սուլեյմանիեում տեղադրության վարկածները[65]: **Սունբիի** անունը պահպանել է ժամանակակից **Սուֆիան** բնակավայրը՝ տեղակայված Ուշնուից մոտ 15 կմ հարավ, Գերդե Սուրից 9 կմ հյուսիս-արևելք, Ուրմիա լճից մոտ 40 կմ հարավ-արևմուտք, Պարաստանից (Բուշտու) մոտ 58 կմ հյուսիս-արևմուտք: **Իսկ Կուլլարը, հավանաբար, Գովրա Շինկի լեռնանցքի և Ռևանդուզ քաղաքի միջնամասում ընկած Կաղան և Գալալա բնակավայրերի միջև ձգվող Ռաշկ ի Գուիզան լեռն է (2260 մ). դա Բին ի Սարի հետ ձևավորում է լեռնանցք, որի միջով անցնող ճանապարհը տանում է Խանեի:** Այս լեռների հարավային փեշերով է հոսում Ռևանդուզ գետը և անցնում ժամանակակից Սորան-Գալալա-Գովրա Շինկի լեռնանցք-Խանեի-Խալդար-Նաքադե մայրուղին: Սալմանասար III-ի 4-րդ տարվա արշավանքի հիշատակություններից մեկում **Մազամուա**՝ Նիքդերայի և Նիքդեմեի տարածքներ ներխուժելուց առաջ Կուլլարի փոխարեն հիշատակվող **Բունիսու-Բունաիս** երկրի ու լեռնանցքի անունը[66] հավանաբար պահպանել է **Բին ի Սարը**, իսկ **Կուլլարի** անունը՝ **Կաղանը**: Կուլլար լեռան լեռնանցքը, հավանաբար, Կաղանից Գալալա ձգվող լեռնաձորն է: Այն Էրբիլից ուղիղ գծով մոտ 80 կմ, Կալխուից՝ 130 կմ, Գովրա Շինկի լեռնանցքից՝ 28 կմ, Ուրմիա լճից՝ 82 կմ, Սուֆիանից (Սունբի)՝ 45 կմ, Գերդե Սուրից՝ 36 կմ[67] հեռավորության վրա է: Այստեղով հասնելով Գով-

63 Գիզիլբունդան Մաննայի և մեդացիների երկրի միջև էր, հավանաբար ժամանակակից Սաքքիզի շրջակայքում, Պարսուա-Պարշայի և Մեսի (Միսսի) արևելյան հարևանությամբ. վերջինիս անունը պահպանել է Պարշայից մոտ 15 կմ հյուսիս, Պարաստանից մոտ 25 կմ հարավ-արևելք և Սաքքիզից մոտ 62 կմ արևելք ընկած ժամանակակից Մուսի բնակավայրը:

64 Տե՛ս **Thureau-Dangin F.**, 1912, էջ 67 (418): ԱՎԻՍ, 49 (415), ՀԺՊՔ, էջ 33 (415):

65 Սունբիի նման տեղադրությունը բխում է Կուլլար-Կոլլարա դաղ նույնացման վարկածից: Ըստ Ն. Հարությունյանի՝ Սումբին Փոքր Զաբի ավազանում էր, Կոլլարա դաղից հյուսիս, Մաննայի հարևանությամբ, հետո՝ նրա կազմում (տե՛ս ՏՎ, էջ 172-173): Ի.Դյակոնովը Սումբին տեղադրում է Մաննայի արևմտյան սահմաններում (տե՛ս ԱՎԻՍ, 34, ծան. 10):

66 Տե՛ս RIM 3, A.0.102 2 (ii75b-78a), 28 (42b-44a):

67 Գերդե Սուրը Սուֆիանի հարավ-արևմուտքում է՝ Քելյաշինի լեռնանցքի դիմաց. այստեղ պահպանվել է ուրարտական կիսակառույց ամրոց, որի շինարարությունը դադարեցվել է Սարգոն II-ի 8-րդ արշավանքի ժամանակ

րա Շինկի լեռնանցք՝ այնուհետ ճանապարհները տանում են ոչ միայն մերձուրմյան ավազան, այլև Մաննայի հարավային և հարավարևելյան շրջաններ[68], իսկ Քելյաշինի, Բերդե Բուքի և Քելեշին Մերգավառ Գեդիկի լեռնանցքներով նաև՝ Բարասգիրի և Շեմդինան սուի ավազաններ[69]:

Ինչ վերաբերում է Վերին Զաբից Ստորին Զաբ եռօրյա ռազմերթով կտրելուն, ապա Մեծ Զաբից Քիրքուկի ուղղությամբ շարժվելով՝ Փոքր Զաբը Սարգոն II-ը կհատեր մոտ 65 կմ անցնելով, ինչը հաղթահարելի է 1.5 օրում: Սակայն Փոքր Զաբը նա կարող էր հատել այլ վայրում ևս. Կալխուից շարժվելով 60-70 կմ հյուսիս-արևելք՝ Մեծ Զաբը կարող էր գետանցել Դաշտ ի Հարիրում և շարժվել Սորան-Կաղլան-Գալալա-Գովրա Շինկի լեռնանցք երթուղով և Փոքր Զաբը հատել Խալդարի և Խանեհի միջնամասում՝ Գերդե Սուրից մոտ 10 կմ հարավ-արևելք[70]: Այս պարագայում Մեծ Զաբի և Փոքր Զաբի գետանցումների միջև հեռավորությունը կլինի մոտ 120 կմ, ինչը հաղթահարելի է 3 օրում[71]: Սա ԼԱ-ում միակ դեպքն է, երբ հեռավորությունը չափվում է օրերով. ակնհայտ է՝ Սարգոն II-ը 3 օրում անցել է սովորականից մեծ տարածություն և պարծենում է դրանով: Արքայի գրագիրը սկզբում նշում է զորքի շարժման ուղղությունը՝ Վերին Զաբից Ստորին Զաբ, այնուհետ անդրադառնում միջնամասի տեղավայրերին՝ Կուլլարին և Զամուային: Նկատենք, որ Գերդե Սուրի ամրոցի կառուցումը սկսվել էր Սարգոն II-ի այս արշավանքից առաջ, սակայն արշավանքի հետևանքով կիսատ էր մնացել և լքվել այն կառուցող ուրարտացի զինվորների կողմից[72]: Այս ամրոցը կառուցվում էր դեպի Քելյաշինի լեռնանցք և մերձուրմյան ավազան հարձակումներից պաշտպանվելու համար: Ենթադրվել է, որ նրա կառուցումը դադարեցվել է Սարգոն II-ի՝ Մուսասիր ներխուժումից հետո, քանզի արշավանքը գծագրվել է Մաննայի հարավային շրջաններով: Սակայն նրա կառուցումը դադարեցվել է Ք.ա. 714 թ. հուլիսին, քանզի Սարգոն II-ի զորքը սկզբնապես թափանցել է հենց այս շրջաններ: Բացի դրանից՝ Մաննայի հարավով շարժվելով՝ ասորեստան-

---

(տե՛ս **Jakubiak K.**, Some remarks on Sargon II's eighth campaign of 714 BC, Iranica Antiqua, XXXIX, 2004, էջ 191-202, (այսուհետ՝ **Jakubiak K.**, 2004):

68 Խանեհից Մուսի (Մեսի) մոտ 75 կմ է, մինչև Պարշա (Պարսուա) և Փիրբադիր (Պադդիրա)՝ շուրջ 85-90 կմ:

69 Հավանաբար այս լեռնանցքներով էին Խուբուշկիայի հարկը տեղափոխել Ներքին Զամուա (տե՛ս RIM 3, A.0.103 1 (ii34b-59a)): Խուբուշկիայից Ասորեստան և Մաննա տանող ճանապարհին գտնվող Հարան-Խարրանիա երկիրբնակավայրից Գովրա Շինկի լեռնանցք մոտ 74 կմ է: Այստեղով էր Դայան-Աշշուրը Ք.ա. 827 թ. Շաթրա լեռան փեշերով անցել Մաննա և Բուշտու (տե՛ս АВИУ, 28 (174): RIM 3, A.0.102 14 (174b-190), 16 (320'b-341'a)), Մաննայից այստեղով էին սկյութները սպառնում ներխուժել Ասորեստան (տե՛ս **Starr I.**, Queries to the Sungod. Divination and Politics in Sargonid Assyria, Helsinki, 1990, (այսուհետ՝ SAA 4), 23), այստեղով էր Խուբուշկիայի Յանզու արքան հարկ տեղափոխում Ասորեստան (տե՛ս **Lanfranchi G. B., Parpola S.**, The Correspondence of Sargon II. Part II: Letters from the Northern and Northeastern Provinces, Helsinki, 1990, (այսուհետ՝ SAA 5), 133):

70 Ն. Հարությունյանը Սարգոն II-ի երթուղու սկիզբը ուղեգծում է Կալխու-Շքալավա-Ռևանդուզ-Զիրա ճանապարհով, սակայն շարունակում հարավ՝ Սարդաշտի ուղղությամբ (տե՛ս **Арутюнян Н.**, 1970, էջ 310):

71 Հին Հռոմի բանակն օրական կարողանում էր հաղթահարել 24-64 կմ, իսկ հինբաբելոնյան բանակը՝ 25-55 կմ, լավ մարզված հետևակային զինվորն օրական հաղթահարում էր շուրջ 40 կմ: Օրական 6 ցերեկային ժամում հանգիստ ընթացքով բանակային շարժը միջինը հաշվարկվում է շուրջ 25-30 կմ (տե՛ս **Медведская И. Н.**, 1989, էջ 115-116):

72 Տե՛ս **Jakubiak K.**, 2004, էջ 192, էջ198-199:

ցիները որևէ կերպ չէին կարող Սումբիից հետո երկու լեռներ անցնել և հայտնվել Ուրարտուի տարածքում, ինչպես նշված է ԼԱ-ում:

Այսպիսով՝ Սարգոն II-ը Կալխուից հավանաբար շարժվել է հյուսիս-արևելք, հատել Մեծ Զաբը, շարժվել Սորան-Կաուլան-Գալալա-Գովրա Շինկի լեռնանցք երթուղով, Խալդարից հարավ հատել Փոքր Զաբը և շարժվել Գերդե Սուր և Սուֆիան՝ դուրս գալով Մաննայի և Ուրարտուի սահման:

Նիկիպպա և Ուպա լեռները, նրանց միջով հոսող **Բույա** գետը, **Սիմիրրիա** լեռն ու մնացյալ 6 լեռներն ու 2 գետերը, որոնք հաղթահարելուց հետո Սարգոն II-ը մտել է Մաննայի Սուրիկաշ մարզ, ընկած էին Սունբի-Սուֆիանից արևելք՝ Զիկիրտուի և Անդիայի ուղղությամբ: Սարգոն II-ի զորքը Սունբիից շարժվել է Մաննայի և Ուրարտուի սահմանի երկայնքով՝ Գադար գետի[73] հոսանքի ուղղությամբ, նրա հարավային լեռնային տարածքներով, և դուրս եկել ժամանակակից **Չեմելիան** բնակավայրի մոտ, որը Մամկուջախ լեռան հյուսիսային փեշերին է: **Չեմելիանը** պահպանել է **Սիմիրրիա** լեռնանունը, որն այդ ժամանակ հավանաբար կրել է Մամկուջախ դաղը: **Բույա** գետանունը պահպանել է **Բայի** դաղը, որից սկիզբ է առնում Գադարի աջակողմյան վտակներից մեկը՝ հոսելով Նաքադեի ուղղությամբ: **Նիկիպպան,** հավանաբար, Բայի դաղի հյուսիսում գտնվող **Բահրամ Բոգա** լեռն է, որի հյուսիսային փեշերին՝ Նաքադեից մոտ 12 կմ հարավ-արևելք, կա **Կիփագլի** անունով բնակավայր. վերջինս հավանաբար պահպանել է Նիկիպպայի անունը[74]: Սարգոն II-ը անցել է Բայի դաղ և Բահրամ Բոգա լեռների միջնատարածքով հոսող Բույա գետը և Մամկուջախ լեռան հյուսիսարևմտյան փեշերով հասել Սիմիրրիա-Չեմելիան, որն արդեն Ուրարտուի տարածքում էր՝ ուրարտական Շեյթանաբադ հնավայրի մերձակայքում: Այստեղից երթուղին շարունակվել է Կոփի լճի ուղղությամբ՝ հասնելով Թաշ թեփեի հարավային մերձակայք: Չեմելիանից հյուսիսարևելյան ուղղությամբ 4 տեղավայրեր հավանաբար պահպանել են Սարգոն II-ի հիշատակած լեռնանունները. Կոփի լճի և Չեմելիանի միջև գտնվող **Փիրթանդուրի** լեռները հավանաբար համապատասխանում են Սարգոն II-ի հիշատակած **Բիրուաթթին**, **Սինաբիրի** անունը պահպանել է Կոփի լճի հյուսիսարևելյան մասում գտնվող **Շիրինեվա** բնակավայրը, իսկ **Ախշուրուի** անունը՝ **Շահուրքանդ** բնակավայրը՝ ընկած Սոլդուզից 7 կմ

73 Գադար-Գետառ գետը հայկական աղբյուներում հիշատակվում է Արասխ անունով՝ համարվելով Մեծ Հայքի Պարսկահայք նահանգի հարավային սահմանը (տե՛ս **Անանիա Շիրակացի**, Մատենագրություն, «Աշխարհացույց», Եր., «Սովետական գրող» հրատ., 1979, էջ 294: **Երեմյան Ս. Տ.**, Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1963, (այսուհետ՝ **Երեմյան Ս.**, 1963), էջ 38-39: **Հարությունյան Բ.**, Մեծ Հայքի Պարսկահայք աշխարհն ըստ «Աշխարհացույցի», ՊԲՀ, Եր., 1989, N 2, (այսուհետ՝ **Հարությունյան Բ.**, 1989), էջ 35-36):

74 Նիկիպպան նույնացվել է ուրարտական արձանագրություններում հիշատակվող Նիգիբի բնակավայրին (տե՛ս ՏՄ, էջ 151-152): Սակայն վերջինս և նրա հետ հիշատակվող բնակավայրերը Պարսուայում էին՝ ժամանակակից Պարշայի մոտակայքում:

հարավ, Մելիքանդից 18 կմ արևմուտք, Թաթաո և Ջաղաթու գետերի միախառնման շրջանից քիչ հյուսիս, Թաթաոյի ձախ ափին: **Սույա** անունը հավանաբար ընկած է Մելիքանդից հարավ-արևելք և Միանդուաբից հյուսիս-արևելք գտնվող ժամանակակից **Շորյա** բնակավայրի անվան հիմքում: **Ռապպու** և **Արատտու** գետերը **Թաթաո** և **Ջաղաթու (**հայկ.՝ **Վարարատն)** գետերն են, որոնք Սարգոն II-ը գետանցել է Ախշուրու-Շահուրքանդի մոտակայքում: **Չեմելիան** (**Սիմիրրիա**)-**Փիրթանդուր** (**Բիրուաթթի**)-**Շիրինեվա** (**Սինաբիր**)-**Շահուրքանդ** (**Ախշուրու**)-**Թաթաո** (**Ռապպու**)-**Վարարատն** (**Արատտու**)-**Շորյա** (**Սույա**) հատվածը հաստատապես Ուրարտուի տարածքում էր՝ փաստված նաև հնագիտական տվյալներով[75]:

Մելիքանդից հարավ-արևելք Սարգոն II-ը դադարեցրել է դեպի Ջիկիրտու իր զորաշարժը, թեքվել հարավ և, հավանաբար, Միանդուաբի հյուսիս-արևելքով մտել Մաննայի տարածք: Սուֆիանից Միանդուաբ այս ամբողջ երթի ընթացքում ուրարտական զորքը իր տարածքից՝ հավանաբար Գադար չայի ափամերձ հատվածից հետևել է թշնամու զորքին՝ շարժվելով նրան համընթաց, սակայն 2 կողմերն էլ խուսափել են բախումից. ուրարտացիները հավանաբար ցանկացել են, որ ասորեստանցիներն անցնեն Ջիկիրտու՝ մտադրվելով նրանց հարվածել թիկունքից, իսկ Սարգոն II-ը տպավորություն է ստեղծել, թե իր թիրախը Ջիկիրտուն ու Անդիան են՝ վստահ չլինելով Մաննայի աջակցության հարցում: Ուրարտուի այս ռազմավարության մասին են վկայում Սարգոն II-ին ուղղված Ալլաբրիայի արքային վերագրվող հետախուզական տեղեկությունները[76], որտեղ խոսվում է Ջիկիրտուի և Անդիայի սուրհանդակների՝ Ուասի այցի և Ուրարտուի արքայից օգնություն խնդրելու մասին. արդյունքում բանագնացների վերադարձից հետո ուրարտական զորքը խուբուշկիացիների հետ միասին, արքայի առաջնորդությամբ շտապ արշավանքի է ելել դեպի Ջիկիրտու. 5 անցում հաղթահարելով՝ արքան Ուրարտուի իշխանական զորքերին հրահանգել է միանալ իրեն՝ նպատակ ունենալով թշնամուն հարվածել շրջանցումով: Այս հիշատակությունից ենթադրվում է, որ պետք է թողնեին՝ հակառակորդի զորքը անցնի, այնուհետ հարվածեին նրան[77]: Այս հետախուզական տեղեկությունները գիտական գրականության մեջ վերագրվել են Ուաուշի ճակատամարտի հատվածին. Սարգոնը նշում է՝ իր սուրհանդակից տեղեկացել է, որ թշնամու զորքը դիրքեր է գրավել Ուաուշ լեռան անցումներում և շտապել է հարվածել նրանց: Ուայահս-Ուեսին բավական հե-

75 Ըստ հնագիտական տվյալների՝ ուրարտական բնակավայրերն ու ամրոցները գտնվում էին Քելյաշին-Մահաբադ-Միանդուաբ գծից հյուսիս՝ մինչև Ուրմիա լիճ՝ արևելքում հասնելով Միանդուաբ-Բենաբ գիծ (ամփոփ տե՛ս, օր. **Գրեկյան Ե.**, 2016, էջ 92):

76 Տե՛ս АВИИУ, 50 (17): Ուսումնասիրողները նույնացնում են Ալլաբրիայի արքա Բելանալիդդինին և նամակը գրող Բելիդդինին: Ալլաբրիայի արքան հավանաբար ցանկացել էր ապահովագրել իր երկիրը Սարգոն II-ի նոր ներխուժումից:

77 Տե՛ս АВИИУ, 50 (17), ծան. 6:

ռու էր և անհնար էր, որ Ուաուշի մատույցներում՝ Զիկիրտուի և Անդիայի սահմանին, Զիկիրտուի մայրաքաղաք Փարդայի անկումից հետո միայն զիկիրտացիներն ու անդիացիները օգնություն խնդրեին Ռուսայից՝ հասնելով Ուասի-Ուեսի, մանավանդ արքան Ուիշդիշում էր Անդիայի և Զիկիրտուի արքաների հետ: Այս տեղեկությունը Սարգոն II-ին տրվել է ավելի վաղ՝ արշավանքի սկզբում, երբ նա Կալխուից շարժվել էր մաննա-ուրարտական սահման՝ Զիկիրտու և Անդիա հասնելու համար, իսկ Ռուսա I-ը, իր հերթին, Ուեսիից շտապել էր Մաննայի սահման՝ դիմակայելու վտանգին: Միաժամանակ, իր դաշնակիցների հետ հավանաբար պայմանավորվել էր թույլ տալ ասորեստանցիներին անցնել Ուրմիա լճի հարավային շրջաններով, որից հետո ուրարտական զորքը՝ թիկունքից, իսկ Զիկիրտուի և Անդիայի զորքերը արևելքից կարող էին աքցանի մեջ առնել նրանց[78]: Այս պարագայում Մաննան կարող էր թեքվել Ուրարտուի կողմը, որը կկանխորոշեր Ասորեստանի պարտությունը: Սարգոն II-ը, կռահելով վտանգը, խուսափել է վաղաժամ բախումից և թիկունքն ամրացնելու նպատակով դադարեցրել է դեպի Զիկիրտու արշավը, Մաննայի, Ուրարտուի և Զիկիրտուի սահմանային շրջանից թեքվել է հարավ և մտել Մաննա[79]:

Մաննայի Սուրիկաշ մարզն ընկած էր Միանդուաբից հարավ-արևելք՝ Զաղաթու և Թաթաո գետերի ավազանում[80]: Սահմանային **Սինիխինի** ամրոցը Մաննայի մայրաքաղաք **Իզիրտուից** մոտ 38-56 կմ հեռավորության վրա էր[81]: **Սինիխինիի** անվան հետ կարող է կապված լինել Շորյայից հարավ՝ Միանդուաբի հյուսիս-արևելքում գտնվող **Շինաբադ** բնակավայրի անվանումը[82]:

Ալլաբրիա և Կարալլու երկրները Սուրիկաշի հարավային հարևաններն էին: Ալլաբրիան հյուսիս-արևմուտքից սահմանակցում էր Մաննայի Իզիրտուի շրջանին, հյուսիսից՝ Սուրիկաշին, հյուսիս-արևելքից՝ Կարալլուին, հարավ-արևմուտքից՝ Պարսուաշին: Նրա քաղաքներից Պադդիրան Պարսուայի սահմանին էր և ձեռքից ձեռք էր անցնում: Ալլաբրիայի Լաուրե-

78 Ուրարտուի բանակի կազմում էին նաև խուբուշկիացիները (տես АВИИУ, 50 (17)), սակայն նրանք չեն մասնակցել Ուաուշի ճակատամարտին՝ հավանաբար ավելի վաղ վերադառնալով իրենց երկիր: Այս իրադարձություններին կարող է վերաբերել նաև մեկ այլ հետախուզական հաղորդագրություն, որը սովորաբար կապում են Ք.ա. 719 թ. իրադարձությունների հետ, սակայն դա շատ նման է Բելիդդինի հաղորդագրությանը (տես АВИИУ, 50 (14)):

79 Զիկիրտու-Մաննա սահմանը այս ուղղությամբ հավանաբար անցնում էր Քուրի չայով. Զիկիրտուի՝ Մաննայից խլած Շունդախուլ (Սա՞նջխ) և Դուրդուկկու-Զուրզուկկու (Սարաջա՞) բնակավայրերը Քուրի չայի ավազանում էին. Ուլլուսունուի՝ Ուրարտուին հանձնած 22 բնակավայրերը ևս այս շրջաններում էին՝ Մուրդի չայի և Քուրի չայի ստորին ավազանների միջև. Ք.ա. 715 թ. Սարգոնը դրանք վերադարձրել էր Մաննային (տես ARAB II, էջ 3 (6), էջ 6 (12), էջ 27-29 (56): АВИИУ, 54)): Այստեղ էին նաև Սարգոն II-ի՝ Կակմեում գրված Սուկկիա, Բալա (Բալիա՞շ), Է/Աբիտիկ(ա)նա (Արփադարա՞), Պապ(ա)ա (Պապակազի՞), Լալլուկնու/ի (Լեյլա՞ն) բնակավայրերը (տես ARAB II, էջ 4 (9), էջ 29 (56), էջ 62 (118): АВИИУ, 46 (32), 53):

80 Սուրիկաշի տեղադրության նմանատիպ մոտեցում է առաջարկում նաև Ի. Մեդվեդսկայան՝ այն տեղադրելով Թաթաո չայից արևմուտք՝ Մահաբադի շրջանում (տես **Медведская И. Н.**, 2007) էջ 34):

81 Ուլլուսունուն Սարգոն II-ին դիմավորել է Սինիխինիում և հավանաբար ուղեկցել Ալլաբրիայի Լաուրետե շրջան. այդ պատճառով հանդիպման վայր է նշվում և՛ Սինիխինին, և՛ Լաուրետեն (հմմտ.՝ ARAB II, էջ 108-109 (210): АВИИУ, 49 (6)):

82 Շինաբադ անունով մեկ այլ բնակավայր կա նաև Միանդուաբից մոտ 5 կմ հարավ-արևելք:

տե շրջանի Լատաշե ամրոցը Շինաբադից Պարշա տանող ճանապարհի միջնամասում էր՝ Իզիրտուից գրեթե նույն հեռավորության վրա, ինչ Սինի-խինի-Շինաբադը: **Լատաշեն** կարող է համապատասխանել Սիմին Ռուդի ստորին ավազանում՝ Պարշայից մոտ 40 կմ, Փիրբադիրից 17 կմ հյուսիս-արևելք, Շինաբադից 60 կմ հարավ-արևմուտք և Մահաբադից 47 կմ հարավ-արևելք գտնվող ժամանակակից **Դարվեշան** բնակավայրին: Ալլաբրիան ձգվում էր Թաթաո գետի ձախափնյա ավազանով մինչև Փիրբադիր, իսկ Կարալլուն Ջաղաթուի և Թաթաոյի միջնամասում էր՝ Միանդուաբից հարավ-արևելք, Բուքանից հյուսիս, Սուրիկաշի, Ալլաբրիայի, Բիթ-Դայուկկիի, Պարսուաշի և մեդացիների տարածքների միջև[83]: Միանդուաբից մոտ 32 կմ հարավ-արևելք, Բուքանից 30 կմ հյուսիս գտնվող ժամանակակից Կուլիար բնակավայրի անվան հիմքում հավանաբար Կարալլուի անունն է: Ալլաբրիան և Կարալլուն Ուլլուսունուի և Ռուսա Ի-ի ջանքերով Ք.ա. 716 թ. Ուաուշում Ազայի սպանությունից և Ուլլուսունուի գահ բարձրանալուց հետո մաս էին կազմել Ուրարտուի հակաասորեստանյան դաշինքին Զիկիրտուի և Անդիայի հետ միասին, և նրանք հեռու չէին կարող գտնվել Ուրարտուից, Զիկիրտուից և Անդիայից[84]: Նույն Ք.ա. 716 թ. Սարգոնը դաժանորեն պատժել էր այս երկրների արքաներին՝ սպանելով Կարալլուի արքային, իսկ Ալլաբրիայի արքային ընտանիքով աքսորելով Սիրիա: Ք.ա. 714 թ. արշավանքից առաջ Կարալլուն բանակցություն էր սկսել Ասորեստանի հետ. Կարալլուի բանագնացները եկել էին Ասորեստան և առաջարկել իրենց ծառայությունները: Սակայն Սարգոնը Լուլումիի կառավարչի միջոցով Կարալլուին դարձրել էր լիարժեք վասալական երկիր՝ կցված համարելով Ասորեստանին[85]: Այս հիշատակությունը գիտության մեջ մեկնաբանվել է որպես Կարալլուի կցում ասորեստանյան Ջամուա մարզին[86], սակայն այստեղ խոսվում է բանակցությունների և Լուլումիի կառավարչի ձեռքով Կարալլուին ասորեստանյան լծի տակ առնելու մասին, հետևաբար պարտադիր

83 Սարգոն II-ը 6-րդ տարվա արշավանքի ընթացքում Իզիրտու-Զիբիա (Բերդեսպիան)-Արմաիդ (Ամին Աբադ)-Ալլաբրիա-Կարալլու երթուղուց հետո գրավել է Նիքսամմա երկրի 6 քաղաքներն ու Շուրգաիդա քաղաքը՝ դրանք կցելով Պարսուաշին, անցել մեդացիների տարածք, Խարխար ու էլլիպի (տե՛ս ARAB II, էջ 46 (92)): Ըստ այլ հիշատակությունների՝ Կարալլուից նա անցել է Շուրդա երկիր, այնուհետ՝ Կիշեսիմ, Խարխար և մեդացիների տարածք (տե՛ս ARAB II, էջ 40 (79)): Բերդեսպիանն ու Ամին Աբադը Մահաբադից հարավ և հարավ-արևելք են, Շուրդան, որ համընկնում է Շուրդիրու/Պադդիրային, հավանաբար Շուրգաիդան է (տե՛ս АВИИУ, 73, ծան. 6: **Ադոնց Ն.**, 1972, էջ 103, ծան. 2): Ք.ա. 713 թ. Բիթ-Դայուկկիից անցնելով Կարալլու՝ Սարգոնը կրկին անցել էր Մեդիա և էլլիպիի սահման (տե՛ս ARAB II, էջ 10 (23)): Բիթ-Դայուկկին Մաննայի և Ուրարտուի սահմանին էր. վերջինիս կառավարչին՝ Դայաուկկուին Սարգոն II-ը Ք.ա. 715 թ. արշավանքի ժամանակ աքսորել էր Ռուսային գործակցելու պատճառով, իսկ Ուրարտուի խլած 22 քաղաքները վերադարձրել Մաննային, այնուհետ Սարգոնը ներխուժել էր Անդիա, հետ դարձել Իզիրտու (տե՛ս ARAB II, էջ 6 (12, 13): АВИИУ, 46):

84 Տե՛ս ARAB II, էջ 4-5 (10): Սարգոն II-ի հիշատակություններից մեկում Կարալլուն ուղղակի նշվում է Զիկիրտուի, Անդիայի և մեդացիների հետ (տե՛ս ARAB II, էջ 46 (92)): Կարալլուի նմանատիպ տեղադրություն է առաջադրել նաև Ն. Հարությունյանը (տե՛ս ТУ, էջ 102), այն տարբերությամբ, որ նա Սուրիկաշը տեղադրել է Կարալլուից հարավ:

85 Տե՛ս ARAB II, էջ 108 (209): Այս իրադարձությունը հավանաբար տեղի է ունեցել Ք.ա. 716-714 թթ.՝ մինչև Սարգոն II-ի 8-րդ արշավաքը. Սարգոնը նշում է, որ կարալլացիները հիշում էին իրենց երկրում իր գործած մեծ դաժանությունների մասին:

86 Տե՛ս, օր. **Медведская И. Н.**, 2007, էջ 32, 34:

չէ, որ Կարալլուն գտնվեր Լուլումիի հարևանությամբ. Կարալլուի պատվիրակները հավանաբար եկել էին հենց Ձամուա մարզ: Ք.ա. 713 թ. կրկին ըմբոստացած կարալլացիներին զսպելու համար Սարգոն II-ը այստեղ էր մտել Բիթ-Դայուկկիից, անցել Մեդիա, դուրս եկել Էլլիպիի սահման[87]՝ շարժվելով հյուսիսից հարավ, այլ ոչ թե արևմուտքից արևելք. Բիթ-Դայուկկին մաննա-ուրարտական սահմանին էր՝ Միանդուաբի մոտակայքում[88]:

Այսպիսով՝ Սարգոն II-ը **Սինիխինիից** (**Շինաբադ**) շարժվել է հարավ-արևմուտք **Լատաշե** (**Դարվեշա՞ն**)-**Պարսուաշ** (**Պարշա**) ուղղությամբ՝ Մաննայի արևելյան սահմանի երկայնքով, հյուսիսից հարավ: Իսկ Մաննայի մայրաքաղաք Իզիրտուն Շինաբադից և Դարվեշանից շուրջ 45-47 կմ հեռավորության վրա էր՝ հավանաբար Մահաբադի տեղում[89]:

Պարսուաշ-Պարսուան Մաննայի հարավում էր՝ Ասորեստանից արևելք, Մեդիայից արևմուտք: Սաքքիզից 52 կմ հարավ-արևմուտք, Սարդաշտից 27 կմ հարավ-արևելք, Բանեիից 17 կմ հյուսիս-արևմուտք և Մուսից 15 կմ հարավ, Փոքր Զաբի և Ձաղաթուի ստորին հոսանքի միջնամասում է գտնվում ժամանակակից Պարշա-Պարշե բնակավայրը, որը պահպանել է Պարսուա—Պարսուաշի անունը: Այս երկիրը սահմանակից էր Ալլաբրիային Պադդիրա (-Փիրբադիր) քաղաքի ուղղությամբ, Մեսի-Միսսին (Մուսի), Գիզիլբունդային (-Սաքքիզ), Բիթ Աբդադանին, Ձամուային, հեռու չէր Նամրուից, Կարալլուից (-Կուլիար) և մեդացիների տարածքից: Նրա կազմում է հետագայում հայտնվում նաև ալլաբրիական Պադդիրա (Փիրբադիր) քաղաքը[90]: Պարսուան նեռառում էր նաև Պ/Բուշտու երկիրը, որը Պարշայից հյուսիս-արևմուտք ընկած ժամանակակից Պարաստանի շրջակայքում էր, և վերջինս էլ ժառանգել է

87 Մեդիայի և Էլլիպիի տեղադրության մասին տեսակետները տե՛ս, օր., **Levine L. D.**, 1974, էջ 104-106, 117-119: **Medvedskaya I. N.**, Media and its neighbours I: The localization of Ellipi, Iranica Antiqua, vol. XXXIV, 1999, էջ 53-70:

88 Տե՛ս ARAB II, էջ 10 (23): АВИИУ, 46 (139), ծան. 40: Բիթ-Դայուկկիի տեղադրության այլ տեսակետներ տե՛ս, օր., **Алиев И. Г.**, История Мидии, Баку, изд. АН Азерб. ССР, 1960, էջ 184: Ասորեստանը ցանկանում էր ծավալվել Թաթաոյի և Ձաղաթուի միջին ավազան. տիրելով Ալլաբրիային և Կարալլուին՝ Մաննան երեք կողմից շրջափակվում էր Ասորեստանի տարածքներով:

89 Սալմանասար III-ի Ք.ա. 828 թ. Խուբուշկիա-Մալխիսա (Մալլաիսա)-Զիրտու-Կիրնա (Կուրան)-Մասաշուրու (Մազգեհ)-Պադդիրա (Փիրբադիր)-Պարսուա (Պարշա) արշավանքը (տե՛ս RIM 3, A.0.102 14 (159b-174a), 16 (291'-320'a)), Սարգոն II-ի Ք.ա. 716 թ. Ուաուշ-Մաննա (հավանաբար՝ Իզիրտու), այնուհետ՝ Իզիրտու-Զիբիա (Բերդեսպիան)-Արմիդ (Ամին Աբադ)-Ալլաբրիա-Կարալլու (Կուլիար)-Նիքսամմա երկրի-Շուրգադիա (Շուրդա/Պադդիրա/Փիրբադիր)-Պարսուաշ (Պարշա)-Խարխար-Էլլիպի (տե՛ս ARAB II, էջ 5 (10), էջ 29 (56): АВИИУ, 46 (52), 54 (28)), Ք.ա. 715 թ. Դայաուկկուի շրջան-մաննա-ուրարտական սահման-Անդիա-Իզիրտու արշավանքները և Աշշուրբանիպալի Այսուիաշ-Պաշա…սու (Բեշաս)-Բուսուտու (Պարաստան)-Աշդիաշ (Դագա՞շ)-Ուրկիյամու (Գոմելյա՞ն)-Ուպպիշ-Սիխուա (Սիահ Կոլ)-Նազինիրի-Իզիրտու-Ուրմեյատե (Ամին Աբադ)-Ուզբիա (Բերդեսպիան)-Արսիյանիշ (Սիչիան Բուլա՞ղ)-Ազականանի (Իսաքանդ)-Կումուրդա (Գիրդուբարդա՞ն) (Մաննայի ներսում)-Պադդիրա/Շուրդիրու (Փիրբադիր) արշավանքը (տե՛ս АВИИУ, 73), Սարգոն II-ի 8-րդ արշավանքին համադրյալ փաստում են, որ Ի/Զիրտուն Մալլաիսայից հարավ-արևելք, Ուաուշից և Անդիայից հարավ-արևմուտք էր, Շինաբադից և Դարվեշանից՝ մոտ 45-47 կմ հարավ-արևմուտք և հյուսիս-արևմուտք, Պարշա-Փիրբադիր-Մազգեհ-Կուրան գծից, Բեշաս-Պարաստան-Դագաշ-Գոմելյան-Սիահ Կոլ գծից և Բերդեսպիանից ու Ամին Աբադից հյուսիս էր: Իզիբիա և Արմաիդ ամրոցներով Իզիրտուից ճանապարհը տանում էր Ալլաբրիայի հյուսիս, որտեղից հնարավոր էր անցնել և՛ Կարալլու-Կուլիար, և՛ Ազականանի-Իսաքանդ, այնուհետ՝ արևմուտք՝ Կումուրդա-Գիրդուբարդան և իջնել Պադդիրա-Փիրբադիր (Իզբիայի տեղադրության այլ վարկած տե՛ս ТУ, էջ 79-80): Այս մոտեցումները ցույց են տալիս, որ Իզիրտուն Մահաբադի տեղում էր, որտեղ խաչվում են տարբեր ուղղություններ տանող ճանապարհները (մյուս վարկածները ամփոփ տե՛ս **Գրեկյան Ե.**, 2000, էջ 154-155 և հմպտսխն հղումները):

90 Այլ ընթերցմամբ՝ Շուրդիրու (տե՛ս АВИИУ, 73, ծան. 6):

նրա անունը: Պարսուայի արևելյան հարևանը Սաքքիզի ուղղությամբ Գիզիլ-բունդան էր, որի քաղաքների վրա Սարգոն II-ը վերահսկող էր նշանակել Պարսուաշի կառավարչին: Արևմուտքում Սուլեյմանիեի և Փոքր Զաբի վերին ավազանի ուղղությամբ նրա հարևանը Զամուան էր: Պարշուան և Բուշտուն բազմիցս հիշատակվում են նաև ուրարտական աղբյուրներում, մասնավորապես Իշպուինի և Մենուա արքաների Խառակոնիսի արձանագրությունում տեղեկություն կա **Բարշուայի Մեիշթա, Կուա, Շարիթու և Նիգիբի** քաղաքների գրավման մասին[91]. այս բնակավայրերն ընկած էին Թաթաո գետի ստորին ավազան-Պարշա-Սարդաշտ ուղղությամբ, որոնք գուցե համընկնում են ժամանակակից **Մենիչի ալան**, **Կոհա**, **Շինդարեհ** և **Անդեհպեհ** բնակավայրերին[92]: Մենուայի մեկ այլ՝ Բադնոցի արձանագրությունից իմանում ենք, որ նա Բուշտու է հասել ապստամբած Շաթիրու երկիրը խաղաղեցնելուց հետո[93](վերջինս Ուշնուի արևմուտքում էր՝ Շաթրա լեռան շրջակայքում, որ համապատասխանում է Շաթթուարիա-Շաթթերային[94]): Դայան-Աշշուրը ևս Բուշտու էր արշավել Շաթթուարիայից, ինչը փաստում է, որ Ուրարտուից Բուշտու արշավելու հիմնական երթուղին անցնում էր Ուրմիա լճի հարավարևմտյան ավազանով, որը դուրս էր բերում Փոքր Զաբի ձախափնյակ՝ Պարաստան, իսկ Պարշուա-Պարշա նրանք հասնում էին նաև Ուրմիա լճի հարավային շրջաններով և Թաթաո գետի ավազանով, որով շարժվում էին հարավ, այնուհետ՝ արևմուտք՝ դուրս գալով Փոքր Զաբի ավազան, այստեղից շարժվում հյուսիս՝ վերադառնալով հայրենիք: Մյուս ճանապարհը կարող էր անցնել Մաննայի կենտրոնական շրջաններով՝ Սաուջ Բուլաղ չայի ավազանով, որտեղով նույն Դայան-Աշշուրը Ք.ա. 828 թ. Մալխիսայից հասել էր Պադդիրա և Պարսուա:

Միսսի մարզն ու **Սիրդակկա-Զիրդիակկու ամրոցը** Պարսուաշից հյուսիս էին՝ Մաննայի հարավում: Պարշայից 15 կմ հյուսիս գտնվող ժամանակակից Մուսի և վերջինից 5 կմ հյուսիս-արևմուտք գտնվող Սարդակո բնակավայրերը պահպանել են Մեսի-Միսսի և Սիրդակկա-Զիրդիակկուի անունները. **Պարսուաշ-Պարշայից** Սարգոն II-ը շարժվել է **Միսսի-Մուսիի Սիրդակկա-Սարդակո** ամրոց և կրկին հանդիպել է Ուլլուսունուին ու նրա իշխաններին:

---

91 Տե՛ս **Меликишвили Г. А.,** Урартские клинообразные надписи, М., изд. АН СССР, 1960, (այսուհետ՝ УКН), 24:

92 Մեսիչի ալանը գտնվում է Պարշայից 10 կմ արևմուտք, Կոհան՝ Պարշայի հյուսիսային մերձավորությամբ, Շինդարեհը՝ Պարշայից հյուսիս-արևմուտք, իսկ Անդեհպեհը՝ Պարշայի և Սարդաշտի միջև: Մեիշտան հիշատակվում է նաև Մենուայի Թաշ թեփեի արձանագրությունում (տե՛ս УКН, 29), որը հիմք է տվել ենթադրելու, որ այս քաղաքը գտնվում էր Թաշ թեփեի մոտակայքում, իսկ Պարսուան՝ Ուրմիա լճից հարավ, կամ ենթադրվել երկու Պարսուաների գոյության մասին (ամփոփ տե՛ս, օր., **Грантовский Э. А.**, 2007, էջ 151-163): Սակայն Խառակոնիսի արձանագրությունը հստակեցնում է, որ Մեիշտան Բ/Պարշուայում էր, հետևաբար Մենուան Ուրմիայի հարավից հավանաբար Թաթաոյի ավազանով հասել էր Բ/Պարշուա, այնուհետ ներխուժել Մաննա և վերադարձել ելման վայր: Հավանական է թվում նաև Մեիշտա-Մեսի նույնացման վարկածը (տե՛ս ТУ, էջ 138-140: **Գրեկյան Ե.**, 2001, էջ 7-12):

*93 Տե՛ս **Меликишвили Г. А.**, Урартские клинообразные надписи, II. Открытия и публикации 1954–1970 гг.**,** ВДИ, 1977, N 3 (117), (այսուհետ՝ УКН II), 372, 373:*

94 Շաթիրու-Շաթթերա նույնականության տեսակետն առաջադրել է Ն. Հարությունյանը՝ դա տեղադրելով Զիբարի մոտակայքում (տե՛ս ТУ, էջ 241): Սակայն սա ավելի արևելք էր՝ Մաննա և Բուշտու տանող ճանապարհին:

Հետագա արշավանքն ընթացել է հյուսիսարևելյան ուղղությամբ՝ Մաննայի, Բիթ-Կապսիի[95] և Մեդիայի միջնատարածքով[96] դեպի Զիկիրտուի և Մաննայի սահմանային Պանզիշ ամրոց, որը Սիրդակկայից 30 բերու հեռավորության վրա էր:

Զիկիրտուն հարևան էր Անդիային[97], Ուրարտուի Ուիշիդիշ մարզին, Մաննային, հեռու չէր մեդացիների տարածքներից, Բիթ-Կապսիից, Ալլաբրիայից և Կարալլուից[98]: Սարգոն II-ը շարժվել է Սաքքիզի և Բուքանի միջնատարածքով հյուսիս-արևելք, այնուհետ Ջաղաթուի ավազանով՝ հյուսիս, և դուրս եկել Միանդուաբից հյուսիս-արևելք՝ Ջաղաթուի աջակողմյան Քուրի և Աջիրլու վտակների ավազան՝ Մաննայի հյուսիսարևելյան սահման (Սարդակոյից մինչև նշված շրջանը առաջարկվող երթուղով շուրջ 160-170 կմ է՝ համարժեք 30 բերուի)[99]: Այստեղ՝ Միանդուաբից մոտ 30 կմ հյուսիս-արևելք, Արփադ սարից մոտ 30 կմ արևմուտք է գտնվում **Պարշիքանդ** բնակավայրը, որը հավանաբար համապատասխանում է **Պանզիշին**: Այստեղից ներխուժելով Զիկիրտու՝ Ասորեստանի զորքը վտանգ էր ստեղծել մայրաքաղաք Փարդայի համար. Միտատտի արքան Փարդայի մերձակա Ուաշդիրիկու լեռան լանջերից հետևում էր թշնամու զորքի տեղաշարժին՝ փորձելով իր ուժերով խափանել Փարդայի առումը: Սարգոնն ամրացրել է Պանզիշի պարիսպները, այնտեղ սնունդ կուտակել՝ ապահովելով մատակարարման և հնարավոր նահանջի ճանապարհը: Այնուհետ Միտատտիին պատժելու և թիկունքն ապահովելու համար նա զորքը շարժել է Ուաշդիրիկու, կոտրել զիկիրտացիների դիմադրությունը, գրավել և այրել Փարդան, ապա շարժվել Անդիա, սակայն կես ճանապարհին թեքվել Աուկանե՝ դեմ-հանդիման դուրս գալով Ուաուշի փեշերին դիրքավորված Ուրարտուի դաշնակցային զորքին[100]: Զիկիրտուի մայրաքաղաք **Փարդան** համապատասխանում է Արփադ լեռան հյուսիսարևմտյան փեշերին գտնվող **Արփադ** անվամբ երկու բնակավայրերից մեկին: **Ուաշդիրիկուն** կա՞մ Արփադ լեռն է, կա՞մ Ուչ Մոուձեն. նրանց միջև գտնվող **Յասթուքանդ** բնակավայրը հավանաբար պահպանել է Ուաշդիրիկուի անունը: Ըստ այդմ՝ Պանզիշ-Պարշիքանդից Սարգոնը շարժվել է հյուսիսարևելյան, ապա հյուսիսային ուղղությամբ:

---

95 Բիթ Կապսին Պարսուաշից և Մուսից հյուսիս-արևելք էր՝ Մաննայի և Մեդիայի միջև, Զիկիրտուից հարավ-արևմուտք, հավանաբար ժամանակակից Բուքանի շրջակայքում:

96 Մեդիայի տեղադրությունն ամփոփ տե՛ս, օր., **Dandamayev M. and Medvedskaya I.**, MEDIA, EL, 2006:

97 Անդիան ընկած էր Զիկիրտուից արևելք և հյուսիս-արևելք՝ Կասպից ծովի ուղղությամբ (տե՛ս, օր., **Ադոնց Ն.**, 1972, էջ 103: ՏՎ, էջ 28**: Медведская И. Н.**, 2007, էջ 34):

98 Ուսումնասիրողները Զիկիրտուն տեղադրել են Ուրմիա լճից արևելք, հարավ-արևելք (տե՛ս **Thureau-Dangin F.**, 1912, էջ V-VII: **Ադոնց Ն.**, 1972, էջ 103**,** ՏՎ, էջ 80-81), հարավ-արևմուտք (տե՛ս **Հակոբյան Ա.**, 2014, էջ 52, 55-56), Թաթաո գետի ստորին ավազանում կամ Բիջարից հյուսիս-արևմուտք (տե՛ս **Levine L. D.**, 1974, էջ 105, գծպ. 2, 115: Նույնի՝ 1977, էջ 141), Կասպից ծովի հարավարևմտյան մերձավորությամբ՝ Կիզիլ ուզուն գետի ավազանում (տե՛ս **Reade J. M.**, 1978a, էջ 140-141, գծպտկ. 2):

99 Ն. Ադոնցը այս հեռավորությունը նշում է մոտ 165 կմ (տե՛ս **Ադոնց Ն.**, 1972, էջ 106, ծան.1), Ի. Դյակոնովը՝ 200 կմ-ից քիչ ավելի (տե՛ս ԱՎԻՍ, 49, ծան. 29):

100 Անդիայի արքան ևս միացել էր Ռուսա I-ին, և Սարգոն II-ի Անդիա արշավելու պարագայում դաշնակիցները կարող էին թիկունքից հարվածել նրան. Սարգոնը որոշել է ինքը նախահարձակ լինել:

Աուկանեն Մաննայից խլված Ուրարտուի Ուիշդիշի մարզի սահմանին էր, Ուաուշ լեռան մերձավորությամբ: Սոհենդից հարավ-արևելք, Մարաղայից 32 կմ արևելք, Արփադից 30 կմ հյուսիս-արևմուտք, Պանզիշից 38 կմ հյուսիս, Քարանգու, Քուրի և Սարաչու գետերի միջնատարածքում են գտնվում ժամանակակից Վերին և Ստորին **Արգուն** բնակավայրերը, որոնք պահպանել են **Աուկանե** զիկիրտական շրջանի և բնակավայրի անունը: Աուկանե-Արգուն համապատասխանությունը փաստվում է նաև Փարդայից Աուկան ընկած զիկիրտական բնակավայրերի տեղադրությամբ. դրանք ընկած էին Արգունից հարավ-արևելք՝ ժամանակակից Իրանական երկաթուղու շրջակայքում: Մասնավորապես Արփադից հյուսիս-արևելք գտնվող **Իշլաքանդ**, **Չակթիր** և **Նազար Քարեզ** բնակավայրերը հավանաբար պահպանել են **Իշտաիպպու**, **Սակտատուշ** և **Նենզու** բնակավայրերի անունները**:** Արգունից հարավ և հարավ-արևելք գտնվող **Չեբանի**, **Դորսու**, **Աբլախ**[101]**, Բաբա Կուր Կուր, Զուլգադար, Տաստաբար** ժամանակակից բնակավայրերի անունները, ըստ հերթականության, հավանաբար սերում են **Կաբանի**, **Գուրրուսուպու, Բարունակկու, Ուբաբարու, Սիտերու, Տաշտամի** տեղանուններից, իսկ **Տեսամմիյուի** անունը հավանաբար պահպանել են **Սումա** կամ **Սումա Ուլյա** բնակավայրերը[102]**:** Ըստ այդմ՝ Սարգոն II-ի բանակը **Փարդա-Արփադից Աուկանե-Արգուն** է հասել **Իշտաիպպու** (**Իշլաքանդ**), **Սակտատուշ** (**Չակթիր**), **Նենզու** (**Նազար Քարե՞զ**) երթուղով՝ Արփադից հասնելով Քարանգուի աջափնյա Շոր գետի վերին ավազան, թեքվել է արևմուտք, հասել Արգուն, ընթացքում ասպատակել **Կաբանի** (**Չեբանի**), **Գուրրուսուպու** (**Դորսո՞ւ**), **Բարունակկու** (**Աբլա՞խ**), **Ուբաբարու** (**Բաբա Կուր Կուր**), **Սիտերու** (**Զուլգադա՞ր**), **Տաշտամի** (**Տաստաբար**), **Տեսամմիյու** (**Սումա** կամ **Սումա Ուլյա**) բնակավայրերը[103]: Աուկանե-Արգունում ավարտվել է Սարգոն II-ի մաննայական արշավանքը, և նրա զորքը մտել է Ուրարտուի Ուիշդիշ մարզ:

Այսպիսով՝ Սարգոն II-ի Ք.ա. 714 թ. արշավանքի մաննայական երթուղին անցել է ոչ թե Մաննայի հարավային, արևելյան, հյուսիսային կամ հյուսիսարևելյան, այլ արևմտյան, հյուսիսային, արևելյան և հարավային շրջաններով, որտեղից Սարգոնի զորքը հասել է մաննա-զիկիրտական սահման՝ Պանզիշ—Պարշիքանդ, ապա Փարդա-Արփադով և Շոր գետի ավազանով թափանցել Սոհենդ լեռան հարավարևելյան մերձակայք՝ Աուկանե-Արգուն:

101 Աբլախ անունով 2 բնակավայր կա՝ մեկը Դորսուի մոտակայքում է, մյուսը՝ վերջինից հյուսիս-արևելք:
102 Սուման գտնվում է Չեբանիի և Արգունի միջև, իսկ Սումա Ուլյան՝ Արգունից հյուսիս-արևելք:
103 Զիկիրտուի սահմանը հարավում ձգվում էր Պարշիքանդ-Արփադ լեռ գծով, հյուսիսում՝ Քարանգու գետի աջակողմյան ավազանով, արևմուտքում՝ Քուրի չայի ավազանով:

II. Ուրարտական արշավանք

Ա. Ուիշդիշ, Սուբի, Զարանդա, Բարի և Դալայա

Ուիշդիշը Զիկիրտուի, Մաննայի և ուրարտական Սուբի մարզի միջև էր, Աուկանե-Արգունից արևմուտք և հյուսիս-արևմուտք, Ուրմիա լճի հարավարևելյան և արևելյան ափամերձ տարածքում[104]: Ֆ. Թյուրո-Դանժենը Ուաուշ լեռը նույնացրել է ժամանակակից Սոհենդին. Փարդա-Արփադ և Աուկանե-Արգուն համադրումները հաստատում են այս տեսակետը. Սարգոն II-ի զորաբանակը հասել էր Սոհենդի հարավարևելյան մերձակայք, Մարաղայից արևելք, և Ռուսա I-ը Ուրարտու ներխուժումը խափանելու և վճռական ճակատամարտ տալու համար իր ուժերը հավանաբար կենտրոնացրել էր Մարաղայի և Սոհենդ լեռան միջնատարածքում:

Ուշկայա ամրոցի, Մալլաու լեռան և Զարանդայի տեղորոշումները հստակեցնում են Ուիշդիշի սահմաններն ու Սարգոն II-ի արշավանքի ուղղությունը: Է. Ռայթը կարծում է, որ Ուշկայան համապատասխանում է ժամանակակից **Օսկու** (Ուսկի) քաղաքին[105], որը Ուրմիա լճի հյուսիս-արևելքում է, Սոհենդից հյուսիս-արևմուտք, Թավրիզից 17 կմ հարավ-արևմուտք: Ուշկայան Սուբի մարզում էր՝ Մալլաու լեռան փեշերին, Զարանդա տանող ճանապարհին: Ուշկայա-Օսկու նույնականությունը հաստատում են Օսկուի հյուսիսային հարևանությամբ գտնվող ժամանակակից **Միլյան (Միլան)** և մոտ 3 կմ հյուսիս-արևելք գտնվող **Սահանդ** բնակավայրերը, որոնք պահպանել են **Միլլաուի** և **Զարանդայի** անունները: Ուշկայա-Օսկու, Միլլաու—Միլյան, Զարանդա-Սահանդ համադրությունները լրացուցիչ հաստատում են նաև Ուաուշ-Սոհենդ նույնականությունը: Ուիշդիշը ընկած էր Օսկուի, Սոհենդի, Արգունի, Միանդուաբի և Ուրմիա լճի միջև[106]. այն հարավից սահմանակցում էր Մաննային, հյուսիսից՝ ուրարտական Սուբի մարզին, հարավ-արևելքից՝ Զիկիրտուի Աուկանի շրջանին, հարավ-արևմուտքից՝ Սոլդուզի ուրարտական տարածքներին[107]:

---

104 Ֆ. Թյուրո-Դանժենը Ուիշդիշը տեղադրել է Ուրմիա լճի արևելքում, Ն. Ադոնցը՝ հարավում: Ուիշդիշի համար Ք. ա. 716 թ. ևս բախումներ էին եղել Ուաուշի փեշերին, սակայն Մաննային և Ասորեստանին չէր հաջողվել այն հետ վերցնել Ուրարտուից (տե՛ս ARAB II, 10, 56: АВИИУ, 46 (52)):

105 Տե՛ս **Wright E.**, 1943, էջ 183: Այս տեսակետը ընդունել են նաև Ի. Դյակոնովը (տե՛ս АВИИУ, 49, ծան. 41), Ն. Հարությունյանը (տե՛ս **Арутюнян Н.,** 1970, էջ 302, ծան. 513), Ա. Չիլինգիրօղլուն (տե՛ս **Çilingiroğlu A.**, 1977, էջ 259, ծան. 50): Հմմտ. **Zimansky P.**, 1990, էջ 15, ծան. 50:

106 Ուշկայան և Ուիշդիշը նույնացվել են Արգիշտի I-ի Բուշտու կատարած արշավանքի ժամանակ հիշատակվող Աշկայային և Ուգիշտիին (տե՛ս УКН, 127 IV 54-55, 128 B2 25-26): Ի. Մեդվեդսկայան կարծում է՝ արքան Աշկայա և Ուգիշտի է մտել Բուշտուից վերադառնալիս՝ Սարգոնի երթուղին ուղեգծելով Ուրմիայի արևմտյան ափով (տե՛ս **Медведская И. Н.**, 1989, էջ 107): Սակայն հավանաբար նախ նշվում է արշավանքի ուղղությունը՝ Բուշտուն, այնուհետ՝ ճանապարհը. հնարավոր է նաև՝ այս տեղավայրերը գտնվեն Բուշտուից հարավ կամ հյուսիս և կապ չունենան Ուշկայայի և Ուիշդիշի հետ:

107 Գիտության մեջ արտահայտվել է կարծիք, որ Սարգոն II-ը չէր կարող Ուրմիա լճի արևելյան հատվածով ներխուժել Ուրարտու, որովհետև այստեղ ուրարտական հնավայրեր և նյութ չեն գտնվել: Սակայն առկա է հնագիտական տվյալների և Սարգոն II-ի հիշատակությունների համապատասխանություն, այլ ոչ թե հակասություն. Սարգոն II-ը նշում է, որ Ուիշդիշը մաննայական էր, և Ռուսան էր դա խլել, հետևաբար Ուրարտուն դա չէր յուրա-

Սուբի մարզը հավանաբար տարածվել է Ուշկայա-Օսկուից ու Միլ-լաու-Միլյանից հյուսիս՝ Ուրմիա լճի հյուսիսարևելյան ափամերձ տարածքներ և Սուֆիան գետի ավազան. վերջինիս անունը հավանաբար ժառանգվել է Սուբիից[108]:

Զարանդա-Սահանդ ուրարտական մարզը գտնվում էր Ուշկայա-Օսկուի, Սանգիբուտուի Անիաշտանիա ամրոցի և Բարի շրջանի հարևանությամբ՝ հարավում՝ հավանաբար տարածվելով մինչև Սոհենդ լեռ. սեպագրական Ուաուշն իր Սոհենդ-Սահանդ անվան համար հավանաբար պարտական է հենց Զարանդային: Սարգոն II-ի զորքի անցումը Սուբիից Սանգիբուտուի Բարի շրջան իրականացվել է Զարանդայի հյուսիսային հատվածով[109]:

Բարու/ի շրջանը, որը պատկանում էր Սանգիբուտու մարզին, Ուշկայայի և Զարանդայի արևելքում էր. ժամանակակից Բարե բնակավայրի գոյությունը Թավրիզի հարավում[110] ենթադրել է տալիս, որ Ուշկայայից, Միլլաուից և Զարանդայից ասորեստանյան զորքը շարժվել է այստեղ: Թավրիզի հյուսիսով հոսող Թալեհ Ռուդ գետի աջակողմյան վտակներից Բարուշը, որ սկիզբ է առնում Սոհենդի հյուսիսային փեշերից և հոսում է Թավրիզի միջով, ևս պահպանել է Բարուի անունը:

Անիաշտանյա ամրոցը, որ Սանգիբուտուի սահմանին էր՝ Ուշկայայի, Բարիի և Թարմակիսուի միջև, կարող է համապատասխանել Սահանդից արևելք գտնվող ժամանակակից **Անարջան** կամ **Ասինջան** բնակավայրերին:

Այս տեղորոշումները հաստատում են Թարմակիսուի՝ Թավրիզի շրջակայքում գտնվելու կամ վերջինիս համընկնելու վարկածը[111]: Ասորեստանյան զորքը ավերել է Թավրիզից հարավ և հարավ-արևելք գտնվող Բարի շրջանը, որը դալացիների երկրի հարևանությամբ էր, և Թարուի ամրոցը գրավելուց հետո մտել Թավրիզ: Թարուին և Թարմակիսուն արդեն դալացիների երկրում էին:

Թարուի ամրոցը Թավրիզի և Բարուշ գետի ավազանի մերձավորությամբ էր՝ գուցե համապատասխանելով Թոյկաուն ժամանակակից բնակա-

---

ցրել այնպես, ինչպես լճի հարավային և արևմտյան շրջանները, որոնք հարյուր տարուց ավելի Ուրարտուի կազմում էին:

108 Սուբի-Սուֆիան նույնականության զուգահեռը Սունբի-Սուֆիանն է: Է. Ռայթը Սուբին կապում է Սուֆիան բնակավայրի հետ՝ տեղակայված Թավրիզի և Մարանդի միջև (տե՛ս **Wright E.**, 1943, էջ 184): Այս պարագայում Սուբին պետք է տարածվեր Օսկուից Սուֆիան՝ Սանգիբուտուն բաժանելով Բարիից: Կստացվի, որ Սուբին, ինչպես Բարին, Սանգիբուտուի շրջաններից էր, սակայն այս մոտեցումը հաստատող որևէ այլ կռվան գոյություն չունի: Հնարավոր է, որ Սանգիբուտուի վարչական սահմանները կառուցած լինեին այնպես, որ նա տրոհեր մանացիներով բնակեցված Սուբիի տարածքը:

109 Զարանդան նույնացվել է նաև պատմական Մեծ Հայքի Զարևանդ գավառին (տե՛ս **Ադոնց Ն.**, 1972, էջ 109-110), ինչպես նաև Մարանդին (տե՛ս **Zimansky P.**, 1990, էջ 15):

110 Տե՛ս ТУ, էջ 54:

111 Տե՛ս **Thureau-Dangin F.**, 1912, էջ VIII: АВИИУ, 49, ծան. 47: Այս վարկածը ընդունվել է արշավանքը Ուրմիա լճի արևելյան ավազանով ուղեգծող գիտնականների կողմից:

վայրին՝ տեղակայված Թավրիզից 11 կմ արևելք, Բարուշ և Թալեհ Ռուդ գետերի միջնամասում:

Թարմակիսու–Թավրիզ նույնականությունը հաստատվում է նաև Սանգիբուտուի **Սարդուրիխուրդա ամրոցի** և **Ուլխու** երկրագործական քաղաքի տեղորոշմամբ. այս տեղավայրերը Սարգոն II–ը գրավել է Թարմակիսուից հետո: Թավրիզից հարավ–արևմուտք է գտնվում ժամանակակից Սարդ(ա)ռուդ բնակավայրը, որը հավանաբար Սարգոն II–ի գրված Սարդուրիխուրդան է[112]: Նրանից շուրջ 7–8 կմ հարավ–արևմուտք է գտնվում ժամանակակից Ախուլու/ա բնակավայրը, որը համապատասխանում է Ուլխուին[113]: Սարդուրիխուրդան, ըստ Սարգոնի, կառուցվել էր Ուլխուն պաշտպանելու համար: Ռուսան այստեղ ջրանցք էր կառուցել և հիմնել այգիներ, որոնք ավերվել են Ասորեստանի զինվորների կողմից: Այսօր ևս Սարդրուդն ու Ախուլան աչքի են ընկնում այգիներով և մշակովի հողատարածքներով:

Դալայան Թավրիզի և **Թոյկաունի** շրջակայքում էր. Սանգիբուտուի Սարդուրիխուրդա–Սարդարուդ, Ուլխու–Ախուլու բնակավայրերն ու Բարի–Բարե շրջանը Դալայայի սահմանին էին, որին շրջապատում էին արևմուտքից, հարավ–արևմուտքից և հարավից: Դա նշանակում է՝ **Դալայան** տարածվում էր Թավրիզից հյուսիս և արևելք՝ **Թալեհ Ռուդի** ավազանում: Այս գետը հավանաբար պահպանել է Դալայայի անունը:

Այսպիսով՝ Սարգոն II–ի զորքը **Աուկանեից** (**Արգուն**) անցել է **Ուաուշ լեռան** (**Սոհենդ**) հարավարևմտյան շրջան, այնուհետ **Սոհենդի** և **Ուրմիա լճի** միջնատարածքով՝ **Ուիշդիշով**, հասել **Սուբի** (**Սուֆիան**) մարզի հարավում գտնվող **Ուշկայա** (**Օսկու**) ամրոց՝ **Միլլաուից** (**Միլյան**) հարավ, **Զարանդայով** (**Սահանդ**) անցել **Անիաշտանիա** (**Անարջան** կամ **Ասինջան**) և շարժվել է **Բարեի** ուղղությամբ՝ **Բարուշ** գետի ավազան՝ **Սանգիբուտուի** մարզի **Բարի** շրջան, այնուհետ շարժվել հյուսիս՝ **Թալեհ Ռուդ** գետի ուղղությամբ՝ **Դալայա**, գրավել **Թարուի** (**Թոյկաուն**) ամրոցը, շրջվել արևմուտք ու մտել **Թարմակիսու** (**Թավրիզ**), այստեղից շարժվել **Սարդուրիխուրդա** (**Սարդարուդ**) և **Ուլխու** (**Ախուլու**):

---

112 «Սարդ(ա)ռուդը» կազմված է պարսկերեն *սարդ* «սառը» և *ռուդ* «գետ» բառերից (տեսակետը իրանագետ Սարգիս Մկրտչյանինն է): Սա, թերևս, մշակութային հետագա ազդեցությունների արդյունք է. Սարդուրիի անունը մոռացվել է, և տեղացիները «Սարդուրիխուրդան» ընկալել են «սառը գետ» իմաստով: Նման մշակութային ազդեցությունների և ձևափոխությունների են ենթարկվել, օր., Խունդուրնա>Կունդուր>Կունդրուդ, Դալայա>Թալեհ Ռուդ, Սինիխինի>Շին-Աբադ, Պանզիշ>Պարշի-Քանդ, Մալխիսա>Մալլաիսա>Մոլլա Իսա, Ախշուրու>Շահուր-Քանդ, Իզիբիա>Բերդ-Էսպիան տեղանունները: Այսպիսի օրինակները բազմաթիվ են նաև արդի ժամանակներում, երբ այլազգիները տեղանունը փոխարինում են իրենց լեզվի որևէ նման հնչեղություն և իմաստ ունեցող բառ(եր)ով:

113 Ուլխուի տեղադրության վարկածները ամփոփ տե՛ս **Muscarella O. W.**, 2012:

Բ. Սանգիբուտու

Ուրարտական այս ընդարձակ մարզը սկսվում էր Զարանդայի և Դալայայի հարևան Անիաշտանյա ամրոցից, Բարի շրջանից, Սարդուրիխուրդա ամրոցից և Ուլխու քաղաքից, այսինքն՝ Սահանդի, Թավրիզի և Սոհենդ լեռան միջնատարածքից ձգվում էր հյուսիսարևմտյան ուղղությամբ[114]: Սանգիբուտուի բնակավայրերը Թավրիզ–Սարդարուդ–Ախուլու գծից հյուսիս և հյուսիս–արևմուտք էին՝ Մարանդ–Կոտուր գծից հարավ: Ախուլուի հյուսիս–արևմուտքում են գտնվում **Սիզ** (Սիս) և **Կունդուր** (Կունդրուդ) ժամանակակից բնակավայրերը, որոնք համապատասխանում են **Շաշզիսսա** և **Խունդուրնա**[115] բնակավայրերին. **Ուադնաունզան** և **Արացուն**, հավանաբար, ժամանակակից **Վանզա** և **Էրսի** բնակավայրերն են՝ տեղակայված Մարանդից հարավ–արևմուտք, իսկ **Շադիշցինիա**, **Էլյադինիա** և **Կինաշտանիա** բնակավայրերը համապատասխանում են ժամանակակից **Զենջիրա**, **Վալդիան** և **Կանիան (Կենիանի)** բնակավայրերին, որոնք հաջորդաբար ընկած են Վանզայից և Էրսիից հարավ–արևմուտք: Այս տեղորոշումները հաստատում են գիտության մեջ առաջադրված **Սանգիբուտու–Գաբիթյան** նույնականացման վարկածը[116]. Գաբիթյանը պատմական Մեծ Հայքի Վասպուրական նահանգի գավառներից էր, որը գտնվում էր Ուրմիա լճի հյուսիս–արևելքում և հյուսիսում[117]: **Շաշզիսսա** (**Սիզ**)–**Խունդուրնա** (–**Կունդուր**)–**Ուադնաունզա** (**Վանզա**)–**Արացու** (**Էրսի**)–**Շադիշցինիա** (**Զենջիրա**)–**Էլյադինիա** (**Վալդիան**)–**Կինաշտանիա** (**Կենիանի**) երթուղին անցնում է ժամանակակից **Մեշոու դաղ** լեռնաշղթայի արևելյան, հյուսիսային և արևմտյան փեշերով, ինչից բխում է, որ **Արցաբիա լեռը** Մեշոու դաղն է. վերջինս ձգվում է Ուրմիա լճի հյուսիսային ափի ողջ երկայնքով: Սա Թեսուջ–Վանզա ձգվող ձորով բաժանվում է երկու մասի. այս իջվածքը, հավանաբար, բնական սահման է հանդիսացել պատմական Մեծ Հայքի **Տագրյան** և **Գաբիթյան** գավառների միջև: Հնարավոր է, որ Սարգոն II–ի հիշատակած **Սանգիբուտու–Գաբիթյանի** Արցաբիա լեռը լինի Մեշոու դաղի արևելյան հատվածը, իսկ Իրտիան՝ Տագրյանի հատվածը՝ չբացառելով **Իրտիա–Տագրյան** անվանական կապը[118]: Սիզից ու Կունդուրից մինչև Վալ–

---

114 Ուրարտացիները Սանգիբուտուի հարավարևելյան վարչական սահմանը, կարծեք, գծել էին այնպես, որ նա տրոհի մանայացիներով բնակեցված Սուբին երկու մասի, ինչպես նաև Սուբին, Զարանդան՝ Բարի շրջանով, բաժանվի Դալայայից: Սա, թերևս, արվել էր օտարներով բնակեցված և համեմատաբար նոր նվաճված տարածքների վրա արդյունավետ հսկողություն իրականացնելու և նրանց միասնությունը տրոհելու նպատակով:

115 Սարգոն II-ը նշում է Վերին և Ստորին Խունդուրնաների մասին. Կունդուրը հավանաբար Վերին Խունդուրնան է:

116 Տե՛ս **Կատվալյան Մ.**, Ուրարտու (Արարատյան թագավորություն): // «Հայկական սովետական հանրագիտարան», հատ. 13, Եր., «Հայ սովետական հանրագիտարան» հրատ., 1987, էջ 93:

117 Սանգիբուտու-Գաբիթյանից է հավանաբար առաջացել Ուրմիա լճի հայկական Կապուտան անունը (տե՛ս **Երեմյան Ս.**, 1963, էջ 46: **Հարությունյան Բ.**, Մեծ Հայքի Վասպուրական աշխարհը ըստ «Աշխարհացույցի», «ԲԵՀ», Եր., 1983, N 3 (51), (այսուհետ՝ **Հարությունյան Բ.**, 1983) էջ 123):

118 Այս գավառների տեղադրության մասին տե՛ս, օր., **Հարությունյան Բ.**, 1983, էջ 123-124:

դիան և Կանիան շուրջ 80–90 կմ է, որը համապատասխանում է Արցաբիայից Իրտիա նշվող 12 բերու հեռավորությանը[119]: Սանգիբուտու-Գաբիթյանում Արցաբիա-Մեշոու և Իրտիա-Տագրյան լեռների արևելյան, հյուսիսային և արևմտյան լանջերին ուրարտացիները կառուցել էին ամրոցների համակարգ, որոնք կրակներով զգուշացնում էին թշնամու մոտենալու մասին, իսկ շրջակա բնակավայրերի բնակիչներն ապաստան էին գտել այդ ամրոցներում՝ հետևելով իրենց ծաղկուն բնակավայրերի թալանին և ավերածություններին:

Այսպիսով՝ Սանգիբուտուն տարածվում էր Թավրիզի և Սոհենդի միջնատարածքից Սարդրուդ-Ախուլու-Սիզ-Կունդրուդ ուղղությամբ, հյուսիսում հասնում Վանզա, Էրսի, Ձենջիրա, իսկ արևմուտքում՝ Վալդիան և Կանիան՝ ընդգրկելով պատմական Գաբիթյան և Տագրյան գավառների տարածքը՝ հարակից որոշ շրջաններով: Կանիանի մոտ բանակելուց հետո Սարգոնը մտել է Արմարիալի՝ Ուրարտուի արքայատան ժառանգական ոստան:

Գ. Արմարիալի

Սարգոն II-ի զորքը, Սանգիբուտուն արևելքից արևմուտք անցնելով, հասել էր Սալմասի և Խոյի միջնատարածք և Արմարիալիով ծովափ կարող էր դուրս գալ արևմուտք կամ հարավ շարժվելով[120]: Սանգիբուտուի վերջին՝ Կինաշտանիա (Կանիան) բնակավայրից 4–5 կմ արևմուտք է գտնվում ժամանակակից **Բոբարզան** բնակավայրը, որը համապատասխան է Սարգոն II-ի հիշած **Բուբուզիին**: Նրանից մոտ 3 կմ արևմուտք է գտնվում ժամանակակից **Հոդար** բնակավայրը, որը հավանաբար **Խունդուրն** է[121]: **Այալեն** ժամանակակից **Ալերին** է՝ տեղակայված Մեծ Զաբի (Աղբակ) վերին հոսանքի ձախափնյակում՝ Հոդարից մոտ 17 կմ հարավ-արևմուտք, Հերավիլ դաղի հյուսիսարևմտյան լանջերին: **Ծինիշպալան**, հավանաբար, **Կանի Սպի** բնակավայրն է՝ տեղակայված Ալերիից հարավ-արևմուտք՝ Աղբակ գետի աջ ափին: **Առնան** նույնական է պատմական Մեծ Հայքի Պարսկահայք նահանգի **Առնա-Ըռնա** գավառին, որը գտնվում էր Տագրյան և Մեծ Աղբակ գավառների միջև, Ուրմիա լճից հյուսիս-արևմուտք: **Շարնին**, հավանաբար, **Սորադիր-Զորադիր** (**Սուրաի Դար**) բնակավայրն է՝ տեղակայված Աղբակ գետի աջափնյակում՝ Կանի Սպիից հարավ: **Արբուն** համապա-

119 Իրտիան նույնացվել է Սալմանասար III-ի Ք.ա. 856 թ. արշավանքի ժամանակ հիշատակվող Էրիտիա լեռանը (տես **Ադոնց Ն.**, 1972, էջ 86), սակայն այն Արամալե-Արմարիալից հյուսիս-արևմուտք էր, իսկ Իրտիան՝ արևելք:

120 Կապված Սարգոն II-ի արշավանքի տարբեր գծագրումների հետ՝ Արմարիալին տեղադրվել է Վանա լճից հյուսիս-արևելք, արևելք, Ուրմիա լճից հյուսիս-արևմուտք և հարավ-արևմուտք:

121 Խունդուր-Հոդարը հավանաբար նույնական է Թիգլաթպալասար I-ի Ք.ա. 1112 թ. նաիրյան արշավանքի ժամանակ հիշտակվող Կի(ն)դարիին (տես АВИИУ, 10 (IV, 43), այլ ընթերցմամբ՝ Դարդարու (տես RIM 2, A.0.87.1 (iv50)):

տասխանում է պատմական Մեծ Հայքի Մեծ Աղբակ գավառի **Արեբանոս** (Արեվբանի) քաղաքին, որը հայկական Սուրբ Բարդուղիմեոս վանքի շրջակայքում էր՝ Բաշկալայից հյուսիս-արևելք, ժամանակակից Ալբայրաքի մոտակայքում[122]: **Ռիարը** ժամանակակից **Ռավյանն է**՝ ընկած Հոդարից 12 կմ հյուսիս-արևմուտք[123]: Ստացվում է՝ **Ուբիանդա** լեռը, որի փեշերին էին այս բնակավայրերը, **Հերավիլ դաղն** է:

Բուբուզի (Բոբարզան)-Խունդուր (Հոդար)-Ռիար (Ռայան)-Այալե (Ալերի)-Ծինիշպալա (Կանի Սպի), Շարնի (Սորադիր)-Առնա (Առնա, Ըռնա)--Խալդիի տաճար (Սուրբ Բարդուղիմեոս վանքի տեղում)-Արբու (Արեվբանի, Արեբանոս) համադրումները փաստում են, որ Արմարիալի մարզն ընկած էր Սանգիբուտուից արևմուտք և հարավ-արևմուտք, Մեծ Զաբի վերին ավազանում՝ համապատասխանելով պատմական Մեծ Հայքի Մեծ Աղբակ և Առնա գավառների տարածքին: Արմարիլիի այս տեղադրությունը փաստվում է նաև Սալմանասար III-ի Ք.ա. 856 թ. արշավանքի հիշատակություններով. Սալմանասար III-ը Արամալի էր ներխուժել Արզաշկուից (Արձեշ կամ Արձիշակ) Ուրմիա լիճ շարժվելու ճանապարհին՝ անցնելով Արզաշկու-Էրիտիա լեռ-Արամալի քաղաք-Զանզիունա քաղաք-Նաիրի երկրի ծով երթուղով: Վանա լճի արևելյան շրջաններով Ուրմիա լճի հյուսիսարևմտյան ծովափ հասնելու համար Սալմանասարն ակնհայտ մտել է Մեծ Աղբակի տարածք և դուրս եկել Սալմասի արևմտյան շրջան՝ պատմական Մեծ Հայքի Պարսկահայք նահանգի Զարեհավան (Զարիվան) գավառի և բնակավայրի տարածք (Զանզիունա), և իջել Ուրմիա լիճ՝ Զոլա գետի գետաբերանի մոտակայք, այնուհետ անցել է Գիլզանու և Խուբուշկիա: Ակնհայտ է՝ Արմարիալի-Արամալին Ուրմիա լճից հյուսիս-արևմուտք էր, Արձեշից և Արձիշակից՝ հարավ-արևելք, Գիլզանուից՝ հյուսիս, Գաբիթյանից և Տագրյանից՝ արևմուտք՝ Ուրմիա և Վանա լճերի միջնատարածքում՝ Մեծ Զաբի վերին ավազանում, հյուսիս-արևելքում հասնելով Բոբարզան, հյուսիսում՝ Ռավյան, իսկ հարավում՝ առնվազն մինչև Ալբայրաք[124]:

---

122 Տեղադրությունը ամփոփ տե՛ս «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», հատ. 1, Եր., Եր. համ. հրատ., 1986, էջ 424: Հայկական աղբյուրներում դա առաջին անգամ հիշատակվում է «Հայսմավուրքում» (V-XV դդ.) և Մովսես Խորենացու «Հայոց պատմությունում» (V դ.) (տե՛ս **Մովսես Խորենացի**, Պատմություն Հայոց, Եր., «Հայաստան» հրատ., 1968, էջ 169): Արբու-Արեբանոս (Արեվբան, Արեվբանի) տեղանունները կապված են Արուբանի (Ուարուբա(ի)նի) աստվածուհու հետ. վերջինս Խալդի աստծու կինն էր: «Աղբակը» հավանաբար ևս սերվել է «Արուբանի»-ից և «Արբու-Արեվբանի»-ից՝ փոխարինելով «Արմարիալիին» (տե՛ս **Սարգսյան Ա.**, 2000, էջ 144, ծան. 56): Սարգոն II-ի ավերած Խալդիի տաճարը հավանաբար Սուրբ Բարդուղիմեոսի վանքի տեղում էր, որտեղ եղել է նաև Արուբանիի պաշտամունքը որպես արքայատան օջախի պահապան դիցուհի:

123 Ասորեստանցիները հավանաբար Ռիար-Ռավյան են մտել Հոդարից Ալերի շարժվելու ընթացքում, իսկ Արբուն և Ռիարը միասին նշելիս Սարգոն II-ը նկատի է ունեցել դրանց՝ արքայատան բնակավայրեր լինելու հանգամանքը:

124 Արմարիալին հավանաբար ընդգրկել է նաև Բաշկալան (Հադամակերտ): Մեծ Աղբակը Վան-Վասպուրականի տերեր Արծրունիների հայ նախարարական տան ժառանգական տիրույթն էր՝ Հադամակերտ կենտրոնով: Այստեղի Օսի գյուղի Սուրբ Խաչ վանքում էր նրանց տոհմական գերեզմանոցը: Արծրունիներն այս գավառը ժառանգաբար հանձնում էին ընտանիքի կրտսեր որդուն: Այս ավանդույթը, ակնհայտ է՝ ժառանգել էին Ուրարտուի արքաներից. նրանց ընտանիքի անդամները ևս բնակվում էին մայրաքաղաքից դուրս՝ Արմարիալի-Աղբակի Արբու և Ռիար բնակավայրերում, որոնք ևս փոխանցվել են ժառանգաբար: Ըստ պատմ. գիտ. դոկտոր Արտակ Մով-

Այսպիսով՝ Սարգոն II–ը Բոբարգան–Հոդար–Ռավյան երթուղով հասել է Մեծ Զաբի վերին ավազան (Աղբակ) և ասպատակել այս գետի աջ և ձախ ափերին ընկած բնակավայրերը մինչև ժամանակակից Ալբայրաք:

Արմարիալիի մյուս հարևանը Ուրարտուի ծովափնյա Այադու մարզն էր, որտեղ Սարգոն II–ը թափանցել է Արբուի և նրա շրջակա բնակավայրերի առումից հետո:

Դ. Այադու

Այադուն գիտնականները տեղադրել են Վանա լճի հյուսիսային, արևելյան, հարավարևելյան և հարավային ափամերձ տարածքներում, դա նույնացվել է Ախթամարի ուրարտական արձանագրությունից հայտնի Աիդունիին[125], պատմական Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Հայոց ձոր գավառին՝ Խոշաբի ավազանում[126] և Գյավաշին[127] (պատմ. Ռշտունիքի տարածք): Այադուն տեղակայվել է նաև Ուրմիա լճի արևմտյան ափին՝ ելնելով Սարգոն II–ի արշավանքի երթուղու՝ Ուրմիա լճի ավազանի շուրջ վերակառուցումների վարկածներից[128]:

Սարգոն II–ը հասել էր Բաշկալայի հյուսիսարևելյան մերձակայք՝ Վանա և Ուրմիա լճերի միջնատարածք, որտեղից այդ լճերի ամենամոտ ափերը գրեթե միևնույն հեռավորության վրա են և այդ երկու հավանական տարածքներից էլ կարելի է իջնել Վերին Զաբի ավազանում գտնվող Նաիրի–Խուբուշկիա, այնուհետ՝ Մուսասիր և Ասորեստան:

Ախթամարի ուրարտական արձանագրությունն այն ամուր կռվանն է, որը հստակեցնում է Այադուի տեղադրությունը Վանա լճի հարավարևելյան մերձակայքում: Այադու–Աիդունի–Հայոց ձոր տեղանունների կապն ակնառու է, որն առաջնային է դարձնում Այադուի տեղորոշումը Խոշաբի ավազանում և Գյավաշում: Այադուի 30–ից ավելի տեղավայրերի տեղորոշումը հաստատում են այս վարկածը:

Սարգոն II–ի զորաբանակը ժամանակակից Ալբայրաքի շրջակայքից շարժվել է արևելք՝ **Արինդիի (Անզալիա՞)** ուղղությամբ և **Բաշադ լեռան (Ուիզուկո՞ւ)** հարավային փեշերով հասել ժամանակակից **Կանգավար**–**Կանգուար** (**Կուայաին**), այնուհետ **Կորանդաշտ**–**Գյորանդաշտի**[129] (**Կալլա**–

սիսյանի՝ Ուրարտուի արքայատան ժառանգական ոստանն ու ավանդույթները փոխանցվել են հայ Արծրունիներին, և հնարավոր է՝ նրանք սերել են այդ արքայատնից:

125 Տե՛ս УКН 62, **Lehmann-Haupt C. F.**, 1926, էջ 319-320: **Меликишвили Г. А.**, 1951, էջ 176-179:

126 Ս. Երեմյանը «Այադու»-ի մեջ տեսնում է «Հայք» անունը և կապում Հայոց ձոր գավառի հետ (տե՛ս **Երեմյան Ս. Տ**, Հայկական առաջին պետական կազմավորումները, «Պատմա-բանասիրական հանդես», 1968, N 3 (այսուհետ՝ **Երեմյան Ս.**, 1968), էջ 110):

127 Տե՛ս **Меликишвили Г. А.**, 1951, էջ 176-178: АВИИУ, 49 (280), ծան. 68: ТУ, էջ 15: **Медведская И. Н.**, 1989, էջ 111, 114 (նկ. 3): Նույնի՝ The Localization of Hubuškia, in: Parpola S., Whiting R.M. (eds.), Assyria 1995, Proceedings of the 10th Anniversary Symposium of the Neo-Assyrian Text Corpus Project, Helsinki, September 7-11, 1995, Helsinki, 1997, (այսուհետ՝ **Medvedskaya I. N.**, 1997), էջ 198-200: **Սարգսյան Ա.**, 2000, էջ 144-145:

128 Տե՛ս **Rigg H.**, 1942, էջ 135-136: **Levine L. D.**, 1977, էջ 145, գծպ. 1: **Reade J. M.**, 1978a, էջ 138 (գծպ. 1), 140 (գծպ. 2): **Pecorella P. E., Salvini M.**, 1982, էջ 16-17: **Zimansky P.**, 1990, էջ 16: **Գրեկյան Ե.**, 2016, էջ 79-80, 85-86:

129 Թուրք.՝ Görentaş:

նիա) լեռնանցքով թափանցել Արտոս լեռան շրջան և գրավել **Արտոսի** (**Արցիդու**) և **Մոխրաբերդի**[130] (**Մախունիա**) միջև ընկած պատմական Մեծ Հայքի **Ռշտունիք** գավառի (**Գյավաշ**) ծովափնյա բնակավայրերը: Մինչև 20-րդ դարասկիզբն այստեղ գտնվող հայկական բազմաթիվ բնակավայրերը պահպանել են Սարգոն II-ի հիշատակած Այադուի բնակավայրերի մեծ մասի անունները[131]: Այդ տեղավայրերից մի քանիսը իրենց անվանումները պահպանել են նաև այսօր: Այսպիսով՝ հավանական են Այադուի և Գյավաշի բնակավայրերի հետևյալ նույնականացումները. **Բիտայա-Բատկանց** (Պատկանց), **Ալուարզա-Ախավանց**, **Կիունա-Կյավաշ**, **Ալլի-Իլի** (Հիլի), **Արզուգու-Անգալո՞ւր**, **Շիկկանու-Իշկերտ**, **Դայազունա-Դախամանց**, **Բանիու-Բողոնի՞ս, Բիրխիլուզա-Վիրկունիս**, **Դեզիզու-Դեղձիս** (Տեզտիս), **Աբաինդի-Հարբերդ** (Առբերդ), **Խասրանա-Մնա՞ր**, **Պարրա-Պողանց կամ Պաղդատ**, **Անիաշտանիա**-Հերիշա՞տ (**Հեշատ)**, **Բալդուարզա-Բախավանց** (Բախվանց), **Սարուարդի-Սարեն** (Սիրեն, Սարիկ), **Շումմատար-Մատմանց** (Մատման) կամ **Շմշեմա**, **Ծիկարրա-Ծռտաքար**[132]: **Հին Ուայիսը**, հավանաբար, Ախթամարի արձանագրությունից հայտնի **Ուիշինին** է[133], գուցե համընկնում է պատմական **Ոստանին**[134]: **Արգիշտիունա** ամրոցը, որ **Մախունիա** լեռան վրա էր, հավանաբար **Մոխրաբերդն** է[135]: Սարգոն II-ն այնուհետ անցել է **Ալլուրիա**, **Կալլանիա** և **Իննայա** գետերը, մտել Ուայիս: Կալլանիան Սարգոնը հիշում է Այադուի ծովափ ներխուժման ժամանակ որպես բնակավայր, այնուհետ դա նշվում է որպես Արցիդու լեռան փեշերին տեղակայված ամրոց, իսկ երրորդ անգամ՝ որպես գետ: **Կալլանիային** համադրելի **Գյորանդաշտը** գտնվում է գետափին՝ Արտոս լեռան հարավարևելյան փեշերին: Այստեղից է սկիզբ առնում Բոհտանի այն վտակը, որը նրան է միանում Շատախի մոտ: Նրա արևմտյան ճյուղը սկիզբ է առնում Ալլի-Իլի բնակավայրի մոտակայքից՝ հավանաբար կրելով վերջինիս անունը՝ Ալլուրիա: Ստացվում է՝ Սարգոն II-ը գրավել է Արտոսի և Ծռտաքարի միջև ընկած Գյավաշի ծովափնյա բնակավայրերն ու ամրոցները, ապա հետ է դարձել և Ալլի-Իլի, Կալլանիա-Գյորանդաշտ բնակավայրերից հարավ հատել նույնանուն գետերն ու շարժվել Ուայիս:

---

130 Մոխրաբերդ գյուղը (թուրք. Göründü, քրդ.՝ Merxapet) Ծռտաքար լեռան հարավային փեշին է: Այստեղ՝ Կարմրակ վանքի մոտակայքում, պահպանվել են 2 բերդերի ավերակներ:

131 Գյավաշի բնակավայրերի վերաբերյալ տե՛ս, օր., **Բաղալյան Գ.**, Արևմտյան Հայաստանի պատմաժողովրդագրական նկարագիրը Մեծ եղեռնի նախօրեին, «Վէմ», Եր., 2015, N 3, (այսուհետ՝ **Բաղալյան Գ.**, 2015), էջ II-VI: Նաև՝ «Հայկական սովետական հանրագիտարան», հատ. 11, Եր., «Հայ սովետական հանրագիտարան» հրատ., 1985, էջ 275, քարտեզ:

132 Ծիկառան հավանաբար Ծռտաքար լեռան փեշերին էր:

133 Տե՛ս **Меликишвили Г. А.**, 1951, էջ 177-179:

134 Ոստանը Ռշտունիքի կենտրոնն էր. համապատասխանում է ժամանակակից Գյավաշին:

135 Տե՛ս **Սարգսյան Ա.**, 2000, էջ 144: Մախունիան Ծռտաքար լեռն է: Արգիշտիունան հավանաբար Մոխրաբերդի մոտակայքի 2 բերդատեղիներից մեկն էր: Ծիկառան իր անունը թողել է լեռանը, Մախունիան՝ ամրոցին՝ Մոխրաբերդին:

Այսպիսով՝ Ուրարտական Այադու–Աիդունի մարզն ընկած էր Արմարիալի–Մեծ Աղբակից արևմուտք և ընդգրկում էր Խոշաբի ավազանն ու Գյավաշը:

Ե. Ուայաիս

Ուրարտուի հարավային ռազմավարական հենակետ Ուայաիսի մարզն ու համանուն հզոր ամրոցը գտնվում էին Այադուի և Խուբուշկիայի միջև՝ Տուշպայից Մուսասիր և Մաննա տանող ճանապարհին: Սա ընդհանուր սահման չուներ Ասորեստանի հետ, և ուրարտական զորքերն այստեղ էին կենտրոնանում՝ Մաննա և Մուսասիր արշավելու համար: Այստեղից էր Սարգոն II–ի զորաբանակը մտել Խուբուշկիա քաղաք, որն Ուայաիսի սահմանից մոտ 22–32 կմ հեռավորության վրա էր: Ուայաիսը հեռու չէր նաև Արմարիալիից, քանզի այստեղից Կալլանիայով էին մտնում Այադուի ծովափ և Կալլանիայով էին անցնում նաև Ուայաիս: Վերջինս գտնվում էր սահմանային մի շրջանում, որտեղ դժվար չէր կենտրոնացնել Ուկկուի (Ալկի), Ալզիի (Աղձնիք), Արմարիալիի (Մեծ Աղբակ) զորքերը, իրականացնել արքայի՝ Տուշպայից այստեղ ժամանումը, հարևան շրջանների նկատմամբ լրտեսական աշխատանքներ կազմակերպելը, Մուսասիրից այստեղի անցուդարձին հետևելը[136]:

Այադուի՝ Վանա լճի հարավարևելյան մերձակայքում գտնվելը և այս մարզում Սարգոն II–ի արևելքից արևմուտք և կրկին արևելք զորաշարժը ցույց են տալիս, որ ասորեստանյան բանակն այնուհետ արշավել է հարավարևելյան ուղղությամբ՝ Հաքքյարիով (Ջուլամերկ) Ասորեստան և Մուսասիր դուրս գալու համար: Ուայաիսը Հաքքյարի–Յուկսեկովա (Դիզե–Գևառ) գծից հյուսիս և Բաշկալա–Գյավաշ գծից հարավ էր: Այս մասին է վկայում Ուայաիսի ամրոցների տեղադրությունը: Մերվանի և Բաշկալայի միջև՝ Բոհտանի և Խոշաբի ակունքների միջնատարածքում են գտնվում ժամանակակից **Բազիրավան** և **Վարկունի** (Ուարկունի) լեռները, որոնք պահպանել են Սարգոն II–ի հիշատակած **Բարզուրիանի** և **Ուալտուկույա** ամրոցների անունները: Նրանցից արևելք է գտնվում ժամանակակից **Խութա** բնակավայրը, որը համապատասխանում է **Կուտտա** ամրոցին: Խութա––

136 Ուայաիս-Ուեսին նույնացվել է Բիթլիսին (տե՛ս **Thureau-Dangin F.,** 1912, էջ VI, IX-X), Բաշկալային (տե՛ս **Lehmann-Haupt C. F.**, 1926, էջ 317-325), Ուշնուին (տե՛ս **Kinnier Wilson J. V.**, The Kurba'il statue of Salmanasar III, Iraq, 24, 1962, (այսուհետ՝ **Kinnier Wilson J. V.**, 1962), էջ 109-110), Կալ'եհ Իսմաիլ Աղային (տե՛ս **Pecorella P. E., Salvini M.**, 1982, էջ 17: Նույնի՝ Tra lo Zagros e l'Urmia. Ricerche storiche ed archeologiche nell'Azerbaigian Iraniano, InGr LXXVIII. Roma, 1984, էջ 24-25, 46-49: **Muscarella O. W.**, 1986, էջ 472), Քալաթգահին (տե՛ս **Zimansky P.**, 1990, էջ 17), ինչպես նաև «Մհերի դռան» արձանագրությունից հայտնի Ուիշինիին և Քալաթգահի արձանագրությունից հայտնի Ուիշեին, որոնք, իրենց հերթին, նույնացվել են միմյանց, հայկական միջնադարյան Արիս/Արասխ/Ովայք/Ուես գավառին և Ուշնուին՝ ընկած Ուրմիա լճի հարավ-արևմուտքում (տե՛ս, օր., ՊՄ, էջ 193-194: **Գրեկյան Ե.**, Ուրարտու և Մաննա (Մերձուրմյան ավազանում ուրարտական տիրապետության հաստատման շուրջ), Արևելք (հոդվածների ժողովածու), Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2001, (այսուհետ՝ **Գրեկյան Ե.**, 2001), էջ 17-18, ծան. 43: Նույնի՝ 2016, էջ 79 և հմպտսխն հղումները): Այն տեղակայվել է նաև Նորդուզում՝ Հաքքյարիից հյուսիս (տե՛ս **Medvedskaya I. N.**, 1997, էջ 198-200, գծպ. 1: **Սարգսյան Ա.**, 2000, էջ 144-146, քարտեզը):

Կուտտայից հարավ են գտնվում Սիկանիս և Սուկան բնակավայրերը, որոնք համապատասխանում են Սալմանասար III-ի կողմից հիշատակվող ուրարտական Սուգունիա ամրոցին[137]: Այս բնակավայրերի հարավում է գտնվում ժամանակակից **Կուփ դաղը**, որը պահպանել է **Կիպպու** ամրոցի անվանումը: **Ասապան** հավանաբար ժամանակակից **Էսպին** բնակավայրն է. վերջինս **Արդանիսի** հարավային մերձակայքում է՝ դեպի Ջուլամերկ տանող ճանապարհին: Ստացվում է՝ Սարգոն II-ի զորքը, Այադուից (Հայոց ձոր, Գյավաշ) անցնելով Ալլուրիա (Իլի-Հիլի), Կալլանիա (Կորանդաշտ), Իննայա գետերը, շարժվել է Խոշաբի և Բոհտանի ակունքների միջնատարածքով, հասել **Բարզուրիանի-Բազիրավան** և **Ուալտուկույա-Վարկունի** լեռները, նրանց միջնատարածքով շարժվել է արևելք, հասել **Կուտտա-Խութա**, այնուհետ **Սիկանիսի** և **Սուկանի** լեռնանցքով (**Սուգունիա**) իջել հարավ՝ **Կիպպու-Կուփ դաղ**, այստեղից՝ **Ասապա-Էսպին**: Վերջինից մոտ 9 կմ հարավ-արևելք՝ Մեծ Զաբի ձախ ափին է գտնվում **Ուայիսիկ** (**Վայիսիկ**) ժամանակակից բնակավայրը, որը պահպանել է **Ուայաիս-Ուեսի-Ուաիսի** անունը: Ուայիսիկը գտնվում է Մեծ Զաբի և նրա ձախակողմյան երկու փոքր վտակների շրջափակած մի վայրում, որը բնական պաշտպանվածություն է տալիս նրան: Դա Ջուլամերկից մոտ 26 կմ, իսկ Մովանայից 73 կմ հեռավորության վրա է և համապատասխանում է Ուայաիսի հանրահայտ ամրոցին[138]:

Ուայաիսը հսկում էր դեպի Ուրարտուի կենտրոնական շրջանները հարավից տանող ճանապարհները՝ հնազանդության մեջ պահելով Խուբուշկիան, Մուսասիրն ու Ուկկուն, սպառնալով նաև Մաննային: Սարգոն II-ի հարձակմանը չդիմացավ ուրարտական ոչ մի ամրոց, սակայն նույնիսկ թիկունքից մոտենալով Ուայաիսին ու պաշարելով ամրոցը՝ Աշշուրի արքան չկարողացավ գրավել դա: Ուայաիսի մարզի արևելյան և արևմտյան սահմանների մասին ուղղակի հիշատակություններ չկան, սակայն որոշ եզրակացություններ հնարավոր է կատարել: Սարգոն II-ը Այադուից Խուբուշկիա էր հասել գրեթե այն ճանապարհով, որտեղով Սալմանասար III-ը Ք.ա. 858 թ. Խուբուշկիայից Սուգունիայով անցել էր Նաիրի երկրի ծով՝ Վանա լիճ, վերադարձին ստացել Գիլզանուի հարկը, իսկ Ք.ա. 856 թ. Արամալիից անցել էր Զանզիունա (Զարիվան), Նաիրի երկրի ծով (Ուրմիա լիճ), Գիլզանու և Խուբուշկիա: Ակնհայտ է՝ Ուայաիսը, Սուգունիան և Գիլզանուն Խուբուշկիայի հյուսիսում էին՝ իրար մերձավորությամբ, իսկ Գիլզանուն Սուգու-

137 Տե՛ս **Աղոնց Ն.**, 1972, էջ 80: Սուկան և Սիկանիս բնակավայրերը գտնվում են Ջուլամերկը Բաշկալային և Վանա լճին կապող լեռնանցքի երկու կողմերում, Կարա սու գետի ավազանում:

138 «Միերի դռան» արձանագրությունում հիշատակվող Ուիշինին Ախթամարի արձանագրությունից հայտնի Աիդունիի նույնանուն բնակավայրն է, որը հավանաբար համապատասխանում է հայկական Ոստան քաղաքին (Գյավաշ), իսկ Քալաթգահի արձանագրությունից հայտնի Ուիշեն՝ հայկական Պարսկահայք աշխարհի Արիս/Արասխ/Ովայք/Ուես գավառին, որի անունը պահպանել է Ուշնուն: Ըստ այդմ՝ առկա է Ուիշինի/Հին Ուայաիս-Ոստան, Ուիշե-Ուես/Ուշնու և Ուայաիս/Ուեսի-Ուայիսիկ հավանական համապատասխանություն:

նիայի և Ուրմիա լճի միջնամասում էր[139]: Գիլզանուն Ք.ա. 856–827 թվականների ընթացքում արդեն երեք կողմերից շրջափակված էր ուրարտական տարածքներով, իսկ հարավում Խուբուշկիան էր. Իշպուինիի ժամանակ դա արդեն կցվել էր Ուրարտուին[140]: Գիլզանուի տարածքը կարող էր մաս կազմել հետագա Ուայահիսի մարզին կամ լինել արևելքից նրան սահմանակից մեկ այլ մարզ:

Արևմուտքում Ուայահիսը կարող էր ներառել Նորդուզը՝ սահմանակցելով Ուկկուին ու նախկին Մուսրու երկրի տարածքին[141]: Հյուսիսում դա հասել է Վարկունի և Բազիրավան լեռներ[142]:

Պարզ է նաև՝ ինչպես էին ուրարտական զորքերը Ուայահիսից արշավում Մուսասիր և Մաննա. Յուկսեկովայով և Շեմդինլիով հասնում էին Մուսասիր, իսկ Գիլզանուի նախկին տարածքով և Ուրմիա լճի արևմտյան ափով իջնում էին Մաննա: Ուայահիսի վերը նշված տեղադրությունը և՛ պաշտպանական, և՛ հարձակողական, և՛ հետախուզական առումով հիանալի հենակետ էր, ինչն օգտագործել են Ուրարտուի արքաները:

Սարգոն II-ի հաջորդ թիրախները Խուբուշկիան ու Մուսասիրն էին:

III. Խուբուշկիայի տեղորոշումը

Ասորեստանյան սեպագրերում Խուբուշկիայի թագավորությունը հիշատակվում է Թուկուլթի-Նինուրտա II-ի (Ք.ա. 889–884 թթ.) ժամանակաշրջանից մինչև Ասարխադոնի (Ք.ա. 680–669 թթ.) դարաշրջանը ներառյալ: Նրա տեղադրությունն Ասորեստանի և Ուրարտուի պատմական աշխարհագրության առավել վիճահարույց հարցերից է[143]: Առաջադրվել է տեղորոշման երեք վարկած՝ հյուսիսային, միջանկյալ և հարավային. Խուբուշկիան համապատասխանաբար տեղադրվել է՝ 1. Բոհտան սուի հով-

139 Գիլզանուն 1. տեղադրվել է Ուրմիա լճի արևմտյան (հյուսիսարևմտյան) ափամերձ տարածքում, 2. նույնացվել Խիզանին՝ ընկած Վանա լճից հարավ-արևմուտք (ամփոփ տե՛ս ТУ, էջ 64-65 և գրակ. հղումները), 3. նույնացվել Հասանլուին (**Reade J. E.,** Hasanlu, Gilzanu, and related considerations. AMIran, N 12, 1979, էջ 175-181 (այսուհետ՝ **Reade J. E.**, 1979): Ամփոփ տե՛ս նաև **Russel H. F.**, Shalmaneser's campaign to Urartu in 856 B.C. and the historical geography of eastern Anatolia according to the Assyrian source, Anatolian Studies, N 34, 1984, (այսուհետ՝ **Russel H. F.**, 1984), էջ 198:

140 Գիլզանուն վերջին անգամ հիշատակվում է Ք.ա. 827 թ.: Պ. Պեկորելան և Մ. Սալվինին կարծում են, որ Գիլզանուի տարածքը մոտավոր համապատասխանում է Այադուի կամ Ուայահիսի տարածքներին, իսկ Ի. Մեդվեդսկայան կարծում է՝ նրա տարածքում է ձևավորվել Սանգիբուտու մարզը՝ այդ շրջանները տեղադրելով Ուրմիա լճի արևմտյան ափին (տե՛ս **Pecorella P. E., Salvini M.**, 1982, էջ 5: **Медведская И. Н.**, 1989, էջ 108):

141 Մուսրուն Բոհտան սուի ավազանում էր և հավանաբար ներառում էր Մեծ Հայքի Մոկք նահանգի տարածքը. նրա Արինու քաղաքը ժամանակակից Արին բնակավայրն է՝ տեղակայված Առնոս լեռան (Խարուսա) հարավում՝ Թաղ-Շատախից (Թալա) հարավ-արևելք (տե՛ս **Սարգսյան Ա.**, 2000, էջ 140-142: Նույնի՝ Ասորեստանի արքա Թուկուլթի-Նինուրտա I-ի արշավանքի երթուղին Կուտի, Շուբարի և Նաիրի, «Վէմ», Եր., 2019, N 2, (այսուհետ՝ **Սարգսյան Ա.**, 2019), էջ 234, ծան. 23):

142 Աղբյուրներում հիշատակություններ են պահպանվել Ուկկուի դիմացի մարզի մասին Ուայահիսի հետ (տե՛ս АВИИУ, 50 (4)): Այս մարզը կա՛մ Նորդուզում էր (պտմ.՝ Անձևացիք), կա՛մ պտմ. Մոկքում:

143 Հարցի ամփոփումը տե՛ս, օր. **Lanfranchi G.**, Assyrian Geography and Neo-Assyrian Letters. The Location af Hubuškia Again, Neo-Assyrian Geography, (NAG), (in M. Liverani [Ed.]), Roma, 1995, (այսուհետ՝ **Lanfranchi G.**, 1995), էջ 127: **Salvini M.**, On the location of Ḫubuškia, SAAB, XI, 1997, (այսուհետ՝ **Salvini M.**, 1997), էջ 109: **Medvedskaya I. N.**, 1997, էջ 197-199:

տում[144], 2. Ուրմիա լճից արևմուտք՝ Մեծ Զաբի վերին ավազանում՝ Հաքքյարիում և Յուկսեկովայի հարթավայրում[145], 3. Ասորեստանից արևելք, հյուսիս-արևելք կամ հարավ-արևելք՝ Ուրմիա լճից հարավ-արևմուտք՝ Փոքր Զաբի վերին ավազանում[146]:

Խուբուշկիան Ասորեստանի և Ուրարտուի միջև էր, Վերին Զաբի ավազանում, Կիրրուրիի, Արիդուի, Սիմեսիի, Թումմեի[147], Խաբխիի, Ուայահսի, Սուգունիայի, Գիլզանուի, Մուսասիրի, Անիսուի, Խարրանիայի հարևանությամբ և Նաիրի երկրի ծով(եր)ի[148], Մալխիսայի, Սունբիի, Ներքին Զամուայի և Մաննայի մերձավորությամբ: Նրա մայրաքաղաքն Ուայահսի սահմանից մոտ 22–32 կմ հեռավորության վրա էր, Վերին Զաբ-Էլամունիայի ափին, գետ, որը հոսում էր և՛ Նաիրիի, և՛ Խաբխիի տարածքով: Ասորեստանն ու Խուբուշկիան ինչ-որ մի հատվածում բաժանված էին Զաբ գետով[149]: Խուբուշկիայի Շիլայա ամրոցը գտնվում էր Գիլզանուից Խուբուշկիա քաղաք տանող ճանապարհին[150]: Խուբուշկիայով Մուսասիր կարող էին մտնել և՛ Ասորեստանից, և՛ Ուրարտուից[151]: Խուբուշկիային հարակից 6 երկիր (Խաբխի, Թումմե, Կիրրուրի, Սիմեսի, Մուսասիր, Ներքին Զամուա և Մաննա) և 2 քաղաք (Անիսու և Խարրանիա) մերձակա էին նաև Ասորեստանին: Խուբուշկիային հարևան 3 երկիր և շրջան (Մուսասիր, Գիլզանու, Ուայահս) և Սուգունիա ամրոցն Ուրարտուի հարավային սահմանին էին: Խուբուշկիային մերձակա Մուսասիրն ու Մաննան հարևան էին և՛ Ասորեստանին, և՛ Ուրարտուին, և՛ միմյանց: Թումմեն Խաբխիում էր և սահմանակից նաև Խուբուշկիայի հարևան Կիրրուրիին, որը, իր հերթին, հեռու չէր Ներքին Խաբխիից: Արիդուն Կիրրուրիում էր, Անիսուն՝ Խաբխիի, Խուբուշկիայի և Ասորեստանի սահմանին, Խարրանիան՝ Անիսուից մեկ օր հեռավորության վրա[152]: Մաննայից Խուբուշկիա տանող ինչ-որ լեռնանցքով հնարավոր էր թափանցել նաև Խարրանիա և Անիսու՝ Ասորեստանի սահ-

144 Տե՛ս, օր., **Thureau-Dangin F.**, 1912, էջ X-XI, քարտեզ: **Pinches T.**, 1913, էջ 594, ծան. 1: АВИИУ, 28 (159), ծան. 10: **Пиотровский Б. Б.**, 1959, էջ 54-55, 59 (քարտեզ): **Арутюнян Н.**, 1970, էջ 306, ծան. 537: ТУ, էջ 231-232**:**

145 Տե՛ս, օր., **Rigg H.**, 1942, էջ 136, ծան. 52**: Ադոնց Ն.**,1972, էջ 79: НУ, էջ 17-18: **Levine L. D.**, 1977, էջ 143-144: **Pecorella P. E., Salvini M.**, 1982, էջ 4, 17, գծպ. 1, 2: **Salvini M.**, 1997, էջ 113-114: **Медведская И. Н.**, 1989, էջ 111-114: Նույնի՝ 1997: **Սարգսյան Ա.,** 2000, էջ 142-146: Կ. Լեման-Հաուպտը Խուբուշկիան տեղադրել է Սալմասից հարավ (**Lehmann-Haupt C. F,** 1926, էջ 321):

146 Տե՛ս, օր., **Kinnier Wilson J. V.**, 1962, էջ 108-111: **Hulin P.**, The inscriotions on the carved throne-base of Salmanasar III, Iraq, vol. 25 (1), 1963, էջ 59: **Reade J. E.**, 1978a, գծպ.1, 2: Նույնի՝ 1979, էջ 176, 178-179: Նույնի՝ 1994, 1995, էջ 33-38, գծպ. 3, 5: **Russel H. F.**, 1984, էջ 194-198: **Zimansky P.**, 1990, էջ 19: **Liebig M.**, 1991, էջ 33-34: **Lanfranchi G.**, 1995, էջ 135-137: **Maniori F.**, 2010, էջ 178, 182-186: **Kroll S.**, 2012, էջ 12, գծպ. 1**:**

147 Թումմեի (այլ ընթերցմամբ՝ Նիմմե (АВИИУ, 10, ծան. 51, 17, ծան. 2) և Խուբուշկիայի մերձավորությունը վերականգնվում է Սալմանասար III-ի Ք.ա. 856 թ. արշավանքի և Թումմեի այլ հիշատակությունների համադրմամբ. Թումմեն նաիրյան երկիր էր՝ տեղակայված Խաբխիում Կիրրուրիի հարևանությամբ. վերջին երկուսը, իրենց հերթին, սահմանակից էին Նաիրի-Խուբուշկիային:

148 Խուբուշկիայից Նաիրի երկրի ծով հասնում էին Սուգունիայով՝ վերադառնալով Գիլզանուի մերձակայք, մեկ այլ դեպքում Նաիրի երկրի ծովից Գիլզանուով իջնում էին Խուբուշկիա, Թումմե, Կիրրուրի, երրորդ դեպքում ծովափնյա Այադուից Ուայահսով իջնում էին Խուբուշկիա: Այս «ծովերը» կարող են լինել և՛ Վանա լիճը, և՛ Ուրմիան:

149 Տե՛ս RIM 3, A.0.102 16 (286'b-290'):

150 Հմմտ.՝ АВИИУ, 27 (II, 63): RIM 3, A.0.102 2 (ii63b-66d), 6 (ii1), (iv26-36), 8 (24b-40), (1'-5'a), 10 (i36b-48a), 14 (35b-44),16 (14b-20a), 24 (5b-10):

151 Տե՛ս АВИИУ, 25 (174), 49 (306), (309):

152 Տե՛ս SAA 5, 133:

ման[153], իսկ Խարրանիայից՝ Շաթթուարիայով անցնել Մաննա և Բուշտու[154]: Խուբուշկիա քաղաքից Մուսասիր քաղաք հասնելու համար պետք էր հաղթահարել Արսիու լեռը, գետանցել Վերին Զաբն ու անցնել ևս 4 լեռ: Իսկ Մուսասիրի Ծ/Զապպարիա ամրոցը մոտ էր Խուբուշկիայի և Ուրարտուի տարածքին, որին հարևան էր նաև Գիլզանուն[155]: Խուբուշկիայի հարկը ասորեստանցիները ստանում էին Կիրրուրիում[156] և Ներքին Զամուայում[157]:

Ուրարտուից հարավ՝ Խուբուշկիա տանող ճանապարհներից մեկն անցնում էր Գիլզանու- Խուբուշկիայի Շիլայա ամրոց-Խուբուշկիա քաղաք-Թումմե-Կիրրուրի երթուղով[158], մյուսը՝ Ուայաիս-Խուբուշկիա-Ասորեստան և Ուայաիս-Խուբուշկիա-Արսիու լեռ-Վերին Զաբ-Շեակ, Արդիկշի, Ուլայաու, Ալլուրիա լեռներ-Մուսասիր-Անդարութթա լեռնանցք-Խիպպարնա քաղաք-Ասորեստան երթուղիներով: Խուբուշկիայից Ասորեստան էին գնում նաև Անիսու և Խարրանիա քաղաքներով[159]: **Ասորեստանից Խուբուշկիա** տանող ճանապարհներից մեկն անցնում էր Սիմեսի լեռնանցք-Արիդու-Խուբուշկիա-Սուգունիա-Նաիրի երկրի ծով և հակառակ ուղղությամբ՝ Գիլզանուի շրջակայք և Ասորեստան[160]: Մյուսն անցնում էր Զաբ գետ-Խուբուշկիա-Մալխիսա-Մաննա երթուղով[161], երրորդը՝ Սիմեսի լեռնանցք[162]-Խուբուշկիա-Մուսասիր (Ծ/Զապպարիա ամրոց)-Ուրարտու-Գիլզանու երթուղով, որտեղից Դայան-Աշշուրը վերադարձել էր խուբուշկիա-ասորեստանյան սահման՝ Խարրանիա, ստացել Գաբուրիսա քաղաքի, Խարրաննիա, Շաշգանա, Անդիա երկրների հարկը և Պերրիա-Շաթթուարիա-Մաննա-Բուշտու-Նամրու երթուղով հասել Խալմանի դիմաց[163]:

Չնայած այսպիսի առատ փաստերին՝ Խուբուշկիայի տեղորոշումը դժվարացել է առնչվող տեղավայրերի տարակերպ տեղադրումների պատճառով:

Կիրրուրի երկիրն ու նրա լեռնանցքները[164] Սալմանասար III-ի ժամանակներից Ասորեստանի կազմում էին[165՝] Արբելայի շրջանի սահմանին՝

153 Տե՛ս SAA 4, 23:
154 Տե՛ս АВИИУ, 28 (174): RIM 3, A.0.102 14 (174b-190), 16 (320'b-341'a):
155 Տե՛ս նույն տեղում:
156 Տե՛ս АВИИУ, 23 (I, 56): RIM 2, A.0.101 1 (i54b-58a), 17 (i77b-81a):
157 Հմմտ. RIM 3, A.0.103 1 (ii 34b-59a): RIM 2, A.0.101 1 (ii76b-84a), 17 (iii98b-116):
158 Հմմտ.՝ АВИИУ, 27 (II, 54, II 60, II 63): RIM 3, A.0.102 2 (ii45-47a), (ii47b-56a), (ii56b-60a), (ii60b-63), (ii63b-66d), 6 (i57-ii2), (ii1), (iv26-36), 8 (24b-40), (1'-5'a), 10 (i36b-48a), 14 (35b-44), 16 (14b-20a), 23 (13b-19a), 24 (5b-10), 29 (34b-39a), 30 (14-18a), 31 (9b-17a), 32 (4b-9a), 33 (6b-13), 38 (4'b-10'a), 40 (i1-10a):
159 Տե՛ս SAA 5, 133:
160 Տե՛ս RIM 3, A.0.102 1 (14-19a), (19b-29a), (29-33a), (33b-40a), 2 (i14b-18a), (i18b-23a), (i23b-25a), (i25b-29a), 6 (i28-41), 10 (i19-23a), 14 (22-26a), 28 (10b-18a):
161 Տե՛ս RIM 3, A.0.102 14 (159b-174a), 16 (291'-320'a):
162 Սիմեսի լեռնանցքի տեղադրության վերաբերյալ տե՛ս **Russel H. F.**, 1984, էջ 194-196:
163 Տե՛ս RIM 3, A.0.102 16 (320'b-341'a),
164 Կիրրուրին (այլ ընթերցմամբ՝ Խաբրուրի) նույնացվել է Հարիրին/Դաշտի ի Հարիրին՝ ընկած Արբելայից հյուսիս-արևելք, տեղադրվել Սեֆին դաղի և Ռևանդուզի միջև ու Կոի Սանջակում՝ Ռանյայի հարթավայրից հարավ-արևելք, նույնացվել հայոց պատմական Կրերք գավառին ու լեռնանցքին՝ ընկած Մերվանի և Զուլամերկի միջև (ամփոփ տե՛ս **Saggs W. F.**, The Land of Kirruri, Iraq, vol. XLII, Part 1, 1980, (այսուհետ՝ **Saggs W. F.**, 1980), ТУ, էջ 111-112):
165 Տե՛ս **Saggs W. F.**, 1980, էջ 80-82: Սալմանասար III-ի Ք.ա. 856 թ. ուրարտական արշավանքի ժամանակ Կիրրուրին արդեն Ասորեստանի Արբելայի շրջանի կազմում էր և համարվում էր այդ շրջանի սկիզբը: Հավանաբար

Խուբուշկիայի, Խաբխիի և վերջինիս մաս կազմող Թումմեի հարևանութամբ, երկրներ, որոնք սահմանակից էին միմյանց և Ասորեստանին: Միաժամանակ, Կիրրուրիից հնարավոր էր թափանցել Փոքր Զաբի ավազան՝ Լուլլու երկիր[166]:

Աշշուրնազիրպալ II-ը (Ք.ա. 884/3-859 թթ.) Ք.ա. 884/3 թ. արշավել էր[167] **Թումմե՝** անցնելով **Լիբե (Բիլե** կամ **Լայլաբիր)-Սուրրա** (**Սուրի**)-**Աբուկու** (**Ավկի**)-**Արուրա** (**Հորա**)-**Արուբե** (**Արբուշ**) երթուղով՝ **Միզուրի** լեռնաշրջանի հարավ-արևելքով և **Ավ ի Մարկե** գետի ավազանով հասնելով ժամանակակից **Թխում**[168] (վերջինս պահպանել է **Թումմեի** անունը): Այստեղից նա իջել է **Կիրրուրի** և ստացել **Խարգայա** (**Այգարք**), **Խարմասայա** (**Մարոյիսա**), **Ուլմանիա** (**Օրամար**), **Սիմիրրա (Միրուզ)**, **Սիմեսի (Սեր ի Մուսակա՞)**, **Ադաուշ (Արգո՞շ)** երկրների[169], ինչպես նաև **Խուբուշկիայի** և **Գիլզանուի** հարկը: Կիրրուրիից Աշշուրնազիրպալ II-ը Միզուրի լեռների հարավով՝ **Խուլունի** լեռնանցքով (**Հալուրա**) և Ամադիայի ու Մեծ Զաբի միջնամասով, մտել է **Ներքին Խաբխի**[170] և գրավել է **Խաթթու** (**Խասթու**), **Խաթարու (Թարուանի՞շ)**, **Նիշտուն** (**Դեշտա՞ն**), **Իրբիդի** [171] (**Բեդուի**), **Մետկիա** (**Մահդ Դոկե**), **Արցանիա** (**Արադինա**), **Թելա** (**Թուլար**), **Խուլունիա** (**Կուրոր/Հարոր**) բնակավայրերը[172], որոնք **Ուսու**, **Արուա** և **Արարդի** (**Արարադ**, **Զուդի դաղ**)[173] լեռների միջև էին:

Սալմանասար III-ի 858 թ. արշավանքի ժամանակ Արիդուի առումով և Նինի արքայի գերումով Կիրրուրին կորցրել է իր անկախությունը:

166 Տե՛ս RIM 2, A.0.100 5 (30-40):

167Տե՛ս АВИИУ, 23 (I, 43), (I, 54), (I, 56), (I, 58): RIM 2, A,0,101 1 (i43 b-54a), (i54b-58a), (i58b-69a), 17 (i61b-77a), (i77b-81a), (i81b-90):

168 Ժամանակակից Սուրի, Ավկի, Հորա, Արբուշը բնակավայրերի և Թխումի լեռնաշրջանի տեղադրությունը տե՛ս կից քարտեզում: Սուրրա-Սուրին Թիգլաթպալասար I-ը հիշատակում է Շուրիա տարբերակով դեպի Կումենու և Խաբխու կատարած արշավանքի ժամանակ՝ Սակա և մյուս Սակա բնակավայրերից հետո (տե՛ս RIM 2, A.0.87.12 (3'-16')): Զիբարի Բիլե, նրա մերձակա Լայլաբիր բնակավայրի ու Լիբեի ամրոցի անունների հավանական կապից կարելի է եզրակացնել, որ ասորեստանցիները Սուրի են հասել Զիբարի մոտակայքից՝ անցնելով շուրջ 32 կմ:

169 Այգարքը Մեծ Հայքի Կորճայք նահանգի գավառներից էր՝ ընկած Օրամարից հարավ: Վերջինս գտնվում է Զուլամերկից հարավ-արևելք: Մարոյիսան և Միրուզը գտնվում են Հերկիից հարավ-արևմուտք՝ Շեմդինան սուի ավազանում, Սեր ի Մուսակա լեռը Բերոշի շրջանից հյուսիս-արևելք է, Արգոշը՝ Սեր ի Մուսակայից հյուսիս-արևելք: Ադաուշը տարբեր է Բաբխիում հիշատակվող նույնանուն բնակավայրից (տե՛ս АВИИУ, 10 (III, 35), (III, 66)): Սակայն այն հիշատակվում է Թիգլաթպալասար I-ի մեկ այլ արձանագրությունում Մատկիուի՝ հետ (տե՛ս RIM 2, A.087 12 (17'-23'), և այստեղ արձանագրության պակասող ***…ʃuʃmu, …ʃmu*** երկրանունները պետք է կարդացվեն ոչ թե Լուլլումու, այլ Կ]ումու, իսկ ***…zʃa-ba***-նը ոչ թե Ստորին Զաբ, այլ Վերին Զաբ, քանզի Մատկիուն այլ արձանագրություններում՝ հիշատակվում է Կումու/Կումմանու-Կոմանայում, Խաբխիում և Ներքին Խաբխիում՝ Մեծ Զաբի ավազանի երկրներում:

170 Այս երկիրը Խաբխիի մի հատվածն էր՝ ընկած Արլ. Խաբուր-Կոմանա գծից հյուսիս՝ մինչև Բոհտանի ավազան՝ արևմուտքում ներառելով Զուդի դաղի արևելյան շրջանները, իսկ արևելքում՝ հասնելով Մեծ Զաբ: Ինչ վերաբերում է Ասորեստանից արևելք Խաբխի երկրների գոյության վարկածին, ապա դրա համար հիմք հանդիսացող հիշատակություններն Ասորեստանից հյուսիս՝ Կորդվաց լեռների շրջանում ընկած Խաբխի երկրի մասին են (տե՛ս և հմմտ. **Fuchs A.**, Māt Ḫabḫi, in: J. Marzahn, H. Neumann, Assyriologica et Semitica. Festschrift für Joachim Oeslner anläßlich seines 65. Geburtstages am 18. Februar 1997, AOAT, 252, Münster, 2000, էջ 73-94: RIM 2, A.0.99.2 (23-25), 4 (13´-20´), A.0.101 67 (1-10): ARAB II, էջ 62 (118), էջ 105 (209) և այլն):

171 Այլ ընթերցմամբ՝ Սաբիդի (հմմտ. АВИИУ, 23 (I, 58): RIM 2, A,0,101 1 (i58b-69a), 17 (i81b-90):

172 Հալուրա, Խասթու, Թարուանիշ, Դեշտան, Բեդուի, Մահդ Դոկե, Արադինան, Թուլար Կուրոր/Հարոր բնակավայրերի տեղադրությունը տե՛ս քարտեզում. խաբխիական Մետկիան հիշատակում է նաև Թիգլաթպալասար I-ը դեպի Կումենու և Խաբխի կատարած արշավանքի ժամանակ (տե՛ս АВИИУ, 14: RIM 2, A.0.A87 12 (3'-16')):

173 Արարադ/տը հիշատակվում է Հին Կտակարանում և հայկական միջնադարյան աղբյուրներում որպես լեռ(ներ) և երկիր՝ կապված ջրհեղեղի և հայոց ազգածնության առասպելների հետ: Դա հավանաբար ժառանգվել է շումերական շրջանի Արատտայից և ասորեստանյան աղբյուրների Ուր(ու)ատրիից՝ նույնանալով հնագույն Կուտիին

Սալմանասար III-ը, Ք.ա. 858 թ. **Սիմեսի** լեռնանցքով անցնելով և գրավելով **Արիդու** ամրոցը, այստեղ ստացել էր նույն **սիմեսցիների**, **սիմիրրացիների**, **խարգայցիների**, **խարմասցիների**, **ուլմանցիների** հարկը, այնուհետ մտել **Խուբուշկիա** և **Սուգունիա**: Ակնհայտ է՝ 1. Արիդուն և Սիմեսին Կիրրուրիում էին կամ նրա հյուսիսային մերձավորությամբ՝ Խուբուշկիայի սահմանին, 2. Կիրրուրի/Խաբրուրի-Հարիր (Դաշտ ի Հարիր), Կիրրուրի-Կրերք և Կիրրուրի-Կոի Սանջակ նույնացումներն անհնարին են, քանզի այդ շրջաններից որևէ մեկը, միաժամանակ, հարևան չէր Ասորեստանի Արբելայի շրջանին, Խուբուշկիային, Թումմե-Թխումին, Ռու Քուչուկի և Շեմդինան սուի ավազանին ու Խաբխիին՝ ընկած Մեծ Զաբի և Արլ. Խաբուրի ավազաններում, առավել ևս՝ Ներքին Խաբխիին: Կիրրուրին Էրբիլից հյուսիս էր՝ Խաբխիի և Խուբուշկիայի մերձավորությամբ: **Զիբարից** մոտ 20 կմ հյուսիս, **Թխումից** շուրջ 60 կմ հարավ-արևելք, Մեծ Զաբի, նրա ձախակողմյան **Շեմդինան** և **Ռու Քուչուկ** (Բարասգիր) վտակների միջնամասում է գտնվում ժամանակակից **Կուր ի Հորե** լեռնաշրջանը, որը պահպանել է սեպագրական **Կիրրուրի** երկրի անունը: Կուր ի Հորեն հարավ-արևելքից հարում է Բարադոստին, հյուսիսից՝ Շեմդինանսուի ստորին ավազանին, արևմուտքից՝ Միզուրի լեռնագավառին, հարավից՝ Զիբարին: Կիրրուրին հավանաբար տարածվել է մինչև Շեմդինան սուի ձախափնյակ՝ հսկողության տակ պահելով Հաքքյարի, Յուկսեկովա, Թխում և Զագրոսի լեռնանցքներ տանող բազմաթիվ լեռնանցքներն ու ճանապարհները: Պարզվում է նաև Թուկուլթի-Նինուրտա II-ի Ք.ա. 886 թ. արշավանքի երթուղին. արքան անցել է **Կիրրիուրիի լեռնանցքներով**, հաղթահարել **Ուրրուբնու լեռն** ու դժվարանցանելի լեռնային ճանապարհներով հասել **Իշրուն լեռը**, որը **Լադանու** երկրում էր: Վերջինս **Լուլլու** երկրում էր՝ Փոքր Զաբի աջափնյակում[174]: Կուր ի Հորեից Ասորեստանի զորքը հավանաբար թափանցել է Ռուբար ի Հաջի Բեգ գետի ավազան[175], այնուհետ Բարասգիրի ավազանով և Բերդե Բուքի կամ Քելյաշինի լեռնանցքով դուրս եկել Փոքր Զաբի վերին ավազան, ինչպես Դայան-Աշշուրը Ք.ա. 827 թ.: **Լադանուն**, հավանաբար, ժամանակակից **Դալավան** բնակավայրի շրջակայքում էր՝ **Դավլամանիկ դաղի** փեշերին՝ Գովրա Շինկի լեռնանցքից մոտ 8 կմ հյուսիս: Թուկուլթի-Նինուրտա II-ը անցել է ռազմավարական նշանակություն ունեցող 3 լեռնանցքով՝ փորձելով հսկողություն հաստատել Ասորեստան տանող ճանապարհների վրա, ինչպես ակնարկվում է արձանագրությունում[176]:

(Քարդու, Կորդուենե, Կորդուք, Կադմոսի տուն, Զուդի): Այս երկիրն իր անունն է թողել Ուրարտու-Արարատի թագավորությանը:

174 Տե՛ս RIM 2, A.0.100 5 (30-40): Արշավանքի երթուղու վարկածները ափոփ տե՛ս **Saggs W. F.**, 1980, էջ 80-83:

175 Ուրրուբնու լեռնանունը հավանաբար պահպանել է Ռեբարոկ բնակավայրը՝ ընկած Հարանից հյուսիս:

176 Տե՛ս RIM 2, A.0.100 5 (30-40): Թուկուլթի-Նինուրտա II-ին ենթարկվել են նաև Խուբուշկիան և Գիլզանուն (տե՛ս RIM 2, A.0.100 6 (1-10a)): Կիրրուրին անցնելով՝ արքան հավանաբար մտել էր Խուբուշկիա երկիր, սպառնացել նաև Գիլզանուին, որոնք խուսափել են բախումից և հնազանդություն հայտնել:

Սարգոն II-ի դարաշրջանում Ասորեստանի և Խուբուշկիայի սահմանն անցնում էր Կիրրուրիի հյուսիսով: Խուբուշկիան ընկած էր նրանից հյուսիս և հյուսիս-արևելք:

Թումմե (Թումմի) երկիրը[177] Թիգլաթպալասար I-ը (Ք.ա. 1115-1077 թթ.) հիշատակում է որպես Խաբխիում գտնվող նաիրյան 'ամենահարավային' երկիրը: Ք.ա. 1112 թ. իր հանրահայտ նաիրյան արշավանքի ժամանակ[178] Թիգլաթպալասար I-ը **Էլամա** (**Իլամ**) և **Ամադանա** (**Համադան**) լեռները և մի շարք այլ լեռներ անցնելուց հետո մտել է **Նաիրի** և **Թումմեից** անցել Ուրմիա լճի հյուսիսարևմտյան ափ, գրավել **Թունուբե** (**Տանբեր**), **Թուալի** (**Այլի**), **Կինդարի** (**Խունդուր, Հոդար**), **Ուզուլա** (**Զոլա**), երկրները, շարժվել հյուսիս և գրավել **Ունզամունի** (**Անձախի ձոր**), **Պիլակինի** (**Բերկրի**), **Աթուրգինի** (**Թոնդրակ**), **Կուլիբարզինի** (**Կոգովիտ**), **Սինիբիրինի** (**Զիրավ**), **Խիմուա** (**Նպատ**), **Պայթերի** (**Պայ**), **Շուրուրիա** (**Շորեր**), **Աբաենի** (**Ապահունիք**), **Աբարսիունի** (**Բասեան**), **Կիրինի** (**Կարին**), **Ալբայա** (**Ալվար**), **Ուգինա** (**Գերան**), **Նազաբիա** (**Մասսաբ** կամ **Ազաբ**), **Դայաենի** (**Տայք**) երկրները և Մանազկերտով ու Արածանիի ավազանով իջել **Մելիդ** (**Մալաթիա**)[179]: Իր նվաճումները Թիգլաթպալասար I-ը նշում է՝ «Թումմեից՝ Դայանի, հաղթողը Խաբխի երկրի՝ մինչև Մեծ ծով»[180]: Թիգլաթպալասար I-ը խաբխիական **Սուգի** երկիր կատարած արշավանքի ժամանակ վերջինիս օգնության հասած **Խիմե**, **Լուխի**[181], **Ալամունի** (**Ուլմանիա-Օրամար** կամ Էլամունի-Ալաման)[182], **Ար(ր)իրգիի** (**Հարիկ, Հրրիկի**)[183] երկրների շարքում հիշատակում է նաև **Թումմի** երկիրը[184]: **Սուգի** երկիրն ընկած էր ժամանակակից **Սուկի** բնակավայրի շրջակայքում, որը գտնվում է Շեմդինան սուի և նրա Ավ ի Մարկե վտակի միջև, Կուր ի Հորեից մոտ 20 կմ հյուսիս-արևմուտք և Թխումից մոտ 40 կմ հարավ-արևելք[185]: Ակնհայտ է՝ Թումմին անվանապես և տեղագրորեն համապատասխանում է Թում-

177 Թումմեի տեղադրության վարկածները ամփոփ տե՛ս **Russel H. F.**, 1984, էջ 187-189: **Սարգսյան Ա.**, Թիգլաթպալասար I-ի մ.թ.ա. 1112 թվականի նաիրյան արշավանքի երթուղին, «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 2002, 3 (161), (այսուհետ՝ **Սարգսյան Ա.**, 2002), էջ 215-219:

178 Տե՛ս АВИИУ, 10 (IV, 43), (V, 22): RIM 2, A.0.87 1 (iv43-v21), (v22-32), (v33-41):

179 Տե՛ս **Սարգսյան Ա.**, 2002, էջ 215-224:

180 АВИИУ, 17: RIM 2, A.0.87 16 (1-7):

181 Խիմ(մ)ե և Լուխա/ի երկրները պատկանում էին նաև Ուրուատրիին (տե՛ս АВИИУ, 2: **Grayson A. K.**, Assyrian Rulers of the third and second millennia BC (to 1115 BC), (The Royal inscriptions of Mesopotamia. Assyrian periods; v. 1), University of Toronto Press, 1987, Printed in Canada, Reprinted 2002, (այսուհետ՝ RIM 1), A.0.77 1 (22-46)), որը Կատմուխիի և Ալզիի արևելյան հարևանն էր Տիգրիսի, Արլ. Խաբուրի և Բոհտան սուի ավազանում:

182 Տե՛ս, օր., **Манандян Я.**, 1956, էջ 12: ТУ, էջ 253: **Սարգսյան Ա.**, 2000, էջ 141:

183 Հարիկ-Հրրիկի ժամանակակից բնակավայրը գտնվում է Ամադիայից մոտ 17 կմ հարավ-արևելք՝ Մեծ Զաբի աջ ափին:

184 Այլ ընթերցմամբ՝ Նիմնի/ու (հմմտ. АВИИУ, 17, ծան. 2: RIM 2, A.0,87 1 (iv7-31)):

185 Սուգի-Սուկիին են գուցե առնչվում նաև Սակա անունով երկու բնակավայրերը, որոնք Թիգլաթպալասար I-ը գրավել էր Կումանի (Կոմանա) և Խաբխի արշավելով (տե՛ս АВИИУ,14: RIM 2, A.0.87 12 (3'-16')): Այս արշավանքի ընթացքում հիշատակվող խաբխիական Շուրիա բնակավայրը հավանաբար նույնական է Աշշուրնազիրպալ II-ի հիշատակած Թումմեի Սուրրա՝ ժամանակակից Սուրի բնակավայրին, իսկ մյուս Սակա բնակավայրը հավանաբար ժամանակակից Սարկին է՝ ընկած Սուրիի և Սուկիի միջև: Սուրրա-Շուրիա-Սուրի համապատասխանությունը ևս մեկ ակնառու ապացույց է, որ Թումմեն գտնվում էր Խաբխիում՝ խաբխիական Սուգի-Սակա-Սուկիի և Կումենու-Կոմանայի հարևանությամբ:

մեին[186]: Սալմանասար III-ը Ք.ա. 856 թ. շարժվել է գրեթե նույն երթուղով, ինչ Թիգլաթպալասար I-ը Ք.ա. 1112 թ. արշավանքի ընթացքում, միայն թե հակառակ ուղղությամբ. նա անցել է **Էնձիտի** լեռնանցքով, գետանցել Ա-րածանին և **Սուխմիով** (**Շահունի՞ք**) հասել **Դայաենի** (**Տայք**), այնուհետ **Ար-զաշկու** (**Արձեշ** կամ **Արձիշակ**)-**Էրիտիա լեռ-Արամալի** (**Մեծ Աղբակ**)-**Զանզիունա** (**Զարեհավան**) երթուղով իջել Ուրմիա լճի հյուսիսարևմտյան ափ, այստեղից **Գիլզանու-Շիլայա-Խուբուշկիա-Կիրրուրի** (Կուր ի Հորե) երթուղով դուրս եկել Արբելայի շրջանի սկիզբը: Իր գրված սահմանները նա նշում է՝ Ալզիից Սուխմե-Դայաենի-Թումմե ու անդրադառնում Արզաշ-կուից Կիրրուրի անցած երթուղուն[187], կամ՝ Էնձիից Սուխնի-Մելիդ-Թումմե, ապա անդրադառնում Դայաենեից Կիրրուրի անցած երթուղուն[188]: Ուսում-նասիրողները հիշատակության այսպիսի ձևաչափից կարծել են՝ Թումմեն Դայաենեի մոտակայքում էր[189]: Սակայն խոսքը Կիրրուրիի հարևան նույն խաբխիական Թումմե երկրի մասին է, և Սալմանասար III-ը հիշատակում է իր գրված տարածքների սահմանները՝ Ալզի (տարբերակ՝ Էնզի, սկզբնա-կետ՝ հարավ), Սուխմի և Մելիդ (արևմուտք), Դայաենի (հյուսիս) և Թումմե (հարավ՝ վերջնակետ), այնուհետ անդրադառնում հյուսիսից Ասորեստանի սահման հասնելու երթուղուն: Ակնհայտ է՝ Խուբուշկիայից Սալմանասար III-ը նախ մտել է Թումմե, այնուհետ՝ Կիրրուրի, ինչպես Աշշուրնազիրպալ II-ն էր անցել Թումմեից Կիրրուրի: Նաև հասկանալի է՝ Ուրմիայի հյուսի-սարևմտյան ափից Սալմանասար III-ը շարժվել է ոչ թե լճի արևմտյան ա-փով հարավ[190], այլ Թխումի ուղղությամբ՝ հարավ-արևմուտք, և Գիլզա-նուն, Շիլայան, Խուբուշկիա քաղաքն ընկած էին այս գծի վրա: Խաբխիա-կան Թումմե-Թումմի երկիրը մի կողմից հարևան էր խաբխիական երկիր Կումենուին (Կոմանա), մյուս կողմից խաբխիական երկիր Սուգիին (Սուկի), Խուբուշկիային, Կիրրուրիին (Կուր ի Հորե) և Ասորեստանին՝ համապա-տասխանելով Թխումի լեռնաշրջանին. վերջինս գտնվում է Ջուլամերկի և Միզուրի լեռների միջև՝ Կուր ի Հորեից հյուսիս-արևմուտք[191]: Նաիրի-Խու-բուշկիան ընկած էր Թումմե-Թխումից հյուսիս և արևելք ու ընդգրկում էր այնպիսի տարածք, որը սահմանակցում էր Գիլզանուին և Ուայահինին հյու-սիսում, Մուսասիրին՝ հարավ-արևելքում, Կիրրուրիին և Ասորեստանին՝ հարավում:

186 Տե՛ս АВИИУ, 10 (III, 92), ծան. 42:

187 Տե՛ս RIM 3, A.0.102 10 (i36b-48a), 14 (32-35a), 16 (14b-20a):

188 Տե՛ս RIM 3, A.0.102 12 (9-20):

189 Օր.՝ Ն. Ադոնցը Թումմեն տեղադրում է Յոնջալուի դաշտում (տե՛ս **Ադոնց Ն.**, 1972, էջ 85): Այս տեսակետն ընդունում է նաև Կիներ Վիլսոնը՝ տարբեր նկատելով Սալմանասար III-ի և Աշշուրնազիրպալ II-ի հիշատակությունների Թումմեն՝ վերջինի հիշատակություններում այն ընթերցելով Նիմմե (տե՛ս **Kinnier Wilson J. V.**, 1962, էջ 104-106):

190 Տե՛ս **Russel H. F.**, 1984, էջ 194-200: **Kroll S.**, The Urartian Presence in the Lake Urmia Region, Urartians. A Civilization in Eastern Anatolia, The Proceedings of the 1st International Symposium held at Istanbul 2014, RHM, 2018, էջ 200, գծպտկ. 2:

191 Թխում-Թխումայում են գտնվում Թխում դաղը, Թխումա բնակավայրը, Մեծ Զաբի ձախակողմյան Թխուբ սու վտակը:

Արիդու ամրոցը Սիմեսի լեռնանցքի և Խուբուշկիա քաղաքի միջև էր՝ Կիրրուրիում կամ նրա հյուսիսային մերձավորությամբ: Կուր ի Հորեից մոտ 15 կմ հյուսիս-արևելք՝ Շեմդինան սուի ձախ ափին է գտնվում **Արդիլա** բնակավայրը, որը հավանաբար համապատասխանում է **Արիդուին**: Ք.ա. 858 թ. Սալմանասար III-ը Սիմեսիով հասել է Արիդու-Արդիլա և շարժվել հյուսիս՝ **Խուբուշկիա** և **Սուգունիա** ուրարտական ամրոց, որը նույնացվում է Սուկան կամ Սիկանիս բնակավայրերին: **Սուգունիան** Խուբուշկիայից Նաիրի երկրի ծով տանող ճանապարհին էր, իսկ այս ժամանակակից բնակավայրերն ընկած են Ջուլամերկից Բաշկալա և Վանա լիճ տանող լեռնանցքի երկու ծայրերին, ինչը վկայում է, որ Նաիրի երկրի ծովը այս դեպքում Վանա լիճն է: Սուգունիան չէր կարող գտնվել Ուրմիա լճի հարավ-արևմուտքում, ինչպես ենթադրվում է[192], քանզի ուրարտացի Արամուի տիրույթները չէին կարող Դայաենի-Տայքից ձգվել Գադար չայի ավազան, որը Իշպուինիի ժամանակ դեռ Ներքին Զամուայի տարածքում էր. այս գետից հյուսիս և հարավ ընկած Մալխիսա-Մալլաիսան և Սունբի-Սուֆիանը Սալմանասար III-ի և Շամշի-Ադադ V-ի ժամանակ ուրարտական չէին:

Սիմեսի երկիրն ու լեռնանցքը Կիրրուրիում էր կամ նրա հյուսիսային մերձավորությամբ՝ Արիդու (Արդիլա) տանող ճանապարհին: Սալմանասար III-ը դա հիշատակում է (Ք.ա. 827 թ.) Նամրուից հետո՝ Խալմանից առաջ, ինչը Սիմեսիի տեղադրության շուրջ տարաձայնությունների հիմնական աղբյուրն է: Սակայն այստեղ նշվում է արշավանքի ուղղությունը, և Դայան-Աշշուրը արշավանքի սկզբում անցել է Սիմեսի լեռնանցքով և արշավանքի վերջում դուրս եկել Խալմանի դիմաց[193]: Այս մեկնաբանությունը չընդունելու պարագայում պետք է կարծել, որ խոսքը 2 նույնանուն լեռնանցքների մասին է, քանզի միայն մեկ Սիմեսի լեռնանցքի գոյությունը Նամրուի և Խալմանի միջև անհնար է. նրա հարկը որևէ կերպ հնարավոր չէր լինի ստանալ Կիրրուրիում: Սակայն երկու դեպքում էլ տեղանունը նշվում է որպես լեռնանցք՝ վկայելով, որ դրանք միևնույն տեղավայրն են՝ ընկած Կուր ի Հորեի և Արդիլայի միջև, Ռու Քուչուկի և Շեմդինան սուի միջնատարածքում: Սիմեսի երկրի հարկը մեկ ստացվել է Կիրրուրիում, մեկ Արիդուում, այս երկրի լեռնանցքն անցնելուց հետո ասորեստանցիները մեկ հայտնվել են Արիդուում, Խուբուշկիա քաղաքում և Սուգունիայում, մեկ Խուբուշկիայի, Մուսասիրի, Ուրարտուի և Գիլզանուի տարածքում:

192 Տե՛ս, օր., **Reade J. M.**, 1978a, էջ 138 (գծպտկ.1): **Pecorella P. E.**, **Salvini M.**, 1982, էջ 6:

193 Ըստ Հ. Ռասսելի՝ Դայան-Աշշուրը ոչ թե Նամրիից Սիմեսի լեռնանցքով դուրս է եկել Խալմանի դիմաց, այլ արշավանքի սկզբում անցել է Սիմեսի լեռնանցքով և արշավանքի վերջում դուրս եկել Խալմանի դիմաց, և արձանագրության վերջում նշվող այս հատվածը արշավանքի երթուղու ամփոփումն է: Նման մեթոդով, օրինակ, Սալմանասար III-ը նշում է իր 856 թ. արշավանքի երթուղին՝ փաստելով, որ մտել է Էնձիի լեռնանցքով և դուրս եկել Կիրրուրիի լեռնանցքով Արբելայի շրջանի սկիզբ (տե՛ս **Russel H. F.**, 1984, էջ 196-198): Ըստ այդմ՝ Խուբուշկիա տանող ճանապարհներից մեկն անցնում էր Սիմեսի լեռնանցքով՝ փաստված նաև Սալմանասար III-ի Ք.ա. 858 թ. արշավանքի հիշատակություններով:

Սակայն Դայան-Աշշուրը Խուբուշկիայից չի շարժվել Սիդեկանի ուղղությամբ, որտեղ սովորաբար տեղադրվում է Մուսասիրը, այլ շարժվել է հյուսիս՝ Գիլզանու, այնուհետ վերադարձել Խարրանիա-Հարան և թափանցել Մաննա: Կուր ի Հորեից հյուսիս, Արդիլայից հարավ-արևելք, Բարոշի լեռների հյուսիսարևելյան մերձավորությամբ է գտնվում **Սեր ի Մուսակա** լեռը, որի շրջակայքում էին, հավանաբար, **Սիմեսի** երկիրն ու լեռնանցքը:

Գիլզանու երկիրը համանուն մայրաքաղաքով գտնվում էր Ուրմիա լճի հյուսիսարևմտյան ծովափի և Խուբուշկիայի միջև՝ Արամալիից (-Մեծ Աղբակ) և Զանզիանայից (Զարեհավան) հարավ, Կիրրուրից (Կուր ի Հորե), Սիմեսիից (Սեր ի Մուսակա՞), Խարրանիայից (Հարան) և Մուսասիրից հյուսիս, Թումմե-Թխումից հյուսիս-արևելք, Խուբուշկիայի և Սուգունիայի (Սիկանիս կամ Սուկան) սահմանային հատվածի և Ուրարտու-Մուսասիր մերձզագրոսյան սահմանի մերձավորությամբ: Գիլզանուն ընդհանուր սահման չուներ Ասորեստանի և Մուսասիրի հետ և չէր կարող գտնվել Ուրմիա լճի արևմտյան ափամերձ տարածքում, հակառակ պարագայում Ուրարտուն չէր կարող այստեղ տիրույթներ ունենալ Գիլզանուի, Մուսասիրի և Ներքին Զամուայի հարևանությամբ: Նա չէր կարող գտնվել նաև Ուրմիա լճի հարավային ափամերձ տարածքում՝ նույնանալով Հասանլուին[194], քանզի այդ շրջանը նշված ժամանակ պատկանում էր Ներքին Զամուային՝ իր Իդա (Ադա) շրջանով ու քաղաքով, որը Հասանլու և Լուլունար լճերի ավազանում էր. բացի դրանից՝ Ներքին Զամուան այստեղ սահմանակցում էր Ուշպինա-Իշպուինիի տիրույթներին: Այստեղ՝ Խուբուշկիայից Մաննա տանող ճանապարհին էր նաև Մալխիսա (Մալլաիսա) երկիրը: Գիլզանուն պետք է որ գտնվեր Կուր ի Հորե-Հարան-Փոքր Զաբի վերին ավազան գծից հյուսիս, այնպես, որ հարմար լիներ նրա հարկը ստանալ Կիրրուրիում և Ներքին Զամուայում[195]: Գիլզանուն գտնվում էր Զոլա գետի վերին ավազանի և Մեծ Զաբի միջև՝ Զագրոսից արևմուտք, Խուբուշկիա-Սուգունիա-Արամալի շրջագծած տարածքում, այնպես, որ Ուրարտուն Զագրոսի և Ուրմիա լճի միջնատարածքով կարող էր ծավալվել հարավ՝ մինչև Մուսասիր և Ներքին Զամուա: Գիլզանու քաղաքը գտնվում էր Շիլայայի և Զոլա գետի ավազանի միջև՝ Սուգունիայից արևելք, Յուկսեկովա-Մովանա գծից հյուսիս կամ հյուսիս-արևմուտք: Այստեղ՝ Շիկակում, Մեծ Զաբի ձախակողմյան Մասիրո դերե վտակի ձախ ափին են գտնվում Վերին և Ստորին **Գհոսնի** կամ **Գոսինի** ժամանակակից բնակավայրերը, որոնք պահպանել են **Գիլզանուի** անունը: Ուրարտական Ուայահսի մարզը և Գիլզանուի նախկին

194 Տե՛ս **Reade J. E.**, 1979:

195 Տե՛ս АВИИУ, 23 (I, 56): RIM 2, A.0.101 1 (i54b-58a), (ii76b-84a), 17 (i77b-81a), (iii98b-116): Ըստ Աշշուրնազիրպալ II-ի՝ Գիլզանուի հարկը ստացվել է Զամուայում՝ հավանաբար նկատի ունենալով Ներքին Զամուան: Խուբուշկիայի հարկը ևս ստանում էին Ներքին Զամուայում և Կիրրուրիում, իսկ Գիլզանուն Խուբուշկիայից հյուսիս էր: Գիլզանուից Կուր ի Հորե հարկը կարող էին տեղափոխել Մեծ Զաբի կամ Շեմդինանի ավազանով, իսկ Փոքր Զաբի վերին ավազան՝ Ուրմիա լճի արևմտյան ափով:

տարածքը կողք կողքի ընկած էին Խուբուշկիայի հյուսիսում՝ դեպի Վանա և Ուրմիա լճեր տանող ճանապարհներին, Այադու-Արամալի (Արմարիալի)-Զանզիունա գծից հարավ: Գհոսնի-Գոսինի բնակավայրերից 32 կմ հարավ-արևմուտք, Զուլամերկից 12-13 կմ հյուսիս-արևմուտք, Դեզի Դերրեի աջ ափին են գտնվում **Չիրի Չիրայա** և **Չամ ի Չիրի Չիրայա** բնակավայրերը, որոնք պահպանել են **Շիլայա** ամրոցի անունը: Ստացվում է՝ Սալմանասար III-ը Ք.ա. 856 թ. արշավանքի վերջնամասում շարժվել էր Գոսինի-Չիրի Չիրայա-Խուբուշկիա քաղաք-Թխում-Կուր ի Հորե աղեղնաձև՝ հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք, այնուհետ՝ հարավ-արևելք ուղղությամբ, իսկ Դայան-Աշշուրը Ք.ա. 827 թ. շարժվել էր Սիմեսի լեռնանցք (Սեր ի Մուսակա՞)-Խուբուշկիա երկիր-Մուսասիրի Ծ/Զապպարիա ամրոց-Ուրարտուի տարածք-Գոսինի երթուղով կրկին աղեղնաձև, սակայն հարավից հյուսիս-արևելք, այնուհետ՝ հյուսիս-արևմուտք ուղղությամբ և վերադարձել հարավ՝ Խարրանիա (Հարան)[196]: Այս 2 արշավանքների երթուղիները գծագրում են Խուբուշկիայի գրեթե ողջ տարածքը, ցույց տալիս նաև Խուբուշկիա-Մուսասիր, Խուբուշկիա-Գիլզանու հավանական սահմանը (վերջինս անցնում էր Նեհիլի ստորին ավազանով՝ Չիրի Չիրայա-Յուկսեկովա գծի հյուսիսային մերձավորությամբ, որից արևմուտք Ուայաիս-Խուբուշկիա սահմանագիծն էր, իսկ արևելք՝ Ուրարտու-Գիլզանու-Մուսասիր սահմանային շրջանը): Իշպուինիի ժամանակ Ուրարտուն արդեն սահմանակցում էր Ներքին Զամուային: Իշպուինիի և Մենուայի ժամանակ Ուրարտուի սահմանն հասել էր Քելյաշինի լեռնանցք և Թաշ թեփե՝ այստեղից դուրս մղելով Ներքին Զամուային: Ահա այս հարավային առաջխաղացման հետևանքով Գիլզանուն միացվել է Ուրարտուին՝ ապահովելով Ուայաիսից ամենակարճ երթուղին Մուսասիր և Մաննա:

Մուսասիրի Ծ/Զապպարիա ամրոցը գտնվում էր Խուբուշկիայի և Ուրարտուի տարածքների միջև՝ Սիմեսի լեռնանցքից հյուսիս-արևելք, Գիլզանու-Գոսինիից հարավ-արևելք, Մովանա-Յուկսեկովա գծից հարավ: Բագլարից (Ների) մոտ 5 կմ հյուսիս-արևելք, Շեմդինլիից 2 կմ և Զերգանից մոտ 12 կմ հյուսիս-արևմուտք գտնվող **Շապաթան** բնակավայրը հավանաբար պահպանել է **Ծ/Զապպարիայի** անունը: Մովանայի կոթողի տեղադրությունը հիմք է տալիս ենթադրելու, որ Մուսասիրի հյուսիսային սահմանը հասել է Շեմդինան սուի վերին ավազան, իսկ Թոփուզավայի, Քելյաշինի և Մերգեհ Քարվանի երկլեզվյան կոթողները՝ որպես սահմանաքարեր, դրվել են Մուսասիրի հարավային՝ Մաննայի և Ասորեստանի

196 Այլ կարծիք տե՛ս, օր., **Tourovets A.**, The Assyrian Itineraries in the Zagros during the reign of Sargon II (6th and 8th campaigns) and the question about the correlation between Toponymy and Geography, Iranian journal of archaeological studies, 5, 2015, էջ 23, գծպտկ. 2:

սահմանին: Ըստ այդմ՝ Խուբուշկիա-Մուսասիր սահմանը հավանաբար ձգվել է Ների-Հարան գծով:

Խաբխի երկրի և Խուբուշկիայի հարևանությունը փաստում է Սարգոն II-ը՝ նշելով, որ Վերին Զաբը, որի ափին էր Խուբուշկիա քաղաքը, Նաիրիի և Խաբխիի մարդիկ անվանում են Էլամունիա: Ակնհայտ է՝ վերջինս հոսում էր Խուբուշկիայի և Խաբխիի տարածքով: Բացի դրանից՝ Խուբուշկիայի հարևան Թումմե-Թումմնին Խաբխիում էր, իսկ նրանց հարևան Կիրրուրին հեռու չէր Ներքին Խաբխիից: Խուբուշկիայից Ասորեստան տանող կայաններից Անիսուն ևս գտնվում էր Խաբխիի մոտակայքում: Խաբխին ներառում էր ոչ միայն Թումմե-Թումնին, այլև Սուգին (Սուկի), Ուկկումանի-Կումանին[197] և նրա շրջաններից Խիմեն, Ուատկուն-(Յ)Ատկունը և Լուխին պատկանում էին նաև Ուրուատրի երկրին[198]: Խաբխիի հարավային սահմանը հավանաբար անցնում էր Արլ. Խուբուր-Միզուրի լեռներ գծով, հյուսիսայինը հասնում էր Արլ. Խաբուրի և Խեզիլի վերին ավազան և Զուլամերկի ու Թխումի միջնատարածք, արևելյանը անցնում էր Ավ ի Մարկե գետով, արևմտյանը հասնում էր Արարատ-Զուդի լեռնաշղթայի արևելյան և Մեխրի-Մեհրի Նար լեռան շրջակայք: Խաբխին մի քանի պետություններ ներառող տարածաշրջան էր, և Մեծ Զաբը Լևին սուի ավազանից մինչև Շեմդինանի գետաբերան հոսում էր նրա տարածքով[199]: Եվ պատճառ չկա տարբերակելու Սարգոն II-ի 8-րդ արշավանքի սկզբում և վերջում հիշատակվող Վերին Զաբը. Էլամունիան հոսում էր Խուբուշկիայի և Խաբխիի տարածքով՝ Ուրարտուի և Ասորեստանի միջև: Իսկ Խուբուշկիան Խաբխիին սահմանակցում էր Թխումի հյուսիսում և արևելքում, գուցեև՝ Լևին սուի ավազանում:

Անիսու և Խարրանիա բնակավայրերն ընկած էին Խուբուշկիայից Ասորեստան, Մաննայից Խուբուշկիա և Ասորեստան տանող ճանապարհներին՝ իրարից մեկ օրվա հեռավորությամբ: Խարրանիան նաև Գիլզանու-Գոսնիից Մաննա տանող ճանապարհին էր. Դայան-Աշշուրը Գիլզանու հասնելուց և նրա հարկը ստանալուց հետո հիշատակում է Մաննայից, Գաբուրիսա քաղաքից, Խարրանիա, Շաշգանա, Անդիա երկրներից հարկ ստանալու մասին: Ակնհայտ է՝ որտեղ էլ գտնվեին Գիլզանուն և Խուբուշ-

197 Ու/Կումանիի անունը պահպանել է ժամանակակից Կոմանա բնակավայրը՝ ընկած Ամադիայից 9 կմ հարավ-արևելք (տե՛ս ТУ, էջ 119-120): Այս երկիրը տարածվում էր Կոմանա-Արլ. Խաբուրի գծից հյուսիս՝ ներառելով Գեֆշեն ու Մեհրի Նարը՝ հասնելով մինչև Մուսրու-Մոկք: Դա կուտիական երկիր էր (տե՛ս **Սարգսյան Ա.**, 2019, էջ 236). նրա հյուսիս-արևելյան հարևանը Ուկկուի թագավորությունն էր, որի անունը պահպանել է ժամանակակից Ալկին. վերջինս ևս կարող էր լինել խաբխիական երկիր:

198 Հմմտ. АВИИУ, 2, 19: RIM 1, A.0.77 1 (22-46): RIM 2, A.0.87 1 (iv7-31):

199 Վերին Զաբի էլամունիա անունը կապված է էլամունի երկրի անվան հետ, որտեղից Թիգլաթպալասար I-ը արշավել էր Թալա (Թաղ-Շատախ)-Խարուսա (Առնոս)-Մուսրու (Մոկք)-Խունուսու (Մեհրի Նար լեռան շրջակայքում)-Կիպշունա (Գեֆշե) (տե՛ս RIM 2, A.87 1 (v67-81), (v70), (v82-98), (v99 - vi21), (vi22-38): Էլամունի-Էլամուիայի անունը պահպանել են Ալաման-Ավլաման բնակավայրն ու Կուլա Մանիկ դաղը՝ ընկած Մերվանի մոտակայքում, Մեծ Զաբի Լևին սուի վտակի ակունքների շրջանում (այս տեղավայրերի տեղադրության վերաբերյալ տե՛ս, օր. , **Меликишвили Г. А.**, К вопросу о древнейшем очаге урартских племён, ВДИ, 1947, N 4, էջ 28: **Манандян Я.,** 1956, էջ 12: ТУ, էջ 253):

կիան, Խարրանիայի հարկը հնարավոր չէր ստանալ մերձուրմյան շրջանում. նա Ասորեստանին ավելի մոտ էր, Սարգոն II-ի ժամանակ՝ Ասորեստանի կազմում: Մաննայի հարկը ևս Դայան-Աշշուրը ստացել է Մաննա ներխուժելով, իսկ մնացած երկրներն ու բնակավայրերը ցույց են տալիս Մաննա անցնելու երթուղին: Գիրդիի և Կանի Ռաշի միջև են գտնվում ժամանակակից **Բիսգան**, **Հարան**, **Շանաշա** և **Հադինա** բնակավայրերը, որոնք համադրելի են **Գաբուրիսային**, **Խարրանիային**, **Շաշգանային** և **Անդիային**[200]: Այնուհետ հիշատակվող **Պերրիա** և **Շաթթուարիա** բնակավայրերի անունները պահպանել են ժամանակակից **Պարաս** բնակավայրն ու **Շաթրա** լեռը. վերջինս գտնվում է Քելյաշինի լեռնանցքից հյուսիս, Բարասգիրի և Գադարի ջրբաժան հատվածում, Ուշնուից հարավ-արևմուտք, իսկ Պարասը նրա և Հադինայի միջև է, Բարասգիրի աջափնյա ավազանում[201]: Ստացվում է՝ Գիլզանու-Գոնսիից Դայան-Աշշուրը իջել է Ռուբար ի Հաջի Բեգ գետի ստորին ավազան, Բիսգան-Հարան-Շանաշա-Հադինա-Պարաս-Շաթրա երթուղով հասել Բերդե Բուքի լեռնանցք, Գադար չայի ավազանով թափանցել է Սուֆիան և Մաննայի արևմտյան շրջաններով իջել Բուշտու (Պարաստան):

Անիսուն Խարրանիայից և Ասորեստանի **Իերի** քաղաքից գտնվում էր մեկ օր՝ շուրջ 30-40 կմ հեռավորության վրա՝ Խաբխիի ուղղությամբ՝ ասորեստանյան սահմանապահ **Բիրաթե** ամրոցի մերձավորությամբ[202]: Շեմդինան սուի ստորին ավազանում, Արդիլայի և Հերկիի միջնամասում, Հարանից մոտ 30 կմ հյուսիս-արևմուտք և Իրվանից մոտ 42 կմ հյուսիս-արևմուտք գտնվող **Սինա** բնակավայրը հավանաբար համապատասխանում է սեպագրական **Անիսուին**: Սա խաբխիական Սուգի-Սուկիից շուրջ 10 կմ հյուսիս-արևելք է: Ասորեստանը Մուսասիրը բռնակցելուց հետո Մաննայի հետ դժվար թե հանդուրժեր իրենց միջև ուրարտական հենակետերի գոյությունը, և Ուրմիա լճի հարավային և հարավարևմտյան շրջանները են-

200 Այս Անդիան չի կարող համապատասխանել Զիկիրտուից արևելք՝ Քարանգուի ավազանում ընկած Անդիա երկրին. Դայան-Աշշուրի գրված տեղավայրերը կողք կողքի էին, և Անդիան պետք է լիներ նրանց շարքում: Անդիա-Հադինա նույնացման վարկածն առավել տրամաբանական է. վերջինս գտնվում է Կանի Ռաշի հյուսիսում՝ կրելով նաև Ռուբար անունը:

201 Շաթթուարիան համապատասխանում է ուրարտական Շաթթերա շրջանին, որի կառավարիչը մահապատժի էր ենթարկվել Քար-Սիպարի (Զիբար) դիմացի 2 շրջանների, Ուազաեի (Ուեսի/Ուայաիա/Ուայիսիկ կամ Ուիշե/Ուշնու), Մուսասիրի դիմացի շրջանի և 4 այլ շրջանների կառավարիչների հետ (տե՛ս АВИУ, 50 (1)): Շաթթուարիա-Շաթթերան նույնական է նաև Մենուայի հիշատակած Շաթիրու երկրին, որն ապստամբել էր, և արքան, գրավելով նրա Խուրադինաքու, Գիդիմարու և Թարզույանանա քաղաքները, կտրել-անցել էր Բուշտու (տե՛ս УКН II, 372, 373): Խուրադինաքուի անունը հավանաբար պահպանել են Խերենա բնակավայրն ու Խերենա Գետիկ լեռը՝ ընկած Ուշնուից արևմուտք, Շաթրայից հյուսիս, Գիդիմարուն կարող է համընկնել Ուշնուից հարավ-արևմուտք՝ Գադարի ափին գտնվող Մերովա բնակավայրին: Ըստ այդմ՝ Շաթթուարիա-Շաթիրու-Շաթթերան ընկած էր Քելյաշինի, Բերդե Բուքի լեռնանցքների և Ուշնուի միջև՝ Շաթրա լեռան շրջակայքում՝ հսկողության տակ պահելով այդ լեռնանցքներն ու Ուշնուի արևմուտքով Քելյաշինի լեռնանցք ու Փոքր Զաբի ավազան տանող ճանապարհները:

202 Տե՛ս **Parpola S.**, The Correspondence of Sargon II, Part I: Letters from Assyria and the West, Helsinki, **1987,** (այսուհետ՝ SAA 1), 45: Իերին գտնվում էր (Ներքի՞ն) Զամուա տանող ճանապարհին (տե՛ս **Lanfranchi G.**, 1995, էջ 134-135)՝ հավանաբար համապատասխանելով Զիբարի և Սորանի միջև գտնվող ժամանակակից Իրվան բնակավայրին: Բիրաթեն գուցե համընկնում է Սինայից 8-9 կմ հյուսիս-արևմուտք և Սուկիից հյուսիս գտնվող Բեհեդա բնակավայրին. Բիրաթե-Բեհեդան Ասորեստանի սահմանապահ ամրոցն էր Խաբխիի սահմանին, և նրա կառավարիչը Անիսու էր եկել՝ զեկուցելու Բիրաթեում և Խաբխիում տիրող վիճակը:

թարկվել են Մաննայի, Ասորեստանի, այնուհետ սկյութների կողմից հարձակումների: Վերջիններս Մաննայից հավանաբար մոտեցել էին Քելեշին Մերգավառ Գեդիկի լեռնանցքին, որ տանում էր խուբուշկիա-ասորեստանյան սահման՝ Խարաննիա-Հարան և Անիսու-Սինա: Ասորեստանի և Խուբուշկիայի սահմանը հավանաբար անցնում էր Շեմդինան սուի և Ռու Քուչուկի միջնամասով, և այս շրջանի ասորեստանյան կառավարիչը պատասխանատու էր Խուբուշկիայի արքայի երթուղու անվտանգության և ժամանակացույցի համար: Խուբուշկիայի հարկը Խուբուշկիայի Յանզու արքան Անիսու և Խարրանիա էր տեղափոխել 23 օրում. դրա մեծ մասը պետք է հավաքվեր ճանապարհին. անիմաստ կլիներ հարկը, որի մեծ մասը անասուններ էին, տեղափոխել երկրի հյուսիս-արևմուտքում գտնվող մայրաքաղաք, այնուհետ իջեցնել հարավ: Այդ էր պատճառը, որ տեղաշարժն ընթացել էր դանդաղ[203]: Եթե հարկն Անիսուով իջեցնեին, մեկ օր շուտ կհասնեին նախատեսված վայր, եթե Խարրանիայով տեղափոխեին, մեկ օր ավելի կտևեր, քանզի այդ մեկ օրը Անիսուի մոտակայքից պետք է հասնեին Խարրանիա: Այս ամենից ակնհայտ է՝ Անիսուն և Խարրանիան Կիրրուրից հյուսիս էին՝ մեկը Խաբխիի ուղղությամբ, մյուսը՝ Մաննայի, իսկ Խուբուշկիան Անիսուի և Խարանիայի հյուսիսում էր:

Մաննայի և Խուբուշկիայի մերձավորությունը փաստված է՝ 1. Սալմանասար III-ի՝ Սունբիի և Խուբուշկիայի համատեղ հիշատակությամբ, 2. Դայան-Աշշուրի Ք.ա. 828 և 827 թթ. արշավանքներով, 3. Շամշի-Ադադ V-ի 3-րդ արշավանքով, 4. սկյութների՝ վերը նշված արշավանքով: Խուբուշկիան և Մաննան մինչև Իշպուինիի և Մենուայի կառավարումը և Սարգոն II-ի 8-րդ արշավանքից հետո հաղորդակցվում էին Քելյաշինի, Բերդե Բուքի և Քելեշին Մերգավառ Գեդիկի լեռնանցքներով: Հետևաբար Խուբուշկիան գտնվում էր Մաննայից հյուսիս-արևմուտք:

Խուբուշկիա մայրաքաղաքը երկրի հյուսիս-արևմուտքում էր՝ Ուայահսի և Գիլզանուի ուղղությամբ. այնտեղ անցնում էին Սիմեսի-Արիդու-Խուբուշկիա-Սուգունիա, Գիլզանու-Շիլայա-Խուբուշկիա երթուղիներով և Ուայահսից Վերին Զաբի ափ 4 բերու արշավելով: Խուբուշկիա քաղաքից Ասորեստան անցնում էին Թումմե-Կիրրուրի, Անիսու և Խարրանիա երթուղիներով: Խուբուշկիա քաղաքից Մուսասիր քաղաք արշավում էին Վերին Զաբը հատելով և 4 լեռներ անցնելով: Ստացվում է՝ Խուբուշկիան Մեծ Զաբի աջ ափին էր՝ Կուր ի Հորե-Արդիլա-Սինա-Թխում գծից հյուսիս, Բարադոստ-Հարան-Շապաթան գծից հյուսիս-արևմուտք, Սուկան-Էսպին-Ուայի-

203 Ս. Պարփոլան և Զ. Լանֆրենքին կարծում են, որ Խուբուշկիայից դեպի Ասորեստան տանող ճանապարհին հիշատակվող Wa(…) բնակավայրի անունը պետք է կարդալ Wa(isi) (տե՛ս SAA 5, 133): Սակայն Ուայահսը Խուբուշկիայի հյուսիսում էր, ոչ թե հարավում, և երկրորդ՝ Խուբուշկիայի հարկը դեպի Ասորեստան ուղղակի չէր կարող տեղափոխվել Ուայահսով, որը հսկում էր Ուրարտուից հարավ ընկած բուֆերային երկրներին, որոնք խուսանավում էին Ասորեստանի և Ուրարտուի միջև: Ուայահսը չէր գործի Ուրարտուի դեմ և թույլ չէր տա Խուբուշկիայի հարկը իր տարածքով փոխադրել թշնամական երկիր:

սիկ գծից հարավ, Գոսինի-Չիրի Չիրայա գծից հարավ-արևմուտք՝ ցուցանելով Մեծ Զաբի և Լևին սուի միջնատարածքը: Այստեղ ամենանշանավոր քաղաքը Հաքքյարի-Զուլամերկն է[204], որը գտնվում է Արդիլայից մոտ 65 կմ և Թխումից 32 կմ հյուսիս, Չիրի Չիրայաից 13 կմ և Գոսնիից 55 կմ հարավ-արևմուտք, Սուկանից 40 կմ և Ուայիսիկից՝ 26 կմ՝ շուրջ 4 բերու հարավ-արևմուտք:

Այսպիսով՝ Խուբուշկիայի հյուսիսային սահմանն անցնում էր Էսպին-Ուայիսիկ-Յուկսեկովա գծի հարավով, արևմտյանը՝ Ավ ի Մարկե գետի ավազանով, հարավայինը՝ Սինա-Հարան գծով: Խուբուշկիայի տարածքը հյուսիս-արևմուտքում հավանաբար հասնում էր Լևին սու, արևելքում՝ Յուկսեկովայի հարթավայր, Շեմդինանի վերին ավազան և Հարան: Մայրաքաղաք Խուբուշկիան Սիկանիս-Էսպին-Ուայիսիկ-Արդիլա և Գոսինի-Չիրի Չիրայա-Թխում-Կուր ի Հորե երթուղիների հատման կետում էր՝ Մուսասիրից հյուսիս-արևմուտք, Մեծ Զաբի աջափնյակում՝ համապատասխանելով Զուլամերկին: Սարգոն II-ի զորքը Ուայաիս-Ուայիսիկից շարժվել է Խուբուշկիա-Զուլամերկ, այնուհետ՝ արևելքում գետանցել Մեծ Զաբը, շարժվել Մուսասիր: Իսկ հիմնական ուժերը, հավանաբար, Ավ ի Մարկեի ավազանով վերադարձել են Կալխու:

IV. Մուսասիրի տեղորոշումը

Մուսասիրը Ասորեստանի, Ուրարտուի, Մաննայի և Խուբուշկիայի միջև բուֆերային թագավորություն էր: Նրա տեղադրությունն ավելի որոշակի է՝ պայմանավորված Քելյաշինի, Թոփուզավայի, Մերգեհ Քարվանի և Մովանայի երկլեզու արձանագրությունների տեղադրությամբ և հիշատակություններով[205]: Գիտության մեջ առավել ընդունված է Մուսասիրի՝ Ռևանդուզ գետի և Բարադոստի լեռների միջև տեղադրության վարկածը: Մուսասիր քաղաքը նույնացվում է Սիդեկանից հյուսիս-արևմուտք գտնվող Մուջեսիր բնակավայրին[206]: Սակայն այսպիսի տեղադրությամբ խնդիրը չի

204 Զուլամերկը հայկական աղբյուրներում հիշատակվում է 10-11-րդ դարից Զայլամար-Զլմար տարբերակներով՝ կապված Ք.ա. 2-րդ դարի իրադարձությունների հետ (տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, Պատմություն Արծրունյաց տան, Եր., «Սովետական գրող» հրատ.,1987, էջ 75-76): Խուբուշկիա-Զուլամերկ/Հաքքյարի համընկնման վարկածն առաջադրել է Ն. Ադոնցը (1972, էջ 79), որը պաշտպանել են, օր., Պ. Պեկորելան և Մ. Սալվինին (1982, էջ 4, գծպ. 1), Ի. Մեդվեդսկայան (1989, էջ 111-114), Ա. Սարգսյանը (2000, էջ 145, 151, ծան. 62):

205 Տե՛ս УКН, 19, 264: **André-Salvini B., Salvini M.**, The bilingual stele of Rusa I from Movana, SMEA, 44/1, 2002, էջ 5-66, (այսուհետ՝ **André-Salvini B., Salvini M.**, 2002): Մուսասիրը հիշատակվում է Ք.ա. 9-րդ դարի 70-60-ական թթ. մինչև Ասարխադոնի ժամանակաշրջանը: Տեղադրության վարկածները ամփոփ տե՛ս **Սարգսյան Ա.**, 2000, էջ 140, ծան. 1-12:

206 Տե՛ս **Lehmann-Haupt C. F.**, 1926, էջ 299, 310, 326: **Boehmer R. M.,** Zur lage von Musasir, “Bagdader Mitteilungen”, 1973, Bd. 6, էջ 31-40: **Salvini M.**, Musasir. A. Historisch, in: RlA, 1993-1997, էջ 444-446: **Reade J. M.**, 1994: **Radner K.**, Between a rock and a hard place: Muṣaṣir, Kumme, Ukku and Šubria – the buffer states between Assyria and Urartu. Biainili-Urartu, The proceedings of the symposium held in Munich 12-14 october 2007, Acta Iranica, 2012, էջ 243-264, (այսուհետ՝ **Radner K.**, 2012) և այլք:

կարելի լուծված համարել, և ուսումնասիրողները չեն դադարեցնում Մուսասիրի տեղորոշումը՝ առաջադրելով նոր վարկածներ[207]:

Ասորեստանյան և ուրարտական սեպագիր հիշատակությունները Մուսասիրի տեղադրության վերաբերյալ փաստում են հետևյալը. այն հարևան էր՝ 1. Խուբուշկիայի թագավորությանը, 2. Ուրարտուի մերձուրմյան տարածքներին, 3. Ասորեստանի արքունի սենեկապետի տիրույթներին. հեռու չէր՝ 1. Գիլզանուից (Գհոսնի), և նրանց միջև առկա էին ուրարտական տիրույթներ, 2. Ուայաիս ամրոցից (Ուայիսիկ), 3. Խուբուշկիա քաղաքից (Ջուլամերկ), 4. Քար-Սիպարից (Ջիբար)[208], 5. Մաննայից[209], 6. Վերին (Մեծ) Զաբ գետի ավազանից և Սիմեսի լեռնանցքից (Սեր ի Մուսակա՞), որտեղից Մուսասիր էին հասնում Խուբուշկիայի տարածքով:

Բացի վերը նշվածից՝

1. Խուբուշկիան սահմանակցում էր Մուսասիրի Ծ/Զապպարիա ամրոցի շրջակայքին, որտեղից ներխուժում էին Ուրարտուի տարածք, այնուհետ՝ Գիլզանու.
2. Ուրարտուից Մուսասիր մտնում էին և՛ Ուայաիսով, և՛ Խուբուշկիայով, իսկ Մուսասիրից Ուրարտու՝ նաև Մովանայով, Մուսասիրից հետևում էին նաև Ուայաիսի անցուդարձին[210].
3. Խուբուշկիա քաղաքից Մուսասիր քաղաք երթուղին անցնում էր Վերին Զաբ (Էլամունիա) գետով և Շեակ, Արդիկշի, Ուլայաու և Ալլուրիա լեռներով.
4. Մուսասիր քաղաքից Ասորեստան անցնում էին Անդարութթա լեռնանցքով՝ դուրս գալով Խիպպարնա քաղաքի դիմաց.
5. Մուսասիրից Արբելա ճանապարհն անցնում էր ժամանակակից Խեֆթոնով (Խիպթունա)[211], որտեղից Մուսասիր 11, իսկ Մուսասիրից Արբելա 14 օրվա ճանապարհ էր: Սա Ասորեստանի տարածքում անցնում էր Ալամու-Խիպթունա-Մուսի-Իսսեթ-Արբելա երթուղով[212].

---

207 Օր.՝ Ա. Հակոբյանը Մուսասիրը տեղադրել է պատմական Մեծ Հայքի Մոթողանք գավառում՝ նույնականացնելով ժամանակակից Մազրա բնակավայրին (տե՛ս **Հակոբյան Ա.**, 2014, էջ 40, ծան. 5, տե՛ս քարտեզը): Մոկսում Մուսասիրի տեղադրության վարկածն առաջադրվել է մեր կողմից՝ նույնացվելով այստեղ գտնվող Մուսրուին և Արինուին (տե՛ս **Սարգսյան Ա.,** 2000): Ք. Ռեդները ևս պաշտպանել է Մուսրու-Արինու և Մուսասիր-Արդինի նույնականության՝ Ի. Դյակոնովի վարկածը (տե՛ս АВИИУ, 2, ծան. 9)՝ դրանք տեղադրելով Բարադոստում և Սիդեկանի շրջակայքում (տե՛ս **Radner K.**, 2012, էջ 245-246): Սակայն պետք է հրաժարվել այս վարկածներից. Մուսրուն և Արինուն Բոհտանի ավազանում էին, Մուսասիր-Արդինին՝ մերձուրմյան ավազանից ոչ հեռու: 2014 թ. Մուջեսիրից գտնվել են ուրարտական նմանվող սյունախարիսխներ, որոնք փորձ է արվում կապել Մուսասիրի սյունակերտ տաճարի հետ (տե՛ս **Marf D.A. 2014**, The Temple and the City of Muṣaṣir/Ardini. New Aspects in the Light of New Archaeological Evidence, Subartu. A Scientific Journal Deals with Archaeology and Heritage Issued by Kurdistan Archaeology Syndicate, vol. 8, էջ 13-29):

208 Տե՛ս АВИИУ, 50 (12): Քար-Սիպարը նույնացվում է ժամանակակից Ջիբարին՝ ընկած Մեծ Զաբի և նրա ձախակողմյան Ռու Քուչուկ վտակի միախառնման շրջանում (տե՛ս ТУ, էջ 103-104):

209 Տե՛ս նույն տեղում:

210 Տե՛ս АВИИУ, 50 (2):

211 Այս բնակավայրը գտնվում է Դաշտ ի Հարիրում՝ Էրբիլից հյուսիս-արևելք (տե՛ս **Lanfranchi G.**, 1995, էջ 130):

212 Տե՛ս SAA 5, 136: **Lanfranchi G.**, 1995, էջ 128-135:

6. Մուսասիրի բնակավայրերից էր Զա(ր)զարուն, որտեղով Ռուսա I–ը անցել էր Ուրարտուից Մուսասիր քաղաք մտնելու ճանապարհին[213]: Նրա բնակավայրերից էր նաև Արծիքիելը[214].

7. Մուսասիրի և Քար–Սիպարի զինվորները պարեկություն էին անում Ուրարտուի և Մաննայի սահմանին՝ մերձուրմյան հատվածում[215]:

Այսպիսի առատ փաստերի համադրումից հասկանալի է՝ Մուսասիրն ընկած էր Թոփուզավա–Քելյաշինի լեռնանցք–Մերգեի Քարվան գծի ու Մովանայի միջև, և Մուսասիրն Ուրարտուի հետ սահման ուներ ոչ միայն Ուրմիա լճի ուղղությամբ, այլև Մուսասիրի և Գիլզանու–Գոսինի միջև՝ Մովանա–Յուկսեկովա գծի մերձակայքում[216]: Մուսասիրի Ծ/Զապպարիա ամրոցը և 46 բնակավայրերն ընկած էին Գոսինիից հարավ–արևելք, ժամանակակից Շեմդինլի–Շապաթան–Հարունա ճանապարհի ուղղությամբ, իսկ նրանց ու Գիլզանուի միջև ընկած Ուրարտուի 50 բնակավայրերը Յուկսեկովայի և Մովանայի միջնամասում էին:

Մուսասիրի այսպիսի տեղադրության մասին է վկայում նաև Մուսասիրի Ուրզանա արքայի՝ Արբելա այցի երթուղին[217]: Ուրզանան, Մուսասիրից շարժվելով, 10–րդ օրը հասել էր **Ալամու** (**Մամուլա՞**), 11–րդ օրը՝ **Խիպթունա** (**Խեֆթոն**), 12–րդ օրը՝ **Մուսի** (**Մարզա՞ն**), 13–րդ օրը՝ **Իսսեթ** (**Զիարաթ**),14–րդ օրը՝ **Արբելա** (**Էրբիլ**)[218]: Խնդիրն այն է, որ Մուջեսիրը Խեֆթոնից ուղիղ գծով մոտ 35 կմ հեռավորության վրա է, իսկ Խեֆթոնը Էրբիլից՝ շուրջ 60 կմ հյուսիս–արևելք: Սա վկայում է այն մասին, որ Մուջեսիրից Խեփթոն մոտ 1–1,5 օրում հնարավոր էր հասնել, սակայն Ուրզանան այստեղ էր հասել Մուսասիրից դուրս գալու 11–րդ օրը, իսկ մուսասիր–ասորեստանյան սահման՝ Ալամու,10–րդ օրը: Ուրզանան հարկ էր տեղափոխում և շարժվում էր դանդաղ, որի պատճառով Խեֆթոնից Էրբիլ հասել էր 3 օրում. Մուսասիրի տարածքում նա ավելի դանդաղ պետք է շարժվեր՝ իր

---

213 Տե՛ս **André-Salvini B., Salvini M.**, 2002, էջ 21, 23: Տառադարձությունում նշված է URUZa-za-r[u], իսկ թարգմանությունում՝ Zarzaru:

214 URU Ar-si-qi-el [-ը հիշատակվում է Մերգեի Քարվանի արձանագրությունում (տե՛ս նույն տեղում, էջ 21, ծան. 85):

215Հիշատակություններից մեկում նշվում է, որ ծովափի ուրարտական բնակավայրերի մաննայական բնակչության ապստամբելու պատճառով Քար-Սիպարի և Մուսասիրի զորքերը պարեկության են գնացել Մաննայի սահման (տե՛ս АВИИУ, 50 (12)): Այս հիշատակությունը հիմք է տվել կարծելու, որ 1. Մուսասիրի կառավարիչ Աբալկունուն Մուսասիրի ասորեստանյան կառավարիչն էր կամ 2. Մուսասիրը Ուրարտուի գերիշխանության ինչ-որ փուլում վերածվել է մարզի, և Աբալկունուն Մուսասիրի ուրարտական կառավարիչն էր (տե՛ս **Գրեկյան Ե.**, 2016, էջ 92-93): Սակայն Քար-Սիպար-Զիբարը Կիրրուրի-Կուր ի Հորեի հարավում էր և չէր կարող դուրս լինել Ասորեստանի տարածքից: Այս հիշատակությունը հավանաբար վերաբերում է Ք.ա. 714 թ. հաջորդած շրջանին, երբ Մաննան Ասորեստանի խրախուսմամբ իր սահմանները շարժում էր հյուսիս. նրանք փորձում էին այստեղից վերջնականապես դուրս մղել Ուրարտուին: Այս ծրագիր էին ներքաշվել նաև ուրարտական բնակավայրերի մաննայացի բնակիչները:

216 Դեռևս 1912 թ. Ֆ. Թյուրո-Դանժենը առաջադրել էր վարկած, ըստ որի՝ Մուսասիրը գտնվում էր Դիզե-Գյավառում, և Քելյաշինի ու Թոփուզավայի կոթողները ցույց են տալիս նրա հարավային սահմանը (տե՛ս **Thureau-Dangin F.**, 1912, էջ XVI-XVII):

217 Տե՛ս SAA 5, 136:

218 Զիարաթ, Մարզան, Խեֆթոն, Մամուլա բնակավայրերը ընկած են էրբիլի և Բարազգիրի ավազանի միջև (տե՛ս քարտեզը):

բնակավայրերից հարկ գանձելով: Այսպիսի տրամաբանությամբ Մուսասիր քաղաքից Խեֆթոն մոտ 90–100 կմ հեռավորություն պետք է լիներ: Խեֆթոնից Մովանա ուղիղ գծով շուրջ 107 կմ է, Թոփուզավայից Մովանա՝ շուրջ 88 կմ, Քելյաշինի լեռնանցքից Մովանա՝ մոտ 76 կմ: Ակնհայտ է՝ Մուսասիր քաղաքի առավել հավանական տեղադրությունը ոչ թե Մուջեսիր–Թոփուզավա–Քելյաշինի լեռնանցք հատվածում է, այլ այդ գծից Մովանա ընկած տարածքի միջնամասում՝ Շեմդինլիում՝ Շեմդինանի վերին ավազանում՝ Զերզանում: Վերջինս հավանաբար պահպանել է Մովանայի արձանագրությունում հիշատակվող **Զա(ր)զարու** բնակավայրի անունը: Ռուսա I–ը Մուսասիր էր թափանցել Ուայիսիկ–Յուկսեկովա երթուղով, իսկ Մովանայի կոթողը կանգնեցրել էր Մուսասիրից Ուրարտու վերադառնալու ժամանակ: Զա(ր)զարուն գտնվում էր Յուկսեկովայի և Մուսասիր քաղաքի միջև, իսկ 4 երկլեզու կոթողները տեղադրվել էին Մուսասիրի սահմաններին՝ ի նշան Մուսասիրի նկատմամբ Ուրարտուի գերիշխանության:

Սարգոն II–ը Խուբուշկիա–Զուլամերկից Սումբուլ դաղի (Արսիո՞ւ) արևմտյան մերձակայքով և Մեծ Զաբի ավազանով մոտ 8 կմ շարժվել է հյուսիս–արևելք, Դեզի Դերրեի գետաբերանի մոտ հատել Մեծ Զաբը[219] և շարժվել Յուկսեկովայի հարթավայրի ուղղությամբ, այնուհետ թեքվել հարավ–արևելք, Նեհիլ չայի ձախափնյակով, Կոնիա Սավարայի լեռնանցքով և Հարունա բնակավայրի մոտակայքով մտել Շեմդինլիի լեռնաձոր և հասել Զերզան: Այս երթուղու երկարությունը շուրջ 90 կմ է, որը հնարավոր էր հաղթահարել 3 օրում: Սարգոն II–ի հիշատակած 4 լեռներն այս երթուղու շրջակայքում են: Յուկսեկովայից հարավ–արևմուտք է գտնվում ժամանակակից **Ալեյան** բնակավայրը, որը պահպանել է Սարգոն II–ի հիշատակած **Ուլայաու** լեռնանունը: Վերջինից հյուսիս–արևմուտք և Զուլամերկից արևելք՝ Բիլիջիի շրջանում է գտնվում ժամանակակից **Շակիթան** բնակավայրը, որի անունն հավանաբար կապված է **Շեակ** լեռնանվան հետ: Նրանից հարավ, Ալեյանից հյուսիս–արևմուտք, Նեհիլի Ուշ Դերրե վտակի ձախափնյակում է գտնվում **Օրիշա** բնակավայրը, որի անունն էլ, հավանաբար, սերում է **Արդիկշի** լեռնանունից: **Ալլուրիան,** հավանաբար, իր անունն է թողել **Հարունա** բնակավայրին՝ տեղակայված Յուկսեկովա–Շեմդինլի և Ալեյան–Շեմդինլի ճանապարհների խաչմերուկում: Այստեղից Սարգոն II–ը մտել է Մուսասիրի տարածք և Հարունա–Շապաթան–Շեմդինլի ճանապարհով հասել սրբազան քաղաք: Շեմդինլիից մոտ 10 կմ հարավ–արևելք, Կանի Ռաշից շուրջ 36 կմ հյուսիս–արևելք, թուրք–իրանյան սահ-

219 Զուլամերկից նմանատիպ երթուղի է առաջարկում նաև Ի. Մեդվեդսկայան (1997, գծպտկ. 1): Խնդիրն այն է, որ Զուլամերկից անմիջապես արևելք հզոր լեռներ են և՛ Մեծ Զաբի գետանցման, և՛ արևելք շարժման հարմար ուղին Մեծ Զաբի ձախակողմյան վտակ Դեզի Դերրեի ավազանն է, որտեղ են գտնվում նաև Չիրի Չիրայա, Չամի Չիրի Չիրայա բնակավայրերը (սեպ.՝ Շիլայա): Ըստ Ն. Ադոնցի՝ Խուբուշկիա-Զուլամերկից Սարգոն II-ը Մուսասիր էր հասել Դիզա-Նեհրի երթուղով (տե՛ս **Ադոնց Ն.**, 1972, էջ 113):

մանից մոտ 10 կմ արևմուտք, Քելեշին Մերգավառ Գեդիկի լեռնանցքից 12 կմ հյուսիս-արևմուտք Շեմդինան սուի վերին ավազանում են գտնվում **Մասիրո** և **Մասիրա** անունով 2 հարևան բնակավայրեր, որոնք, հավանաբար, կապված են Մուսասիր քաղաքի անվան հետ: Այս բնակավայրերն ուղիղ գծով Մովանայից գտնվում են մոտ 38 կմ, Քելյաշինի լեռնանցքից՝ 45 կմ, Թոփուզավայից՝ 50 կմ, Խեֆթոնից՝ 88 կմ, Էրբիլից՝ 132 կմ, Ուայիսիկից՝ 74 կմ, Ջուլամերկից՝ 89 կմ, Շապաթանից՝ 12 կմ, Ուրմիա լճից՝ 56 կմ, Գոսինից՝ 70 կմ, Ուշնուից՝ 48 կմ հեռավորության վրա, և այստեղից հնարավոր էր 14 օրում հարկ տեղափոխել Էրբիլ: Սարգոն II-ի զորքը ծանրաբեռնված էր ավարով ու գերիներով և Ասորեստան պետք է վերադառնար ամենակարճ՝ Զերզան-Բարադոստ կամ Զերզան-Զիբար երթուղով, որն անցնում էր **Անդարութթա** լեռնանցքով՝ դուրս գալով **Խիպպարնա** քաղաքի դիմաց[220]: Վերջինս, հավանաբար, ժամանակակից **Բերոխ** բնակավայրն է[221], ընկած Կանի Ռաշից 15 կմ արևմուտք, Հարանից 5 կմ հարավ-արևմուտք, իսկ Անդարութթա լեռը **Չիա Դարե** լեռնագագաթից **Բալութիա** և **Մավան** բնակավայրեր ձգվող **Ռաշ ի Ռուվան** դաղն է. սա ընկած է Ռուբար ի Հաջի Բեգ գետի աջափնյակում՝ թուրք-իրաքյան սահմանին զուգահեռ՝ հյուսիսից և հարավից ձևավորելով լեռնաձորեր, որոնք միանում են Մավանում՝ ապահովելով Զերզան-Բարադոստ և Զերզան-Զիբար անցումը: Սարգոն II-ը ընտրել է **Մասիրո-Չիա Դարի-Բալութիա-Բերոխ-Հուպա-Զիբար** երթուղին և շարժվել Կալխու[222]:

Մուսասիրի թագավորությունը հյուսիսում սահմանակցում էր Մովանայի և Յուկսեկովայի հարավային շրջակայքին, արևելքում՝ Զագրոսով՝ Ուրարտուի մերձուրմյան տարածքներին, հարավում և հարավ-արևմուտքում՝ Հարան-Բարադոստ-Մուջեսիր-Թոփուզավա գծով՝ Ասորեստանին, հարավ-արևելքում՝ Քելյաշինի լեռնանցքով՝ Սուբի-Սուֆիանին և Մաննային, արևմուտքում և հյուսիս-արևմուտքում՝ Հարունա-Նեհրի-Հարան գծով՝ Խուրուշկիային: Խալդի աստծու սրբազան քաղաքը Զերզանում էր՝ մոտ Ուրարտուի հարավային և մերձուրմյան տիրույթներին՝ ունենալով բնական լավ պաշտպանվածություն և բնակլիմայական բարենպաստ միջավայր: Իսկ Մուջեսիրը, հավանաբար, պահպանել է Մուսասիր երկրի, այլ ոչ թե քաղաքի անունը:

Մինչև Իշպուինիի և Մենուայի ռազմերթը Քելյաշինի լեռնանցք և Աշշուրնազիրպալ II-ի և Սալմանասար III-ի կողմից Զիբարի և Կիրրուրիի

---

220 Անդարութթան հիշատակվում է նաև Մովանայի երկլեզու կոթողում (տե՛ս **André-Salvini B., Salvini M.**, 2002, էջ 22-23):

221 Խիպպարնան կարող է համապատասխանել նաև Բերոխից 4 կմ հարավ-արևմուտք գտնվող Հուպա բնակավայրին:

222 Խիպպարնան Ասորեստանի տարածքում էր՝ Խարրանիա-Հարանի մերձավորությամբ: Վերջինս Ասորեստանի կազմում էր, և նրանից հարավ-արևմուտք գտնվող Բերոխն ու Հուպան ևս Մուսասիրից դուրս էին՝ հավանաբար Ասորեստանի արքունի սենեկապետի տիրույթներում:

բռնակցումը Մուսասիրը, հավանաբար, ընդհանուր սահման չուներ Ասորեստանի հետ. Իշպուինին ու Մենուան են Զագրոսի լեռնանցքները գրավել Խուբուշկիայից ու Ներքին Զամուայից և կցել Մուսասիրին ու Ուրարտուի մերձուրմյան շրջաններին՝ փակելով այս ուղղությամբ Ասորեստանի, Մաննայի և Խուբուշկիայի ճանապարհները: Շուրջ 100 տարի այս իրավիճակը պահպանվել է: Ռուսա I-ը Մուսասիրի զորքի մասնակցությամբ իրականացրել է Ասորեստանի լեռներ արշավանք՝ հասնելով Թոփուզավայի շրջակայք, պատժել Զիբարի դիմացի 2 ուրարտական շրջանների և Շաթթերայի (Շաթրա) կառավարիչներին. վերջինիս հավանաբար վստահված էր Քելյաշինի, Բերդե Բուքի լեռնանցքների և Ուշնուի արևմտյան շրջանների պաշտպանությունը: Սակայն Սարգոն II-ի 8-րդ արշավանքից հետո իրադրությունը փոխվել է. Մուսասիրը կցվել է Ասորեստանին, Ուրարտուի Ուրմիա լճի արևմտյան և հարավային պաշտպանական համակարգը ավերվել է, իսկ այդ հատվածում Զագրոսի լեռնանցքները հասանելի են դարձել Ասորեստանի և սկյութների համար:

Ուրվագծվում է նաև Ուրարտուի արքաների՝ Մուսասիր կատարած արշավանքների երթուղին. նրանք Ուայաիս-Ուայիսիկ ամրոցից շարժվում էին Յուկսեկովա-Շապաթան-Շեմդինլի ներկա ճանապարհով, հասնում Մասիրո, որտեղից կարող էին թափանցել և՛ Ուշնու, և՛ Զիբար, և՛ Բարադոստ: Իշպուինին ու Մենուան, այնուհետ Ռուսա I-ը Մուսասիր-Մասիրոյից, հավանաբար, Քելեշին Մերգավառ Գեդիկով դուրս են եկել Ուշնու, այնուհետ մտել Քելյաշինի լեռնանցք: Ռուսա I-ը հասել է նաև Թոփուզավա, վերադարձել Մերգեի Քարվան-Մովանա երթուղով: Հարց է մնում՝ արդյո՞ք Սիդեկանի շրջակայքում և Բարադոստում՝ Զիբարի դիմաց ընկած 2 շրջաններն ու Շաթթերայի շրջանը պատկանում էին Մուսասիրին, թե՞ դրանք ուրարտական շրջաններ էին, և Մուսասիրն Ասորեստանին սահմանակից էր միայն Գիրդի-Բարադոստ հատվածում[223]: Հնարավոր է, որ Իշպուինին և Մենուան այդ շրջանը կցել են Մուսասիրին, իսկ Ռուսա I-ը դրանց կառավարիչներին և Մուսասիրի արքային պատժելուց հետո այդ շրջանները կցել էր Ուրարտուին:

Այսպիսով՝ Խուբուշկիայից (**Զուլամերկ**) Սարգոն II-ի զորքը շարժվել է հյուսիս-արևելք, **Դեզի Դերրեի** գետաբերանի մոտ գետանցել Մեծ Զաբը, արշավել արևելյան, ապա հարավարևելյան ուղղությամբ՝ **Շեակ** (**Շակիթան**) և **Արդիկշի** (**Օրիշա**) լեռների միջով, **Ուլայաու** (**Ալեյան**), **Ալլուրիա**

223 Ուրարտական մահապատժի ենթարկված 9 կառավարիչների շարքում էին Մուսասիրի դիմացի շրջանի, Ուազաեի, Քար-Սիպարի դիմացի 2 շրջանների և Շաթթերայի շրջանի կառավարիչները (տես АВИУ, 50 (1)): Մուսասիրի դիմացի շրջանի կառավարիչը կա՛մ մերձուրմյան շրջանի կառավարիչն էր, կա՛մ Մուսասիրի և Ուեսիի միջև գտնվող շրջանի կառավարիչը, եթե, իհարկե, վերջիններս անմիջական հարևաններ չէին: Քար-Սիպարի դիմացի 2 շրջանները պետք է գտնվեին Բարադոստում և Սիդեկանում, Շաթթերայից (Շաթրա) արևմուտք: Դրանք չէին կարող գտնվել Զիբարի հյուսիսում, հյուսիս-արևմուտքում և հյուսիս-արևելքում, որտեղ Կիրրուրին էր, Թումմեն, Խուբուշկիան և Մուսասիրը:

(**Հարունա**) երթուղով և **Զերզանով** (**Զա(ր)զարու**) հասել **Մուսասիր** (**Մասիրո**), այստեղից շարժվել **Անդարութթա** լեռնանցքով՝ **Չիա Դարիի** հյուսիսային լեռնաձորով կամ **Ռուբար ի Հաջի Բեգ** գետի ձորով և **Խիպպարնայով** (**Բերոխ** կամ **Հուպա**) իջել **Կալխու**՝ ավարտելով արշավանքը[224]:

Արտակ Ս. Սարգսյան – հեղինակ է շուրջ տասը գիտական հոդվածների և թեզիսների: Զբաղվում է Հայկական լեռնաշխարհի հնագույն պետական կազմավորումների, Հյուսիսային Միջագետքի և Իրանական բարձրավանդակի երկրների Ք.ա. II–I հազարամյակների պատմության և պատմական աշխարհագրության հիմնահարցերով:

Էլ. հասցե – sargsyan_artak@mail.ru

224 Դեպի մերձուրմյան, Փոքր Զաբի և Շեմդինան սուի վերին ավազան տանող այս երթուղին լավ հայտնի էր ասորեստանցիներին: Գրեթե նույն երթուղով էր Ք.ա. 828 թ. Դայան-Աշշուրը դուրս եկել Մալխիսա-Մալլաիսա և Մաննա: Այսպես պետք է Քար-Սիպարի զորքերը իջնեին Մաննայի մերձուրմյան սահման՝ Մուսասիրի հետ պարեկության: Այս երթուղով էին սկյութները Մաննայից սպառնում թափանցել Խարրանիա-Հարան և Անիսու-Սինա: Թուկուլթի-Նինուրտա II-ը ևս Ք.ա. 886 թ. Կիրրուրիից (Կուր ի Հորե) Ուրրուբնու (Ռեբարո՞կ) էր դուրս եկել այս երթուղով և Զագրոսի լեռնանցքներով հասել Փոքր Զաբի վերին ավազան՝ Լուլլու:

* Սույն հոդվածը գրելիս ցուցաբերած օժանդակության համար շնորհակալություն եմ հայտնում պատմ. գիտ. դոկտոր Երվանդ Գրեկյանին:


ՍԱՐԳՈՆ II-Ի Ք.Ա. 714 Թ.
ԱՐՇԱՎԱՆՔԻ ԵՐԹՈՒՂԻՆ
Հեղինակ՝ Արտակ Սարգսյան, 2021 թ.
ՎԱՆԱ ԼԻՃ
ՈՒՐՄԻԱ ԼԻՃ

Summary

THE ITINERARY OF THE CAMPAIGN OF SARGON II IN 714 BC

New solutions for the centennial debate

Artak S. Sargsyan

Key words – Assyria, Urartu, Mannea, Nairi-Ḫubuškia, Musasir, Lake Urmia, Lake Van, Assyrian-Urartian conflict, Sargon II, 8th campaign, cuneiform sources, toponyms, identification, localization, itinerary, historical geography.

The article discusses the itinerary taken by the Assyrian army of Sargon II, king of Assyria (721-705 BC), during his campaign towards Mannea and Urartu in 714 BC. The study is based on a comparative analysis of cuneiform sources, as well as a comparison of cuneiform toponyms with modern and historical names of various regions and settlements. As the study of those sources show, the Assyrian army crossed the Great Zab river about 70 km north-east of Kalhu (Nimrud), and after 3 days overcoming about 120 km along the river Rovanduz, passes Kullar (Kaolan-Bin I Sar (Bunais)) and Govra Shinki, also crossed the river Little Zab. Having reached Gerdeh Sur and Sufian (Sumbi/Sunbi), to the borders of Manna and Urartu, the army moved eastward, crossed the mountains Nikippa (Bahram Boga) and Upa (Bai Dag), the Buia river flowing from Bai Dag, and reached Simirria (Chemelyan), entering Urartu. In the south of Lake Urmia, the army crossed the path of Biruatti (Pirtandur)-Sinabir (Shirineva)-Aḫshuru (Shahurkand)-Rappu (Tatao river) and Arattu (Jagatu river, Vararatn)-Suia (Shoria) and entered the Mannean region of Surikash, located south-east of Miandoab. From the fortress of Siniḫini (Shinabad), Sargon's army passed through the country of Allabria (in the basin of the Tatao river), to the east of which was the country of Karallu (Kuliar). From the Latashe fortress (Darveshan?), in Allabria country, the army of Sargon II reached Parsuash (Parsha), then moved north to the Sirdakka-Zirdiakku fortress (Sardako), in the Missi (Musi) region, and marched, passing about 160-170 km between Bukan and Sakkiz, then along the Jaghatu river basin, reached the Panzish fortress (Parshikand), located 30 km north-east of Miandoab. Capturing Parda (Arpad), the capital of Zikirtu, Sargon reached the basin of the river Shor, tributary of the river Karangu, turned to the west and moved to Aukane (Argun), raiding the settlements of Ishtaippu (Ishlakand), Saktatush (Chaktir), Nenzu (Nazar Karez?), Gurrusupu (Dorsu?), Kabani (Chebani), Barunakku (Ablakh?), Ubabaru (Baba Kur Kur), Siteru (Zulgadar?), Tashtami (Tastabar), Tesammiu (Suma).

Entering the Uishdish, near the south-western slope of the mount of Sohend (Uaush) the army of Sargon II defeated the allied army of Rusa I, and then moved north, entered the Urartian regions of Subi, Zaranda (Sahand) and Bari (region of the Sangibutu (hist. Gabityan) in the basin of the Barush river), passing the route Ushkaia (Osku), near mount Millau (Milan)-Zaranda (Sahand)-Aniashtania (Anarjan or Asinjan)-Bari (Bare)-Tarui (Toykaun)-Tarmakisu (Tabriz): the last two fortresses were in the Dalaia region-in the Talheh Rud basin. In Sangibutu, the route continued through the settlements of Sardurihurda (Sardarud)-Ulhu (Akhulu)-Shashzissa (Siz)-Hundurna (Kundur)-Vadnaunza (Vanza)-Arazu (Ersi)-Shadishṣinia (Zanjhira)-Eliadinia (Valdian)-Kinishtania (Keniani) lying at the eastern and northern foothills of Meshou Dag (Arṣabia), and reached the mount Irtia (hist. Tagryan). Further, in the Armariali region (hist. Great Aghbak and Arna), the invasion took place along the route Bubuzi (Bobarzan)-Ḫundur (Hodar)-Riar (Ravian)-Aiale (Aleri)- Ṣinishpala (Kani Spi)-Sharni (Soradir)-Arna (hist. Arna)-the temple of the God Ḫaldi (on the site of the monastery St. Barthelemy)-Arbu (hist. Arebanos). Then the army moved through the territory of Aiadu (Aiduni, Hayots Dzor), along the route Anzalia (Arindi?)-Uizuku (Bashad Dag)-Kuaiain (Kanguar)-Kallania (Koran/Gyorandasht), entered Gevash (hist. Rshtunik), captured the coastal the settlements of Aiadu from Arṣidu (mount Artos) to Maḫunnia (Mokhraberd), including the fortresses of Kallania (Gyorandasht) and Argishtiuna (Mokhraberd), the settlements of Bitaia (Batkants), Aluarza (Akhavants), Kiuna (Kavash), Alli (Ili), Arzugu (Angalur?), Shikkanu (Ishkert), Daiazuna (Dakhamants), Baniu (Bogonis?), Birḫiluza (Virkunis), Dezizu (Degdzis, Teztis), Abaindi (Arberd), Ḫasrana (Snar), Parra (Poghants or Paghghat), Aniastania (Herishat), Balduarza (Bakhavants), Saruardi (Saren), Shummatar (Matmants or Shmshema), Ṣiqarra (Tsrtakar), Old Uaiais (Uishini, hist. Vostan). Sargon's army returned from Mokhraberd and crossed the rivers Alluria, Kallania (Gyorandasht), Innaya and penetrated into the Uaiais region, moved along the route Barzuriani (Bazirawan Dag)-Ualtukuya (Warkuni Dag)-Kutta (Khuta)-Kippa (Kup Dag)-Asapa (Espin), came up the fortress of Uaiais (Waisik), located about 26 km north-east of Julamerk (Hakkari). From here, Sargon moved to Ḫubuškia (Julamerk), sent most of the army to Assyria, and the army consisting of 1,000 soldiers at the estuary of Dezi Derre crossed Great Zab, moved along the route Sheiak (Shakitan)-Ardikshi (Orisha)-Ulaiau (Aleyan)-Alluria (Haruna), and through Shemdinli entered Zerzan (Za(r)zaru), seizing the city of Muṣaṣir (Masiro, Masira). The army returned to Assyria through a gorge that stretched along the line of Chia Dari-Balutia (Andarutta), reached Berokh and Hupa (Hipparna) and descended to Kalhu. In total, the army of Sargon II passed a distance of around

1600 km in 3,5 months. As a result of this campaign the land of Muṣaṣir was captured and attached to Assyria. Another region, the land of Uishdish, was passed to the hands of the Manneans, allies of Assyria. With the restoration of the itinerary of this campaign it becomes possible to draw the limits of the Mannea kingdom and its surrounding lands, including Muṣaṣir and Ḫubuškia, as well as almost the entire southern borders of Urartu.

Резюме

МАРШРУТ ПОХОДА САРГОНА II В 714 Г. ДО Н.Э.

Новые решения столетней дискуссии

Артак С. Саргсян

Ключевые слова - Ассирия, Урарту, Манна, Наири-Хубушкия, Мусасир, озеро Урмия, озеро Ван, ассиро-урартский конфликт, Саргон II, 8-ой поход, клинописные источники, топонимы, идентификация, локализация, маршрут, историческая география.

В статье анализируется маршрут ассирийской армии Саргона II, царя Ассирии (721-705 гг. до н.э.), во время его похода на Манну и Урарту в 714 г. до н.э. Исследование основано на сравнительном анализе клинописных источников, а также сравнении клинописных топонимов с современными и историческими названиями различных регионов и населённых пунктов.

Как показывает изучение этих источников, ассирийская армия пересекла реку Б. Заб примерно в 70 км к северо-востоку от Калху (Нимруд), и после 3-дневного пути и преодоления около 120 км вдоль р. Ровандуз, перевалов Куллар (Каолан-Бин И Сар (Бунаис)) и Говра Шинки-пересекла также реку М. Заб. Достигнув Герде Сура и Суфиана (Сумби/Сунби), границы Манны и Урарту, армия двинулась на восток, перешла горы Никиппа (Бахрам Бога) и Упа (Баи Даг), реку Буйя, текущую из Баи Дага, и достигла Симиррии (Чемелиян), вступила в Урарту. На юге озера Урмия армия перешла путь Бируатти (Пиртандур)-Синабир (Ширинева)-Ахшуру (Шахурканд)-Раппу (р.Татао) и Аратту (р. Джагату, Вараратн)-Суйа (Шория) и вошла в маннейский район Сурикаш, расположенный к юго-востоку от Миандоаба. От крепости Синихини (Шинабад) армия Саргона прошла через страну Аллабриа (в бассейне р.Татао), к востоку от которой находилась страна Караллу (Кулиар). От крепости Латаше (Дарвешан?), в стране Аллабрии, армия Саргона II достигла к Парсуаш (Парша), затем двинулась на север к крепости Сирдакка-Зирдиакку (Сардако), в районе Мисси (Муси). Затем прой-

дя около 160-170 км пути между Буканом и Саккизом и через бассейн р. Джагату армия достигла крепости Панзиш (Паршиканд), расположенной в 30 км к северо-востоку от Миандоаба. Захватив Парду (Арпад), столицу Зикирту, Саргон достиг бассейна р. Шор, притока р. Карангу, повернул на запад и двинулся к Аукане (Аргун), совершая набеги на поселения Иштаиппу (Ишлаканд), Сактатуш (Чактир), Нензу (Назар Карез?) Гуррусупу (Дорсу?), Кабани (Чебани), Барунакку (Аблах?), Убабару (Баба Кур Кур), Ситеру (Зулгадар?), Таштами (Тастабар), Тесаммию (Сума). Вступая в Уишдиш, недалеко от юго-западного склона г. Сохенд (Ууауш), армия Саргона II победила союзную армию Руса I, а затем двинулась на север, вступив в урартские регионы Суби, Заранда (Саханд) и Бари (район Сангибуту (ист. Габитян) в бассейне реки Баруш), пройдя по маршруту Ушкайа (Оску), возле горы Миллау (Милан)-Заранда (Саханд)-Аниаштаниа (Анарджан или Асинджан)-Бари (Баре)-Таруи (Тойкаун)-Тармакису (Табриз): последние две крепости были в регионе Далайа-в бассейне Талех Руд. В Сангибуту маршрут продолжался через поселения Сардурихурда (Сардаруд)-Улху (Ахулу)-Шашзисса (Сиз)-Хундурна (Кундур)-Ваднаунза (Ванза)-Аразу (Эрси)-Шадишциниа (Зенджира)-Элийадиниа (Валдиан)-Кинаштаниа (Кениани), лежащие у восточных и северных подножий Мешоу Дага (Арцабиа), и достиг г. Иртиа (ист. Тагрян). Далее, в регионе Армарийали (ист Б. Агбак и Арна), войско двинулось по маршруту Бубузи (Бобарзан)-Хундур (Ходар)-Рийар (Равян)-Айале (Алери)-Цинишпала (Кани Спи)-Шарни (Сорадир)-Арна (ист. Арна)-храм бога Халди (на месте монастыря Св. Варфоломея)-Арбу (ист. Аребанос). Затем армия двинулась через территорию Айаду (Аидуни, Хайоц дзор), по маршруту Анзалиа (Аринди?)-Уизуку (Башад даг)-Куайаин (Кангуар)-Калланиа (Коран/Гёрандашт), вошла в Геваш (ист. Рштуник), захватила прибережные поселения Айаду, от Арциду (г. Артос) до Махунниа (Мохраберд), включая крепости Калланиа (Гёрандашт) и Аргиштиуна (Мохраберд), поселения Битая (Батканц), Алуарза (Ахаванц), Киуна (Каваш), Алли (Или), Арзугу (Ангалур?), Шиккану (Ишкерт), Дайазуна (Дахамантц), Баниу (Богонис?), Бирхилуза (Виркунис), Дезизу (Дегдзис, Тезтис), Абаинди (Арберд), Хасрана (Снар), Парра (Поганц или Паггат), Аниаштаниа (Херишат), Балдуарза (Бахаванц), Саруарди (Сарен), Шумматар (Матманц или Шмшема), Цикарра (Цртакар), Старый Уайаис (Уишини, ист. Востан). Армия Саргона вернулась из Мохраберда и пересекла реки Аллуриа, Калланиа (Гёрандашт), Иннайа и проникла в регион Уайаис, двинулась по маршруту Барзуриани (Базираван Даг)-Уалтукуйа (Варкуни Даг)-Кутта (Хута)-Киппа (Кип Даг)-Асапа (Эспин), подошла к крепости Уайаис (Уаисик), расположенной на росстоянии около 26 км к северо-востоку от Джуламерка (Хаккари). Отсюда Саргон двинулся в Хубушкию (Джуламерк), отправил большую часть армии в Ассирию, а войско

из 1000 солдат в устье р. Дези Дерре перешло Б. Заб, двинулась по маршруту Шейак (Шакитан)-Ардикши (Ориша)-Улайау (Алеян)-Аллуриа (Харуна), и через Шемдинли вошло в Зерзан (За(р)зару), захватив город Мусасир (Масиро, Масира). Армия вернулась в Ассирию через ущелье, протянувшееся по линии Чиа Дари-Балутиа (Андарутта), достигла до Бероха и Хупы (Хиппарна) и спустилась в Кал-ху. В общей сложности армия Саргона II за 3,5 месяца прошла расстояние в 1600 км. В результате этой кампании страна Мусасир была захвачена и присоединена к Ассирии. Другой регион, страна Уишдиш, перешла в руки маннейцев, союзников Ассирии. Восстановив маршрут этой кампании, стало возможным очертить границы Манейского царства и прилегающих стран, включая Мусасир и Хубушкиа, а также почти всю южную границу Урарту.

REFERENCES

1. **Adontsʻ N.**, Hayastani patmutʻyun, Er., "Hayastan" hrat., 1972, (frans.` 1946) **(In Armenian)**.
2. **Aliev I. G.**, Istorija Midii, Баku, izd. AN Azer. SSR̦, 1960 **(In Russian)**.
3. **Anania Shirakatsʻi**, Matenagrutʻyun, "Ashkharhatsʻuyts", Er., "Sovetakan grogh" hrat., 1979 **(In Armenian)**.
4. **Arutjunjan N.**, Biajnili (Urartu), Jer., izd. AN Arm. SSR̦, 1970 **(In Russian)**.
5. **Arutjunjan N.**, Toponimika Urartu, Jer., izd. AN Arm. SSR̦, 1985 **(In Russian)**.
6. **Badalyan G.**, Arevmtyan Hayastani patmazhoghovrdagrakan nkaragirĕ Metsʻ egheṛni nakhōrein, "Vēm", Er., 2015, N 3 (51), p. I-XXXV **(In Armenian).**
7. **Diakonov I. M.**, Assiro-vavilonskie istochniki po istorii Urartu, "Vestnik drevnej istorii", 1951, N 2-3 **(In Russian)**.
8. **Diakonov I. M.**, Istorija Midii, Moskva-Leningrad, izd. AN SSSR̦, 1956 **(In Russian)**.
9. **Eremyan S.**, Hayastanĕ ĕst "Ashkharhatsʻuytsʻi", Er., HSSR̦ GA hrat., 1963 **(In Armenian).**
10. **Eremyan S.**, Haykakan arajin petakan kazmavorumnerĕ, "Patmabanasirakan handes", 1968, N 3, ej 91-120 **(In Armenian)**.
11. **Grantovskij E. A.,** Rannjaja istorija iranskix plemjon Perednej Azii, Izdanie vtoroe, M., izd. Vostochnoj lit., 2007 **(In Russian).**
12. **Grekyan E.**, Biainili-Urartu. Petutʻyun ev hasarakutʻyun (patmahnagitakan hetazotutʻyun), Doktorakan atenakhosutʻyun, Er., 2016 **(In Armenian).**
13. **Grekyan E.**, Mannayi tʻagavorutʻyan varchʻakʻaghakʻakan miavorneri ev drantsʻ teghadrutʻyan shurj, "Merdzavor ev Mijin Arevelkʻi erkrner ev zhoghovurdner", XIX, Er., HH GAA Arevelagit. inst., 2000, ej 153-172 **(In Armenian)**.
14. **Grekyan E.**, Urartu ev Manna (Merdzurmyan avazanum urartakan tirapetutʻyan hastatman shurj), Arevelkʻ (hodvatsʻneri zhoghovatsʻu), Er., HH GAA "Gitutʻyun" hrat., 2001, ej 5-19 **(In Armenian)**.
15. "Hayastani ev harakitsʻ shrjanneri teghanunneri bararan", hat. 1, Er., Er. hamalsarani hrat., 1986 **(In Armenian).**
16. **Hakobyan A.**, Sargon B-i arshavankʻn Urartu ev hin Hayastani patmakan ashkhʻarhagrutʻyunĕ, "Vēm", Er., 2014, N 1 (45), ej 39-61 **(In Armenian)**.

17. **Harut‘yunyan B.,** Mets Hayk‘i Vaspurakan ashkharhě ěst “Ashkharhats‘uyts‘i”, “Banber Erevani hamalsarani”, 1983, N 3 (51), ej 110-139 **(In Armenian).**
18. **Harut‘yunyan B.,** Mets Hayk‘i Parskahayk‘ ashkharhn ěst “Ashkharhats‘uyts‘i”, “Patmabanasirakan handes”, 1989, N 2, ej 26-39 **(In Armenian)**.
19. Hay zhoghovrdi patmut‘yan k‘restomatia, hat. I, Er., Er. hamalsarani hrat., 1981 **(In Armenian).**
20. “Haykakan sovetakan hanragitaran”, hat. 11, Er., “Hay sovetakan hanragitaran” hrat., 1985 **(In Armenian)**.
21. **Katvalyan M.**, Urartu (Araratyan t‘agavorut‘yun), Haykakan Sovetakan hanragitaran, hat. 13, Er., “Hay sovetakan hanragitaran” hrat., 1987 **(In Armenian)**.
22. **Manandjan Ja.**, O nekotoryx problemax istorii i geografii drevnej Armenii, Jer., Ajpetrat., 1956 **(In Russian)**.
23. **Medvedskaja I. N.**, Drevnij Iran nakanune imperij (IX-VI vv. do n.e.): Istorija Midijskogo carstva (Avtoref. diss. na soisk. uch. step. DIN), St-P., 2007 **(In Russian)**.
24. **Medvedskaja I. N.**, K utochneniju marshruta Sargona v 714 g. do n.e., “Vestnik drevnej istorii”, 1989, N 2, ej 100-117 **(In Russian)**.
25. **Melikishvili G. A.**, Drevnevostochnyje materialy po istorii narodov Zakavkazja. Nairi-Urartu, t. 1, Tbilisi, AN Gruz. SSR̥, 1954 **(In Russian)**.
26. **Melikishvili G. A.**, K voprosu o drevnejshem ochage urartskix plemjon, “Vestnik drevnej istorii”, 1947, N 4, ej 21-29 **(In Russian)**.
27. **Melikishvili G. A.**, Urartovedcheskie zametki, “Vestnik drevnej istorii”, 1951, N 3, ej 174-181 **(In Russian)**.
28. **Melikishvili G. A.**, Urartskie klinoobraznye nadpisi, M., izd. AN SSSR̥, 1960 **(In Russian)**.
29. **Melikishvili G. A.**, Urartskie klinoobraznye nadpisi, II. Otkrytija I publikacii 1954-1970 gg., “Vestnik drevnej istorii”, 1977, N 3 (117), N 4 (118) **(In Russian)**.
30. **Movses Khorenats‘i**, Patmut‘yun hayots‘, Er., “Hayastan” hrat., 1968 **(In Armenian)**.
31. **Piotrovskij B. B.**, Vanskoe carstvo (Urartu), M., izd. Vostochnoj lit., 1959 **(In Russian)**.
32. **Sargsyan A.**, Ardini-Musasiri teghoroshman shurj, “Merdzavor ev Mijin Arevelk‘i erkrner ev zhoghovurdner”, XIX, Er., 2000, ej 140-152 **(In Armenian).**
33. **Sargsyan A.**, Asorestani ark‘a T‘ukult‘i-Ninurta I-i arshavank‘i ert‘ughin Kuti, Shubari ev Nairi, “Vēm”, Er., 2019, N 2, ej 232-251 **(In Armenian)**.
34. **Sargsyan A.**, T‘iglat‘palasar I-i m.t‘.a. 1112 t‘vakani nairyan arshavank‘i ert‘ughin, “Patmabanasirakan handes”, 2002, N 3, ej 215-224 **(In Armenian)**.
35. **T‘ovma Artsruni ev Ananun**, Patmut‘yun Artsrunya**ts‘** tan, Er., “Sovetakan grogh” hrat., 1978 **(In Armenian).**